Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱԴԵՐՈՎ
Վարչական իրավունքի, գործընթացների և տարածքային
քաղաքացիական հասարակության ինստիտուտի
միջազգային հարաբերությունների ամբիոն

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԿԱՆԽՈՒՄԸ



ԵՐԵՎԱՆ - 2019

ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ

Ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության մոնիտորինգի միջազգային ինստիտուտի երևանյան մասնաճյուղ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԿԱՆԽՈՒՄԸ

ԵՐԵՎԱՆ
ՀԱՅՐԱՊԵՏ
2019

ՀՏԴ 321.7:316.48
ԳՄԴ 66.3+60.56
Դ 536

Դ 536 Ժողովրդավարություն և հասարակության մեջ կոնֆլիկտների կանխումը /Հեղինակային խումբ: – Եր.: Հայրապետ հրատ., 2019 – 208 էջ:

Մարդկային քաղաքակրթության մշտական ուղեկիցներն են հասարակական հակասությունները և դրանց հողի վրա աճող կոնֆլիկտները (բախումները): Արդի աշխարհին բնութագրական են այդպիսի տարրաբնույթ ու բազմազան հակասություններ ու բախումներ, ինչպես ներպետական, այնպես էլ համաշխարհային, միջպետական մակարդակներում:

Ներկայումս արդիական է ժողովրդավարության պայմաններում հասարակական տարրաբնույթ կոնֆլիկտների, հատկապես քաղաքական-իրավական, սահմանադրական, կանխման, լուծման, հաղթահարման ճկուն ու որաշակի կառուցակարգեր մշակումը և կիրառումը: Այդ կառուցակարգերում հատկապես էական դերակատարություն ունեն ժողովրդաիշխանության ձևերը և ընդհանրապես ժողովրդավարության ու մարդու իրավունքների ինստիտուտցիոնալ երաշխիքները:

Սույն հետազոտության շրջանակներում փորձ է կատարվել վեր հանել վերը նշված խնդիրները և նրկայացնել դրանց լուծմանն ուղղված որոշ առաջարկներ:

Աշխատանքը կարող է հետաքրքիր լինել իրավագիտության և քաղաքագիտության ֆակուլտետների ուսանողների, դասախոսների, քաղաքագետների, ինչպես նաև բոլոր նրանց համար, ովքեր զբաղվում կամ հետաքրքրված են վերը նշված խնդիրներով:

ՀՏԴ 321.7:316.48
ԳՄԴ 66.3+60.56

ISBN 978-9939-838-90-8 © ԱՊՀ ՄԽՎ քարտուղարություն, 2019

Աշխատանքային խմբի ղեկավար՝ ԱՊՀ ՄԽՎ ԺՀՄՄԻ երևանյան մասնաճյուղի տնօրեն, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Վ. Ավետիսյան**

Հեղինակներ՝ ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Ա.Գ. Վաղարշյան**, (գլուխներ 1, 2, 3, 4)

ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավ. գիտ թեկնածու, դոցենտ **Վ.Ն. Այվազյան**, (գլուխ 5)

Խմբագիր՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ **Կ.Ա. Գևորգյան**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բոլոր ժամանակներում մարդկային քաղաքակրթության մշտական ուղեկիցներն են հասարակական հակասությունները և դրանց հողի վրա աճող կոնֆլիկտները (բախումները): Արդի աշխարհին բնութագրական են այդպիսի տարրաբնույթ ու բազմազան հակասություններ ու բախումներ, ինչպես ներպետական, այնպես էլ համաշխարհային, միջպետական մակարդակներում: Ամբողջատիրական, ինքնակալական, դիկտատորական պետաիրավական կառավարման ռեժիմները կոնֆլիկտների հիմնական մասը, այսպես ասած, «լռեցնում», «սառեցնում» են: Ժողովրդավարական պետաիրավական համակարգերը դրանք կառավարում կամ լուծում են: Ժողովրդավարական ուղին բռնած և կայացող ժողովրդավարական կառավարման վարչաձևում տեղի է ունենում կոնֆլիկտների հորդառատ ծավալում: Ձևավորվում է խափուսիկ տպավորություն, որ ժողովրդավարությունը ծնում է հակասություններ ու կոնֆլիկտներ: Ժողովրդավարությունը չի ծնում կոնֆլիկտներ, այլ միայն ազատականացնում է դրանց ծավալման գործընթացը: Հետևաբար ժողովրդավարության կառուցակարգը պետք է ներառի նաև հասարակական տարրաբնույթ կոնֆլիկտների, հատկապես քաղաքական-իրավական, սահմանադրական, կանխման, լուծման, հաղթահարման ճկուն ու որաշակի կառուցակարգեր: Այդ կառուցակարգերում հատկապես էական դերակատարություն ունեն ժողովրդաիշխանության ձևերը և ընդհանրապես ժողովրդավարության ու մարդու իրավունքների ինստիտուտցիոնալ երաշխիքները:

Առանց դրանց, այսինքն՝ ժողովրդավարական հասարակության մեջ կոնֆլիկտների լուծման արդյունավետ, ճկուն ի-

րավական ընթացակարգերի ժողովրդավարությունը կվերածվի քաոսի, ամենաթողության, առաջ կբերի հասարակական հիասթափություն: Հետևաբար ժողովրդաիշխանության հաստատման հետ միասին, իրավական համակարգը պետք է ունենա տարրատեսակ կոնֆլիկտների կանխման, լուծման, հաղթահարման ընթացակարգեր: Այս կարևոր օրինաչափությունը նկատի ունենալով պետք է, այդուհանդերձ հաշվի առնել նաև մեկ այլ օրինաչափություն: Ժողովրդավարության ինստիտուտցիոնալ իրավական համակարգը կարող է կատարել իր առջև դրված կոնֆլիկտների կանխման, հաղթահարման և լուծման գործառույթը, եթե հասարակական գիտակցությունը, քաղաքական-իրավական մշակույթն ունեն այնպիսի որակներ, ինչպիսին է հանդուրժողականությունը և կառուցողականությունը: Ժողովրդավարությունը ոչ բոլոր դեպքերում է, որ վերացնում է հասարակական-քաղաքական կամ այլ կոնֆլիկտների հիմքում ընկած հակասությունները: Հակասությունները կոնֆլիկտի կողմերի միջև շատ դեպքերում օբյեկտիվ են և դրանք մնում են: Ժողովրդավարությունը հակասող շահերով կոնֆլիկտի կողմերին իրավական ինստիտուտների կենսագործման ընթացակարգերի միջոցով բերում է հաշտեցման, փոխզիջման: Իսկ եթե կոնֆլիկտի կողմերի գիտակցությունն ու վարքագծային մշակույթն աչքի չեն ընկնում ժողովրդավարական հանդուրժողականությամբ, ապա ոչ մի ինստիտուտ չի կարող լուծել, կանխել, հաղթահարել կոնֆլիկտը:

Անհանդուրժողական ու անզիջում կողմերի միջև փոխզիջումը և հաշտեցումը կամ շատ դժվար է կամ անհնարին: Այս հանգմանքը նկատի ունեալով, սույն աշխատության մեջ բաց

հասարակական քաղաքական կոնֆլիկտների լուծման ինստիտուտցիոնալ ձևերի կարևորության ու դերակատարության շեշտադրումից, հեղինակները փորձել են ցույց տալ նաև հանդուրժողականության մշակույթի դերն ու կարևորությունը հասարակական համերաշխության հասնելու գործում, մատնանշել այն ուղիները, որոնցով կարելի է «պատերազմի ու բախումների» մշակույթից անցնել «հանդուրժողականության ու փոխզիջումների մշակույթի»: Ժողովրդական իմաստուն ասացվածքն ասում է. «Անհնարին է հաշտեցնել կռվարար ու անհաշտ մարդկանց»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ԳԼՈՒԽ 1. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ 10

§ 1. «Ժողովրդավարություն» հասկացության 10

բազմիմաստությունը 10

§ 2. Ժողովրդավարությունը որպես արժեք և նշանակությունը (գործառույթները) 17

§ 3. Կոնֆլիկտների կանխումը և լուծումը (հաղթահարումը) որպես ժողովրդավարական սահմանադրության գործառույթ 20

§ 4. Ժողովրդավարության սկզբունքները հասարակական կոնֆլիկտների համատեքստում 22

ԳԼՈՒԽ 2. ԺՈՂՈՎՐԴԱՀԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԻՋՈՑ 30

§ 1. Ժողովրդահիշխանության սկզբունքի հասկացությունը և գաղափարական նշանակությունը հասարակական կոնֆլիկտների կանխման գործում 30

§ 2. Ժողովրդահիշխանության իրականացման ձևերը, դրանց շրջանակի և կոնֆլիկտների միջև կապը 32

§ 3. Անմիջական ժողովրդահիշխանության ձևերի ամրագրման ու կիրառման պրակտիկան արևմտյան ազատական հասարակություններում 35

§ 4. Անմիջական ժողովրդահիշխանության ձևերի բազմազանությունը որպես հասարակական կոնֆլիկտների կանխման ու լուծման երաշխիք 37

ԳԼՈՒԽ 3. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ

ԿԱՆԽՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ 42

§ 1. Ժողովրդավարության տարօրինակությունները և դրանց արմատները 42

§ 2. Ժողովրդավարական հանրային քաղաքականությունը և դրա իրականացման համակարգը 47

§ 3. Ժողովրդավարական քաղաքական-իրավական մշակույթի դերը քաղաքական համակարգի գործողության կառուցակարգում 51

§ 4. Ժողովրդավարական քաղաքացիական դիրքորոշման բնութագրերը 54

§ 5. Մասնակցությունն ու հանդուժողականությունը որպես ժողովրդվարության տեսակ 57

ԳԼՈՒԽ 4. ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱՂԱԴՐԱՏԱՐ 62

§ 1. Անհանդուրժողական մշակույթից դեպի կառուցողականության ու հանդուրժողականության մշակույթ 62

§ 2. Հանդուրժողականության հայեցակարգի միջազգային իրավական հիմքերը 68

§ 3. «Հանդուրժողականություն» և «անհանդուրժողականություն» հասկացությունները 73

§ 4. Անհադուժողականության դրսևորումները և հետևանքները 81

§ 5. Անհանդուրժողականության հաղթահարման և դրա դեմ պայքարի միջոցները 88

§ 6. Անհանդուրժողականության ցուցանիշները հասարակական կյանքում 92

§ 7. Ժողովրդավարության ու հանդուրժողականության խորհուրդներ 96
ԳԼՈՒԽ 5. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ 100
§1. Ժողովրդավարության ֆենոմենոլոգիայի հայեցակարգային հիմքերը.....100
§ 2. Ժողովրդավարական հասարակության պետական կառույցի իրավական ամրագրման սկզբունքները 165
§ 3. Հակամարտությունների պրակտիկ դրսևորումները ժողովրդավարական հասարակության մեջ 182
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 204
CONCLUSION..... 206

ԳԼՈՒԽ 1. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ

§ 1. «Ժողովրդավարություն» հասկացության բազմիմաստությունը

«Ժողովրդավարություն» հասկացությունը շատ ընդգրկուն և բազմիմաստ է: «Դեմոկրատիա» բառը, որի հայերեն համարժեքն է «ժողովրդավարությունը», ձևավորվել է Հին Հունաստանում: Թարգամանաբար նշանակում է ժողովրդավարություն կամ ժողովրդի իշխանություն:

Գոյություն չունեն համընդհանուր ճանաչում գտած պատկերացումներ, որոնց հիման վրա հնարավոր կլիներ բնորոշել «ժողովրդավարություն» հասկացությունը Տարբեր մոտեցումներ շեշտադրում են ժողովրդավարության առանձին կողմերը և բաղադրատարրերը, օրինակ՝ մեծամասնության իշխանությունը, ընտրությունները, իշխանության սահմանափակումը, պետության իրավականությունը և սոցիալականությունը, գաղափարների, կարծիքների բազմազանությունը և մրցակցությունը, մարդու իրավունքները: Ուստի ժողովրդավարությունը քաղաքական իրավական գրականության մեջ մեկնաբանվում է մի քանի իմաստներով: Սակայն մինչ այդ իմաստներին անդրադառնալը փորձենք տալ «ժողովրդավարություն» հասկացության բնորոշումը:

Քաղաքական իրավական գրականության ամփոփումը հնարավորություն է տալիս ժողովրդավարությունը բնորոշել որպես **ժողովրդի իշխանության քաղաքական կազմակեր-**

պություն, որն ապահովում է քաղաքացիների հավասար մասնակցությունը պետական և հասարակական գործերի կառավարմանը, պետության հիմնական մարմինների ընտրովիությունը և հասարակության քաղաքական համակարգի բոլոր սուբյեկտների գործողության օրինականությունը, մարդու և քաղաքացու, փոքրամասնությունների իրավունքների կենսագործումը, պահպանությունը և պաշտպանությունը՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

1. Ժողովրդավարությունը պետության ձև է: Այս իմաստը մշակվել է դեռևս Հին Հունաստանում, որտեղ ժողովրդավարությունը հասկացվում էր որպես պետության հատուկ ձև, որի դեպքում իշխանությամբ օժտված էր ոչ թե մեկ անձը (միապետը, բռնապետը) կամ անձանց խումբը (արիստոկրատիան, օլիգարխիան), այլ պետության կառավարմանը մասնակցելու հավասար իրավունք ունեցող բոլոր քաղաքացիները: Օբյեկտիվորեն ժողովուրդը չի կարող ինքն իրականացնել իրեն պատկանող ողջ իշխանությունը և իր լիազորությունների մի մասը պատվիրակում է պետական մարմիններին: Հետևաբար «ժողովրդավարությունն ունի պետական բնույթ» արտահայտությունն նշանակում է, որ ժողովուրդն իր իշխանությունը մասամբ փոխանցում է պետությանը, սակայն շարունակում է մասնակցել հասարակության և պետության գործերի կառավարմանը, ինչպես անմիջականորեն (ինքնակառավարում), այնպես էլ ներկայացուցչական մարմինների միջոցով: Ուստի ժողովրդավարական հասարակության մեջ ժողովրդավարության հիմնասյուներից է ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետությունը:

2. Ժողովրդավարությունը հասարակական համակարգ, հասարակության տիպ է: Ժողովրդավարության այդ իմաստը շատ լայն է և ենթադրում է հասարակություն, որը կառուցված է ինքնավար և ազատ անհատների կենսագործունեության բոլոր ձևերի կամավորության վրա: Այդպիսի հասարակությունը անվանում են քաղաքացիական հասարակություն:

Հասարակությունը անցել է զարգացման բարդ և հակասական ճանապարհ, որի ընթացքում այն ձեռք բերելով քաղաքակիրթ, ժողովրդավարական որակներ, դառնալով ինքնակառավարվող ամբողջական համակարգ, կարողանալով իրավական և ժողովրդավարական դարձնել նաև պետությանը, և վերածվել քաղաքացիական հասարակության:

Քաղաքացիական հասարակությունն իրավական, ազատական-ժողովրդավարական, ինքնակառավարվող պլյուրալիստական, բաց հասարակություն է՝ կազմված ազատ անհատներից, որոնք իրականացնում են իրենց շահերը բոլորի համար հավասար և ընդհանուր օրենքի շրջանակներում:

Քաղաքացիական հասարակությունն աչքի է ընկնում իր մի շարք հատկանիշներով, որոնցով և այն տարբերվում է ոչ քաղաքացիական հասարակությունից:

Ազատ մարդը քաղաքացիական հասարակության բարձրագույն արժեքն է: Այդ հասարակությունում անհատի ազատությունը երաշխավորված է և՛ տնտեսական, և՛ քաղաքական, և՛ անձնական առումներով: **Տնտեսական** առումով

քաղաքացիական հասարակությունում անձն ունի սեփականության իրավունք: Նա ազատ է սեփականության ձևի, աշխատանքի ընտրության հարցում: **Քաղաքական** առումով անհատի ազատությունը ենթադրում է նրա իրավունքը՝ լինելու որևէ հասարակական կազմակերպության անդամ, ունենալու սեփական կարծիքը պետական իշխանության համակարգի գործունեության վերաբերյալ: **Անձնական** առումով անհատի ազատությունը ենթադրում է նրա ինքնուրույն կենսագործունեությունը:

Քաղաքացիական հասարակությունն ունի ինքնակառավարման ներուժ: Արդյունքում հասարակությունը դառնում է պետությունից անկախ, որոշակիորեն ինքնավար և կարողանում է սահմանափակել պետական իշխանությունը, նվազագույնի հասցնել նրա միջամտությունը հասարակության գործերին: Առանց անկախ, ինքնակարգավորվող, պլյուրարիստական քաղաքացիական հասարակության ժողովրդավարությունը, ազատությունը և հավասարությունը կվերածվեն դատարակ կարգախոսների: Սակայն առանց պետության հուսալի պաշտպանության, վերաբաշխման ու հակամարտությունների լուծման գործառույթների քաղաքացիական հասարակությունը կծնի անազատության և անհավասարության նոր ձևեր:

Պետությունը և քաղաքացիական հասարակությունը միմյանց ժողովրդավարականացման պայմաններ են: Պետական իշխանության ինստիտուտները միջոցներ են, որոնց օգնությամբ կենսագործվում են իրավական օրենքները, հռչակվում և իրականացվում է սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, սանձվում և իրավական շրջանակի մեջ են դրվում հասարակական հակամարտությունները: Պետությունը քաղաքացիական հասարակության գոյության ու գործունեության երաշխավորն է: Մյուս կողմից՝ քաղաքացիական հասարակությունը իր խայտաբղետ կազմակերպություններով վերահսկում է պետությանը և նրա պաշտոնյաներին, զսպում և հակակշռում է պետական իշխանությանը:

Քաղաքացիական հասարակությունը իրավական, ժողովրդավարական հասարակություն է: Այդ հասարակության մեջ մարդը և նրա իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեքներ են: Քաղաքացիական հասարակության մեջ ողջ, այդ թվում՝ իրավական գաղափարախոսության հիմքն այդ արժեքներն են: Այդ հանգամանքն իր հերթին պայմանավորում է քաղաքացիական հասարակությանը բնորոշ պետության էությունը և ձևը: Պետությունն այստեղ իր ձևով իրավական է, իսկ էությամբ՝ քաղաքացիական համերաշխության և ընդհանուր բարեկեցության միջոց:

Քաղաքացիական հասարակությանը բնորոշ է բազմազանությունը՝ պլյուրալիզմը: Օրինակ՝ քաղաքական համակարգում, գործում են տարբեր քաղաքական կուսակցություններ, և դա բնական է: Ինչո՞ւ: Որովհետև հնարավորություն է տալիս արտահայտելու մարդ էակի բազմազան քաղաքական պահանջմունքներն ու շահերը, դիրքորոշումները:

Չնայած քաղաքացիական հասարակության մոդելի սահմանադրական ամրագրմանը՝ այն մեզանում դեռևս լրիվ չի ձևավորվել: Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացումը ռազմավարական խնդիր է, որի համար անհ-

ռաժեշտ է և՛ հասարակության, և՛ պետական իշխանության քրտնաջան, խելամիտ, նպատակամղված գործունեություն: Մյուս կողմից պետք է նկատի ունենալ, որ «Յուրաքանչյուր ազգ ընտրում է ժողովրդավարության իր տեսակը՝ կախված իր պատմության և հանգամանքների զարգացումից, հետևաբար՝ նրանցից յուրաքանչյուրը ժողովրդավարական է յուրովիե: Ժողովրդավարությունը բարիք է միայն այն ժամանակ, երբ այն համապատասխանում է ժողովրդի մշակույթին և հոգեմտակերպին:

3. Ժողովրդավարությունը մարդու և հասարակության աշխարհայացք է: Ժողովրդավարությունը մեկնաբանվում է որպես աշխարհայացք՝ հիմնված ազատության, իրավահավասարության, մարդու իրավունքների արժեքների վրա: Անշուշտ, ժողովրդավարությունը նաև մտածելակերպ է և դրանով պայմանավորված գործելակերպ: Սահմանադրական ժողովրդավարական նորմերը կարող են արդյունավետ գործել, եթե հասարակական գիտակցությունն ունի ժողովրդավարական բնույթ, եթե հասարակությունը և նրա անդամները ժողովրդավարությունն ըմբռնում են որպես արժեք և գործում են դրա ճշմարիտ պահանջներին ու սկզբունքներին համապատասխան: Գյոթեյի խոսքերով ասած «Միայն նա է արժանի երջանկության և ազատության, ով ամեն օր դրանց համար գնում է մարտի»: Եթե երկրում հաստատված բարոյահոգեբանական մթնոլորտը չի խթանում ժողովրդավարություն և քաղաքացիականություն, ուրեմն Սահմանադրությունը դատապարտված է անգործության:

Այսպիսով, ժողովրդավարության ամենատարածված երեք իմաստներից են՝ պետության ձև, հասարակության տիպ (տեսակ), անհատական ու հասարակական աշխարհայացք**:** Ո՞րն է ժողովրդավարության երեք հիմնական իմաստների և կոնֆլիկտների միջև կապը: Առաջին հայացքից կարող է թվալ, թե դրանց միջև չկա որևէ կապ, սակայն դա այդպես չէ: Ժողովրդավարության վերը մատնանշված իմաստներից յուրաքանչյուրը սերտ կապ ունի կոնֆլիկտների կանխման, լուծման ու հաղթահարման գործընթացի հետ, ընդ որում ամեն մեկը հավասարաարժեք դերակատարություն ունի այդ գործընթացում:

Հասարակության կոնֆլիկտայնությունը նվազագույն է, եթե դրա պետաիրավական համակարգը ժողովրդավարական է, եթե պետությունը կայացած սոցիալ-իրավական ու իրականում ժողովրդավարական է, ունի ժողովրդավարական իրավական ընթացակարգեր, որոնցով կարող է լուծել կամ հաղթահարել հասարակական կոնֆլիկտները: Այս նախադրյալն ունակ չէ կատարելու իր առջև դրված խնդիրը, եթե հասարակությունն ինքնին չի հասել քաղաքացիական, իրավական հասարակության մակարդակին, որը ժողովրդավարության ու ժողովրդավարական հասարակության մեջ կոնֆլիկտների հաղթահարման կարևոր երաշխիքն է: Միևնույն ժամանակ այդ հասարակության բջիջը պետք է լինի ժողովրդավարական ճշմարիտ արժեքներին համապատասխանող աշխարհայացք ունեցող անհատ, հակառակ դեպքում ժողովրդավարական իրավական ինստիտուտները չեն կարող իրացնել իրենց ունակությունները և առաքելությունը:

Այսպիսով, ժողովրդավարության բոլոր դրսևորումները՝ որպես պետության ձև, որպես հասարակության տիպ, որպես անհատական ու հասարակական աշխարհայացք պետք է գտնվեն ներդաշնակ համապատասխանության ու հավասարակշռության մեջ: Միայն այդպիսի ներդաշնակության պայմաններում է հնարավոր իրական ժողովրդավարությունը, կոնֆլիկտների կանխումն ու լուծումն օրինական-ժողովրդավարական հիմքերով: Նման ներդաշնակության անհրաժեշտությունը հաստատվում է խորհրդային միության գորբաչովյան ժողովրդավարական վերակառուցման ձախողման փորձով:

§ 2. Ժողովրդավարությունը որպես արժեք և նշանակությունը (գործառույթները)

Ժողովրդավարությունը համամարդկային և առաջադիմական արժեք է: Ժողովրդավարության շատ հիմնախնդիրների, երկընտրանքների լուծումը ոչ թե վերադարձն է հակաժողովրդավարական կառավարմանը, այլ ժողովրդավարության անընդհատ խորացումը, ընդլայնումը, խթանումը: «Ժողովրդավարություն, թե՞ դիկտատուրա» երկընտրանքը պետք է լուծել հօգուտ ժողովրդավարության: Ընտրությունը հիմնված է ոչ թե «ժողովրդավարության առաքինությունների վրա, որոնք կարող են լինել նաև կասկածելի, այլ դիկտատուրայի թերությունների վրա, որոնք կասկածելի չեն»:

Ժողովրդավարությունը նպաստում է առաջադիմությանը և մարդկային զարգացմանը: Պատմությունը վկայում է, որ քաղաքակրթության առաջադիմությունը գնում է ժողովրդավարության զարգացման ճանապարհով: Ժողովրդավարությունն ամեն մի երկրի բարեկեցության և բարգավաճման անհրաժեշտ պայմանն է: Ժողովրդավարությունը երաշխավորում է քաղաքական և քաղաքացիական ազատությունները, ստեղծում է լավագույն պայմաններ տնտեսական և սոցիալական զարգացման համար: Ուստի անհրաժեշտ է ընդլայնել և խորացնել ժողովրդավարությունը:

Ժողովրդավարությունը օգնում է մարդկանց պաշտպանվելու քաղաքական ցնցումներից (հեղափոխություններ, քաոսային իրավիճակներ), տնտեսական աղետներից: Այն, քաղաքացիական հակամարտությունները տեղափոխելով սահմանադրական հարթության վրա, և դրանց տալով փոխզիջումային լուծումներ, կանխում է քաղաքական ցնցումների կորստաբեր հետևանքները, նպաստում է քաղաքական կայունությանը, ինչպես նաև իշխանափոխությանը:

Ժողովրդավարությունը, մասնավորապես ընտրությունները և ազատ մամուլը, քաղաքական գործիչներին դրդում են խթանել մարդկային զարգացումը, քանի որ ցանկացած քաղաքական համակարգում մարդիկ շարունակում են հուսալ այնպիսի քաղաքականություն, որը նրանց կբերի շատ իրավունքներ, տնտեսական բարգավաճում, կապահովի անհատի զարգացումը:

Ժողովրդավարությունը հնարավորություն է տալիս քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջոցով, **հասարակական բանավեճերի ճանապարհով ընտրել անհրաժեշտ զարգացման ճանապարհը,** իսկ իշխանությունների կողմից տարվող քաղաքականության հետ անհամաձայնութ-

յան դեպքում ունենալ երաշխավորված իրավունքներ՝ պահանջելու իրենց զարգացման համար առավել բարենպաստ պայմաններ:

Ժողովրդավարության՝ որպես հասարակական-քաղաքական երևույթի հիմնական արժանիքներից և նշանակություններից կարել է նշել նաև հետևյալները.

ա) Ժողովրդավարության հասարակական նշանակությունն է ծառայել անհատի, հասարակության օգտին և շահերին, թույլ չտալ, որպեսզի պետությունը գերակայի և բռնանա ժողովրդի և մարդկանց վրա.

բ) Ժողովրդավարությունն ունի գործառույթային նշանակություն, այն է՝ գործիք ծառայել մարդու և ժողովրդի ձեռքին՝ հասարակական և պետական գործերը լուծելու համար.

գ) Ժողովրդավարության մարդկային-անհատական նշանակությունն այն է, որ ճանաչում, ամրագրում, պահպանում, ապահովում և պաշտպանում է մարդու իրավունքները:

Այսպիսով՝ ժողովրդավարության վերը բերված գործառույթներից է **կանխել սոցիալ-քաղաքական ցնցումները (հեղափոխություններ, քաոսային իրավիճակներ), տնտեսական աղետները,** քաղաքացիական հասարակության հասարակական հակամարտությունները տեղափոխել սահմանադրական հարթություն, ժողովրդավարության սահմանադրական ինստիտուտների միջոցով դրանց տալ փոխզիջումային լուծումներ, կանխել քաղաքական ցնցումների ու տարատեսակ կոնֆլիկտների, հակամարտությունների կորստաբեր հետևանքները, նպաստել սոցիալ-քաղաքական կայունությանը, ինչպես նաև խաղաղ իշխանափոխությանը:

§ 3. Կոնֆլիկտների կանխումը և լուծումը (հաղթահարումը) որպես ժողովրդավարական սահմանադրության գործառույթ

Քանի որ տարաձայնությունների ու բախումների կանխումը և լուծումը ժողովրդավարության գործառույթ է, ապա այն վերածվում է նաև սահմանադրական կարգավորման գործառույթի, որովհետև դրանց միջև առկա է փոխկապվածություն: Սահմանադրությունը ժողովրդավարության վերը նշված տեսական գործառույթը վերածում է հասարակական մի շարք կոնֆլիկտների կանխման ու լուծման իրավական ինստիտուտների ու ընթացակարգերի: Բախումների լուծման մեթոդները միայն պետական համակարգում նախատեսված ու գործող ընթացակարգերը չեն: Դրա միջոցներից են նաև ժողովրդաիշխանության անմիջական ձևերը, մարդու իրավունքները և այլն: Որքան շատ են սահմանդարությամբ ամրագրված ժողովրդաիշխանության ու դրա կենսագործման կառուցակարգերը, այնքան արդյունավետորեն ժողովրդավարությունը կարողանում է կատարել իր սոցիալական կարևոր նշանակություններից մեկը՝ տարաձայնությունների, բախումների կարգավորումը, լուծումը, վերացումը:

Այստեղ պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ ժողովրդավարության միայն սահմանադրական հռչակումը բավարար չէ: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի կոնֆլիկտների լուծման համակարգային կառուցակարգ: Այսպես՝ 1995 թ. Սահմանադրությունը ժողովրդին համարում էր իշխանության միակ աղբյուր և տեր: Դրա իրականացման

երկու հիմնական ձևերն էին անմիջական ժողովրդաիշխանությունը (Սահմանադրությունը երաշխավորում էր դրա երեք ձև՝ հանրաքվե, ընտրություններ և տեղական ինքնակառավարում) և ժողովրդի իշխանության իրականացումը Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Պատմական փորձը ցույց տվեց, որ ժողովրդի միասնական իշխանության իրականացման երկու ձևերը՝ անմիջականը և հանրային-պետականը՝ սահմանադրական մակարդակում հավասարակշռված և միմյանց հակակշռող չէին: 1995 թ. Սահմանադրության ընդունմամբ հանրաքվեի սահմանադրական կարգավորումը շատ ընդհանուր էր, առանց դրա կարևոր, ժողովրդավարական հիմունքների մանրամասնեցման, ինչը ստեղծեց օրենսդրի կողմից հետադիմական, հակաժողովրդավարական օրենսդրական նորամուծությունների սպառնալիք: Հետագա քաղաքական գործընթացների արդյունքում այդ սպառնալիքը վերածվեց վերածվեց իրականության՝ հանրաքվեի օրենսդրական ամրծատման միջոցով:

ՀՀ 1995 թ. Սահմանադրությամբ ընտրական համակարգի սկզբունքները իրավական, ժողովրդավարական բնույթ ունեին: Դրանք ընթանում էին քաղաքական բազմազանության ու այլընտրանքային պայմաններում: Սակայն սոցոլոգիական մակարդակում տեղի ունեցավ ընտրական հարաբերությունների քաղաքական իրավական նշանակության խեղաթյուրում: Կյանքի կոչվեցին «կեղտոտ ընտրական կառուցակարգերը», ընտրական խաղերն ու կեղծիքները, փուչիկ կուսակցությունները, սոցիալական դեմագոգիան և այլն: Ընտրություններից հետո ամեն անգամ հասարակությունը հայտնվում էր ցնցումային իրավիճակում, որովետև եղած ինստիտուտները և դրանց նկատմամբ վստահության պակասը հնարավորություն չէր տալիս քաղաքական կնֆլիկտ լուելու օրինակ՝ վստահության հանրաքվեի միջոցով, որովհետև այն օրենքով նախատեսված չէր: Օրենքով նախատեսված չէր նաև ժողովրդի կողմից հանրաքվե նախաձեռնելու կարգը: Դրա հետևանքով 2008 թ. ճնշված, լռեցված կոնֆլիկտն այսօր նորից վերսկսվել է և արդիականացել, ինչը տեղի չէր ունենա, եթե այն ժամանակ դա ունենար պատշաճ լուծում:

1990-ական թթ. վերջերի դրությամբ հետխորհրդային հանրապետությունների սահմանադրություններով հանրաքվեի նախաձեռնության սուբյեկտների նման նեղ շրջանակ կար միայն ՀՀ-ում: Թուրքմենիայում հանրաքվեն նշանակում էր նախագահը՝ նաև 250 հազար քաղաքացիների ստորագրությամբ: Վրաստանում դրա նախաձեռնող սուբյեկտ էին նաև 200 հազար ընտրողները: Ընտրողները հանրաքվե նախաձեռնելու իրավուքն ունեին նար Բելոռուսիայում: Մի շարք հանրապետություններում տարածում ուներ նաև ժողովրդական օրենսդրական նախաձեռնությունը:

§ 4. Ժողովրդավարության սկզբունքները հասարակական կոնֆլիկտների համատեքստում

Կոնֆլիկտների կանխման, հաղթահարման և լուծման գործառույթը, լինելով բնութագրական ժողովրդավարությանը, սերտորեն կապված է դրա որպես տեսական կառույցի,

հայեցակարգի բոլոր տարրերի հետ: Այդ գործառույթը բխում է ժողովրդավարության էությունից, հետևաբար ներդրված է դրա բոլոր տեսական տարրերում՝ սոցիալական առաքելության մեջ, ժողովրդավարության սկզբունքներում, ինստիտուցիոնալ ձևերում և այլն: Եթե առանձին-առանձին քննարկենք ժողովրդավարության այդ տարրերը, ապա կնկատենք սերտ կապ դրանցից յուրաքանչյուրի և ժողովորդավարության սոցիալական առաքելության, այդ թվում կոնֆլիկների կանխման գործառույթի միջև: Այս օրինաչափ կապն արտահայտվում է նաև ժողովրադավարության սկզբունքների ու մեզ հետաքրքրող գործառույթի միջև:

Ազատություն և իրավահավասարություն: Ժողովրդավարական հասարակության անդամները ազատ մարդիկ են: Ուստի ժողովրդավարությունը ենթադրում է անհատների իրավունքների ճանաչում, պահպանում, ապահովում, կենսագործում, այսինքն՝ մարդու երաշխավորված անձնական ազատ գոյություն և քաղաքացու քաղաքական ազատություն:

Քաղաքական ազատությունը ենթադրում է հասարակական կարգերի և կառավարման ձևերի ընտրության ազատություն, ժողովրդի իրավունքը՝ որոշել և փոխել սահմանադրական կարգերը, ապահովել մարդու իրավունքների պաշտպանությունը: Ժողովրդավարությունը հենվում է քաղաքացիների քաղաքական իրավահավասարության վրա՝ հասարակության և պետության գործերի կառավարման հարցում, ամենից առաջ ընտրական իրավունքների հավասարությանը: Այդ հավասարությունը հնարավորություն է տալիս ընտրություն կատարել տարբեր քաղաքական ուժերի միջև, այսինքն՝

զարգացման հնարավորությունների միջև:

Ժողովրդավարական հասարակությունում բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև, ունեն հավասար պաշտպանության իրավունք, կատարած իրավախախտման համար կրում են հավասար պատասխանատվություն: Իրավահավասարությունը ենթադրում է. չեն կարող լինել արտոնություններ և սահմանափակումներ ռասայական, մաշկի գույնի, քաղաքական, կրոնական և այլ համոզմունքների, սեռի, էթնիկական և սոցիալական ծագման, գույքային դրության, բնակության վայրի, լեզվական և այլ հատկանիշներով:

Ազատությունն ունենալով առաջնային նշանակություն, առաքելություն, ինքը կարող է ստեղծել հասարակական բախումների պատճառներ: Դրա հիման վրա կարող են ծագել հավասարությունը և անհավասարությունը: Հետևաբար ժողովրդավարությունը միշտ ենթադրում է իրավական, ձևական հավասարություն:

Ազատությունը և իրավահավասարությունը լինելով իրացված հասարակական հարաբերություններում առաջին հերթին հոգեբանական նախադրյալի դեր են կատարում կոնֆլիկտների կանխման գործընթացում: Դրանք բավարարում են անհատներին բնորոշ էգոիստական նկրտումները, նրանց արժանապատվության իրավական հիմքի դեր են կատարում, իսկ արդեն իրական կոնֆլիկտային իրավիճակում ապահովում են դրա մասնակիցների հավասար հնարավորությունները:

Պետության հիմնական մարմինների ընտրովիություն և նրանց մշտական շփում բնակչության հետ: Պետական

իշխանության մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները ձևավորվում են ժողովրդավարական կամահայտնության միջոցով, ինչը ապահովում է նրանց փոփոխելիությունը, վերահսկողությունը, փոխադարձ հսկողությունը, յուրաքանչյուրի հավասար հնարավորությունը՝ իրականացնել իր ընտրական իրավունքները: Ժողովրդավարական հասարակության մեջ նույն մարդիկ չպետք է երկար ժամանակ անընդհատ զբաղեցնեն պաշտոններ իշխանության մարմիններում: Դա առաջ է բերում քաղաքացիների անվստահություն, հանգեցնում է այդ մարմինների լեգիտիմության կորստի, պետական մարմիններից ժողովրդի օտարման և ի վերջո կարող է հանգեցնել բախման, որը լի աղետալի հետևանքներով: Ընտրովի մարմինների ներսում, ինչպես նաև ընտրովի-ներկայացուցչական ու գործադիր մարմինների միջև տարաձայնությունների դեպքում ժողովրդավարական ընթացակարգերը թույլ չեն տալիս դրանց վերածվելու ուղղակի բախումների, այլ նախադրյալներ են ստեղծում փոխզիջումների միջոցով հասնելու համաձայնության: Եթե ներիշխանական ընթացակարգերով այդ փոխզիջումը հնարավոր չի լինում լուծել, ապա ի վերջո կոլիզիայի կամ տարաձայնության լուծման արբիտրի դեր է կատարում ժողովուրդը՝ նոր ընտրությունների միջոցով: Այդպիսի ներուժ ունի, օրինակ՝ խորհրդարանի արձակման և նոր ընտրությունների կազմակերպման ժողովրդավարական ինստիտուտը: Ժողովուրդը տարաձայության առարկայի համատեքստում կազմակերպված քարոզարշավի պայմաններում կատարում է խորհրդարանի նոր կազմի ընտրություն, արդյունքում՝ ձևավորվում է քաղաքական ուժերի նոր դասավորվածությանը

համապատասխանող գործադիր իշխանություն (կառավարություն):

Որոշումների ընդունում մեծամասնության կամքով՝ փոքրամասնության իրավունքների պարտադիր պահպանմամբ: Ժողովրդավարության հիմնարար սկզբունքը ձայների մեծամասնության սկզբունքն է: Մեծամասնությամբ ընդունված որոշումները ժողովրդի կամքի արտահայտությունն են: Դեռ հին աշխարհում գիտեին և կենսագործում էին մեծամասնության սկզբունքը: Նոր ժամանակներում բնական իրավունքի տեսության և իշխանությունների բաժանման պայմաններում հարաբերակցությունը մեծամասնության և փոքրամասնության միջև իրենց իրավունքների հարցում ձեռք բերեց քաղաքական սկզբունքայնություն: Խնդիրն այն է, որ ոչ միշտ է, որ մեծամասնության կանոնն ապահովում էր հասարակական համերաշխություն:

Եթե փորձենք հետևել ժողովրդավարության տեսաբանների պատկերավոր մտքերին, ապա կտեսնենք, որ նրանց մտայնության մեջ նկատվում է որոշակի էվոլուցիա մեծամասնության կանոնի նկատմամբ: Այդ հայեցակարգային էվոլուցիան ուղղված է կանխելու «մեծամասնություն» և «փոքրամասնություն» տարաձայնությունը բախման վերածվելու քաղաքական գործընթացը:

Ժ.-Ժ. Ռուսո. *«Մեծամասնության որոշումները պարտադիր են փոքրամասնության համար»:*

Թ. Ջեֆերսոն. *«Բոլորը պետք է հիշեն սուրբ սկզբունքը. միշտ պետք է գերակայի մեծամասնության կամքը, սակայն այդ կամքը պիտի լինի օրինական, բանական»:*

Ա. Համիլտոն. *«Տվե՛ք ամբողջ իշխանությունը շատերին,*

և նրանք կսկսեն ճնշել քչերին: Տվե՛ք իշխանությունը քչերին, և նրանք կսկսեն ճնշել շատերին»:

Ն. Բերդյաև. *«Համարյա հրեշավոր է, թե ինչպես մարդիկ կարողացան հասնել գիտակցության այնպիսի վիճակի, որ մեծամասնության կարծիքում և կամքում տեսան ճշմարտության և արդարության աղբյուրը և չափանիշը»*:

Ինչպես տեսնում ենք, քաղաքական միտքը աստիճանաբար եկավ համոզման, որ փոքրամասնության ենթարկումը մեծամասնությանը ոչ միշտ է ժողովրդավարական: Իրական ժողովրդավարական հասարակության մեջ մեծամասնության կամքը պետք է զուգակցվի անհատի իրավունքների երաշխիքների հետ, որոնք իրենց հերթին ծառայում են փոքրամասնությունների իրավունքներին՝ էթնիկական, կրոնական կամ քաղաքական: Այսպիսով՝ փոքրամասնության իրավունքները կախված չեն մեծամանսության բարի կամքից և չեն կարող վերացվել ձայների մեծամասնությամբ: Նշանակում է՝ մեծամասնության կամքը պետք է զուգակցվի որոշումներ ընդունելիս փոքրամասնության մեջ մնացած անհատների իրավունքների երաշխիքների հետ՝ բացառելով խտրականությունը, իրավունքների վրա բռնանալը, անհանդուրժողականությունը, որոնք անխուսափելիորեն հանգեցենում են բախումների:

Հրապարակայնություն և թափանցիկություն: Պետությունը, հանրային իշխանության մարմինները, հասարակությունը պետք է գործեն բաց և թափանցիկ: Բնակչությունը պետք է տեղեկացված լինի ներպետական և միջազգային կյանքի դեպքերի մասին, անհրաժեշտության դեպքում կարողանա ստանալ իրեն հետաքրքրող տեղեկությունները: Շատ

կարևոր է հետադարձ կապը, այսինքն՝ պետությունը պետք է ոչ միայն գործի թափանցիկ, այլև կառավարելիս, պետական քաղաքականությունը ձևավորելիս և իրականացնելիս հաշվի առնի հասարակական կարծիքը, տրամադրությունները: Հրապարակայնությունը և թափանցիկությունը կոչված են նախ կանխելու կոնֆլիկտները «հասարակական բամբասանքների» հետևանքով, իսկ առկա կոնֆլիկտում կանխարգելելու դրա հետագա խորացումը, սրումը:

Օրինականություն: Օրինականությունը հասարակական-քաղաքական կյանքի հիմնարար սկզբունքներից է, պահանջ՝ ուղղված ամբողջ հասարակությանը, քաղաքական համակարգի բոլոր սուբյեկտներին և ամենից առաջ՝ բոլոր պետական մարմիններին՝ հիմնադրվել և գործել իրավունքի նորմերի խիստ և անշեղ կատարմամբ: Պետության յուրաքանչյուր մարմին, յուրաքանչյուր պաշտոնատար անձ պետք է ունենա այնքան լիազորություն, որքան անհրաժեշտ է, որպեսզի ստեղծվեն պայմաններ մարդու իրավունքների իրականացման, պահպանության և պաշտպանության համար: Օրինականությունը միջոց է բախումներն աղետների ու քաոսի վերածելու դեմ, արգելք ամենաթողության համար:

Բազմազանություն և մրցակցություն: Ժողովրդավարությունն իրական է, երբ նրա հիմքում ընկած է հասարակական երևույթների բազմազանություն և բազմակարծություն: Դա նախադրյալ է մրցակցության համար: Ժողովրդավարությունը, ինչպես և շուկայական տնտեսությունը, անհնարին է առանց մրցակցության, օրինակ՝ առանց ընդդիմության և բազմակուսակցության:

Ժողովրդավարական հասարակությանը բնորոշ են

տնտեսական, քաղաքական և գաղափարական բազմազանությունը: Տնտեսական բազմազանությունը ենթադրում է սեփականության տարբեր ձևերի առկայություն և դրանց իրավահավասարություն: Քաղաքական բազմազանությունը ենթադրում է քաղաքական կուսակցությունների, այլ հասարակական միավորումների բազմազանություն՝ տարբերվող ծրագրերով: Դա ընդլայնում է քաղաքական ընտրության շրջանակը: Ժողովրդավարական ընտրական սկզբունքները երաշխավորում են քաղաքական բազմակարծությունը: Գաղափարական բազմազանությունը հնարավորություններ է բացում հասարակական հիմնախնդիրների լուծման տարբեր մոտեցումների, մտքի ազատության համար: Բացառվում են պետական գրաքննությունը և գաղափարական թելադրանքը:

Բազմակարծության ընդդիմախոսներն այն կարող են համարել արհեստական, բախումներ առաջացնող: Չէ որ միակարծության պայմաններում բացակայում է տարաձայնությունը և անհմաձայնությունը, որոնք հասարակական բախումների հիմնական պատճառներից են: Սակայն բազմակարծությունն արհեստական կերպով ներմուծված սկզբունք չէ, այլ մարդուն և նրա համակեցությանը բնորոշ օբյեկտիվ կացություն: Այդ օբյեկտիվ կացությունը և տեսակետների ու մոտեցումների տարբերությունները դնելով որոշակի կանոնների շրջանակում ժողովրդավարությունը կանխատեսելի ու կառավարելի է դարձնում բազմակարծությունը և մրցակցությունը: Հակառակ դեպքում դրանք կարող են սրվել ու վերածվել սուր բախման:

ԳԼՈՒԽ 2. ԺՈՂՈՎՐԴԱԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԻՋՈՑ

§ 1. Ժողովրդաիշխանության սկզբունքի հասկացությունը և գաղափարական նշանակությունը հասարակական կոնֆլիկտների կանխման գործում

Ժողովրդաիշխանությունը ժողովրդավարական հասարակության հիմնասյուներից մեկն է: Բայց միաժամանակ ժողովրդաիշխանությունն իր ձևերով հասարակական կոնֆլիկտների լուծման քաղաքակիրթ իրավական ձև է: Նախ ժողովրդաիշխանության ողջ գաղափարախոսությունը կառուցված է ժողովրդի ինքնիշխանության, գերակայության և գլխավոր արբիտրի դերակատարության վրա: Այս դերը գոնե առևրևույթ չեն մերժել նույնիսկ ամենադիկտատորական, ինքնակալական ռեժիմներն ու գաղափարախոսությունները:

Ակնհատ սահմանադրական աքսիոման «Ժողովուրդն է իշխանության միակ աղբյուրը և տերը» բազում քաղաքական կոնֆլիկտներ կանխող նշանակություն ունի, որովհետև ժողովրդի ինքնիշխանությունից բխում է, որ Հայաստանում իշխանության գերագույն կրողը ժողովուրդն է: Այսինքն՝ ժողովուրդը ոչ մեկի հետ չի կիսում իր իշխանությունը, իրականացնում է այն ինքնուրույն, անկախ այլ սոցիալական ուժերից, և օգտագործում է միայն իր սեփական շահերից ելնելով: Ժողովրդական ինքնիշխանությունն անբաժանելի է և ունի միայն մեկ սուբյեկտ՝ ժողովուրդը: Ոչ ոք, բացի ժողովրդից

կամ առանց ժողովրդի համաձայնության, չի կարող հավակնել իշխանության Հայաստանի Հանրապետությունում և չկա իշխանություն, որ չի բխում ժողովրդից:

Ժողովրդաիշխանությունը ողջ իշխանության պատկանելությունն է ժողովրդին, ինչպես նաև ժողովրդի կողմից այդ իշխանության ազատ իրականացումը՝ իր ինքնիշխան կամքին և շահերին լրիվ համապատասխան:

Ժողովրդաիշխանության պայմաններում իշխանության իրականացումը հիմնագրվում է, օրինականացվում (լեգիտիմացվում) է և վերահսկվում է ժողովրդի կողմից, այսինքն՝ պետության քաղաքացիների: Ժողովրդաիշխանությունը հանդես է գալիս ժողովրդի ինքնորոշման և ինքնակառավարման ձևերով, որին հավասար հիմքերով կարող են մասնակցել բոլոր քաղաքացիները:

Պետական իշխանությունն ածանցված է ժողովրդի իշխանությունից: Ժողովրդավարական է պետական կառավարման այն ձևը, որում հաստատված է, կամ որը կառուցվում ու գործում է ժողովրդաիշխանության սկզբունքի հիման վրա: Պետական իշխանությունն ածանցված է ժողովրդի իշխանությունից, պայմանավորված է ժողովրդի կամքով ու պահանջմունքներով: Ժողովրդի կամքով ձևավորված իշխանության համակարգը պետք է լինի թափանցիկ և ժողովրդին հաշվետու: Պետությունը իշխանությունն ստանում է ժողովրդից, իրականացնում է ժողովրդով, հանուն ժողովրդի: Այսպիսով՝ ոչ թե պետությունն է գերիշխում հասարակության (ժողովրդի) վրա, այլ, ընդհակառակը, հասարակությունն է գերիշխում պետության վրա, և պետությունը չպետք է բռնա-

նա ժողովրդի կամքի վրա, հակադրվի նրան: Պետություն ժողովուրդ հարաբերությունների, այդ թվում բախման դեպքում գերակայում է ժողովուրդը:

Ժողովրդի իշխանության զավթումը, նվաճումը, զուգորդումը մրցակցող մարմինների ստեղծմամբ, յուրացումը հանցագործություն է: Իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է անմիջապես, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով: Ժողովրդի իշխանության արտահայտման անմիջական բարձրագույն ձևերն են հանրաքվեն և ընտրությունները: Իշխանության գալու միակ օրինական և հնարավոր ձևը ազատ և արդար ընտրություններն են՝ որպես ժողովրդի կամքի իսկական և միակ դրսևորում: Այլ կերպ իշխանության գալը, նվաճումը կամ յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից համարվում է հանցագործություն: Ժողովուրդն իրավունք ունի ապստամբել կամ ցուցաբերել քաղաքացիական անհնազանդություն բռնատիրական, ոչ օրինական իշխանության դեմ:

§ 2. Ժողովրդաիշխանության իրականացման ձևերը, դրանց շրջանակի և կոնֆլիկտների միջև կապը

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է որոշակի ձևերով: Ժողովրդաիշխանությունն արտահայտվում, իր դերը և նշանակությունը կատարում է որոշակի ձևերի և ինստիտուտների միջոցով, որոնք կազմում են ժողովրդավարության համակարգը: Ժողովուրդը հասարակական և պետական

գործերի լուծմանը մասնակցում է բազմազան ձևերով: Կախված ժողովրդի կամքի արտահայտման ձևից՝ տարբերում են **անմիջական և ներկայացուցչական** ժողովրդաիշխանության ձևերը:

Ժողովուրդն իրեն պատկանող իշխանությունն իրականացնում է անմիջապես ինքը (ուղղակի ժողովրդաիշխանություն)՝ ուղղակիորեն իր կամքն արտահայտելով: Այս դեպքում քաղաքական որոշումներն ընդունում է ինքը՝ ժողովուրդը (քաղաքացիները)՝ ըստ ձայների մեծամասնության: Ժողովուրդը (քաղաքացիները) հասարակական գործերի կառավարումը, որոշումների ընդունումը իրականացնում է նաև իր իսկ կողմից ընտրված և իր առջև պատասխանատու, իրեն ներկայացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով:

Ժողովրդաիշխանության անմիջական ձևը ենթադրում է ժողովրդի ուղղակի կառավարում. ժողովուրդն ուղղակիորեն արտահայտում է իր կամքը պետական կամ հասարակական կյանքի այս կամ այն հարցի վերաբերյալ: Եթե ներկայացուցչական ժողովրդաիշխանության դեպքում որոշումներն ընդունում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ապա ուղղակի ժողովրդաիշխանության ձևերի դեպքում որոշումներն ընդունում է ինքը՝ ժողովուրդը: Ժողովրդի կամքը՝ արտահայտված համապատասխան ձևերով, համարվում է հիմք պետության գործունեության համար: Ժողովրդաիշխանության այս ձևի սուբյեկտները քաղաքացիներն են, որոնք որոշումներն ընդունում են համապատասխան ինստիտուտների միջոցով:

Անմիջական ժողովրդաիշխանության նշանակությունն այն է, որ այն ժողովրդին հնարավորություն է տալիս համապատասխան լծակների միջոցով իր ձեռքում պահել իշխանության ղեկը, ուղղորդել և վերահսկել պետության գործունեությունը: Անմիջական ժողովրդաիշխանությունն իրականացվում է համապատասխան ձևերով, որոնք իրավականորեն ձևակերպված, օրինականացված են: Իրավական ամրագրումը ժողովրդաիշխանության երաշխիք է: Ժողովրդաիշխանության անմիջական ձևերն իրենց հերթին ժողովրդավարության ամենակարևոր երաշխիքներն են, առանց որոնց ժողովրդաիշխանությունը կմնա ուտոպիա:

Սակայն ժողովրդաիշխանության անմիջական ձևերը ունեն նաև հասարակական բախումների, տարաձայնությունների, կոլիզիաների կանխման ու լուծման առաքելություն: Հետևաբար այն հասարակությունը՝ որտեղ առկա են անմիջական ժողովրդաիշխանության ձևերի լայն շրջանակ, այնտեղ հասարակական կոնֆլիկտները որպես կանոն լուծվում են արագ ու արդյունավետ, առանց իրավիճակի սրացումների: Այս համգամանքը նկատի ունենալով ժողովրդավարական սահմանադրությունները պետք է ամրագրեն ժողովրդաիշխանության անմիջական ձևերի օպտիմալ որոշակի շրջանակ, որովհետև սերտ կապ կա այդ շրջանակի և կոնֆլիկտների կանխման աստիճանի միջև:

§ 3. Անմիջական ժողովրդաիշխանության ձևերի ամրագրման ու կիրառման պրակտիկան արևմտյան ազատական հասարակություններում

Ժողովրդաիշխանության անմիջական ի՞նչ ձևեր են իրավաբանորեն ամրագրված և ինչպիսի՞ն է դրանց կիրառման պրակտիկան արևմտյան ազատական ժողովրդավարության երկրներում: Ցանկացած տեսագործնական քաղաքական-իրավական հիմնահարցի վերլուծության օբյեկտիվությունը և բազմակողմանիությունը կախված հիմնահարցի համաշխարհային համատեքստում գնահատականից: Եթե ցանկանում ենք ունենալ ՀՀ-ում անմիջական ժողովրդավարության վիճակի իրական պատկերը, ապա այն պետք է դիտարկել արևմտյան հիմնական երկրներում ժողովրդաիշխանության ձևերի սահմանադրական իրավական ամրագրման ու դրանց կիրառման պետաիրավական պրակտիկայի հետ համեմատության մեջ: Այդ համեմատության արդյունքում ժողովրդաիշխանության համաշխարհային պրակտիկան ճանապարհային քարտեզի դեր պետք է կատարի մեզ համար համապատասխան ձևերի իրավական ընդօրինակում իրականացնելու, դրանք տեղայնացնելու համար:

Սակայն արևմտյան ժողովրդավարությունների փորձը հետաքրքիր է նաև մեկ այլ տեսանկյունից: Մասնավորապես, այս երկրները որպես կանոն աչքի են ընկնում կոնֆլիկտայնության ցածր մակարդակով, հատկապես դրանց լուծման քաղաքակիրթ ընթացքով: Հասարակական բախումները այստեղ որպես կանոն չեն վերածվում երկարատև, սրված գործընացների, այլ ստանում են արագ ու գրեթե վերջնա-

կան, բախումների կողմերին բավարարող լուծումներ: Հարց է առաջանում, արդյոք կա կապ նման միտման ու ժողովրդաիշխանության ձևերի շրջանակի միջև: Պատասխանն ա-ներկբա է՝ կա այդպիսի օրինաչափ կապ:

Արևմտյան ժողովրդավարության համակարգում տարածված են անմիջական ժողովրդաիշխանության սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված բազմաթիվ ձևեր՝ և՛ պետական կառավարման, և՛ տեղական ինքիակառավարման ոլորտներում: Վճռական, որոշիչ նշանակություն ունեցող ժողովրդաիշխանության համապետական ձևերն են՝ **ընտրություններ, պատգամավորի կամ պաշտոնատար անձի ժամկետից շուտ հետ կանչումը, իմպերատիվ հանրաք**վեն: Ժողովրդաիշխանության վճռական նշանակություն ունեցող ձևերից տեղական ինքնակառավարման համակարգում օգտագործվում են **բնակիչների ժողովի որոշումը, ինչպես նաև դրանց քվեարկությունները տարբեր հարցերով**:

Բացի վճռական ձևերից արևմուտքում տարածված են նաև ժողովրդաիշխանության, այսպես կոչված, «մասնակցության ձևերը» կամ խորհրդատվական նշանակություն ունեցող ինստիտուտները: Այդպիսին են համարում **խորհրդատվական հանրաքվեն, ժողովրդական հարցումը, օրենսդրական (իրավաստեղծ) նախաձեռնությունը, համապետական կամ տեղական քննարկումները, բնակիչների ընդհանուր ժողովները, տեղական ինքնակառավարումը, հանրային լսումները խորհրդարանում, մունիցիպալ և այլ այլ մարմիններում, հասարակական խորհուրդները, կոլեկտիվ հանրագրերը, ինչպես նաև զանգվածային հանրահավաքները, երթերը, ցույցերը, պիկետավորումը և այլն**:

Ինչպես տեսնում ենք արևմտյան աշխարհում տարածված են անմիջական ժողովրդաիշխանության բազմազան ձևեր և դրանք լայնորեն կիրառվում են: Օրինակ՝ XX դարում աշխարհում անցկացվել է 450-ից ավելի համազգային հանրաքվե, որի 80 տոկոսից ավելին՝ Եվրոպայում: Շվեյցարիայում 1848 թ.-ից միայն դաշնային մակարդակով անցկացվել է մոտ 240 հանրաքվե: ԱՄՆ-ի նահանգներում 1945-1968 թթ. անցկացվել է 497 հանրաքվե՝ տարաբնույթ հարցերով: XIX դարում աշխարհում տարեկան անցկացվում էր միջինը 1-ից պակաս համազգային հանրաքվե (0,74), ապա XX դարի վերջից համապետական հանրաքվեների թիվը տարեկան կտրվածով կազմում է մոտ 18:

§ 4. Անմիջական ժողովրդաիշխանության ձևերի բազմազանությունը որպես հասարակական կոնֆլիկտների կանխման ու լուծման երաշխիք

Վերը արված վերլուծությունը հաստատում է արդի ժողովրդավարության զարգացման այն օրինաչափությունը, որ գոյություն ունի հստակ կապ ժողովրդաիշխանության անմիջական ձևերի իրացման աստիճանի ու հասարակական կոնֆլիկտների կանխման ու լուծման որակական կողմերի ու մակարդակների միջև:

Կարծում ենք, որ արդի հայաստանյան պետականագիտությունն իշխանության իրականացման հիմնահարցերի հետազոտման գործում որոշակիորեն աչքի է ընկնում միակողմանիությամբ, այն իմաստով, որ ուշադրությունը հիմնակա-

նում սևեռել է հայաստանյան պետական համակարգի ներսում իշխանությունների բաժանման հիմնահարցերի վրա: Պետական իշխանության բաժանման և հավասարակշռման հիմնահարցն, անշուշտ, շատ կարևոր է և անհրաժեշտ ջանքերի արդյունքում միգուցե հնարավոր է ստեղծել իրավական ձևով հավասարակշռված համակարգ, որը սակայն չի կարող լինել կատարյալ:

Ինչքան էլ որ իդեալական լինի պետական իշխանության բաժանման և հավասարակշռման ձևական-իրավական համակարգը, այն չի կարող անխափան գործել հասարակական-քաղաքական միջավայրում, որը կարող է ունենալ իրավիճակների բազում վարացիաներ: Վերջիններս նույնիսկ կարող են անկատար դարձնել արտաքուստ հավասարակշռված և արդյունավետ թվացող համակարգը: Հենց թեկուզ քաղաքական կյանքի կուլիսներում իշխանության թևերի միջև համաձայնությունն՝ իշխանության բաժանման համակարգը կարող է դարձնել ընդամենը շիրմա, արտաքին ձև:

Ո՞րոնք են այս հիմնախնդրի լուծումները: Հնարավոր լուծումներից է պետական իշխանության բաժանման մոդելի անընդհատ փոփոխությունը՝ քաղաքական իրավիճակներից ելնելով: Սակայն նման ճանապարհը զրկում է սահմանադրական կարգավորումը կայունությունից: Սահմանադրական կարգավորման կայունությունը շատ կարևոր ու բարձր արժեք է ի համեմատ իշխանությունների բաժանման քաղաքական մարտավարական վերաձևումների ու հարմարեցումների:

Հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է կատարել

տեսական մոտեցման վերադասավորում, իշխանությունների բաժանման սկզբունքը դիտարկել ոչ միայն պետական իշխանության բաժանման տեսանկյունից, այլ նաև ժողովրդի (քաղաքացիական հասարակության) և պետության միջև իշխանության բաժանման դիրքերից:

Այդպիսի մոտեցումը համակարգային հավասարակշռություն կմտցնի մարդ - հասարակություն - պետություն ենթահամակարգերի փոխհարաբերություններում: Այդպիսի տեսական մոտեցման վրա կառուցված սահմանադրական լուծումները և համապատասխան իրավակարգավորումները ժողովրդավարության ու բախումների կանխման երաշխիք են այն դեպքերում, երբ ինչ-որ քաղաքական իրավիճակում հանկարծ չգործի պետական իշխանության բաժանման համակարգը: Այսպիսի իրավիճակներում ժողովրդավարության ու բախումների կանխման երաշխիքներ են դառնում համաշխարհային պրակտիկայում պատմականորեն ձևավորված ու գոյություն ունեցող անմիջական ժողովրդաիշխանության ձևերը:

Այսպիսով հասարակական կառավարման համակարգում պետական իշխանությանը հակակշռող և հավասարակշռող գլխավոր գործոնն անմիջական ժողովրդաիշխանությունն է: Սակայն այս հարցում արդի սահամանադրական կարգավորումներն աչքի են ընկնում թերություններով: Դրանցից գլխավորն այն է, Հայաստանի երրորդ հանրապետության Սահմանադրության 1-ին երկու խմբագրություններն ամրագրում էին անմիջական ժողովրդաիշխանության միայն

երկու ձև՝ ընտրությունները և հանրաքվեն: Ընդ որում, եթե ընտրությունները պաբերականորեն պարտադիր գործընթաց էին, ապա հանրաքվեն (բացառությամբ սահմանադրականի) իր սահմանադրական-օրենսդրական կարգավորման տեսանկյունից իշխանության քմահաճույքից կախված իրավական ձև էր: Նման պայմաններում այն ժողովրդավարության շատ թույլ երաշխիք էր:

Որպեսզի հասարակություն - պետություն փոխհարաբերությունները լինեն հավասարակշռված և պետությունը հասարակությամբ հակակշռված, հասարակությունը պետք է ունենա հակակշռող և զսպող լիազորություններ: Որպես այդպիսիք պետք է դիտարկվեն ժողովրդաիշխանության անմիջական ձևերը: Այս ձևերին անպայման պետք էր տալ սահմանադրական ամրագրում, որպեսզի դրանց ինստիտուցիոնալ իրավական ներմուծումը կախված չմնա պետական իշխանության քմահաճույքից: Խոսքը գնում է ժողովրդաիշխանության այնպիսի ձևերի մասին, ինչպիսիք են՝ ժողովրդական նախաձեռնությունը, ժողովրդական հարցումը, ժողովրդական քննարկումը, ընտրված ներկայացուցիչներին ետ կանչելը և այլն:

Ճիշտ է 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունն արձանագրեց առաջընթաց այդ հարցում, սակայն համակարգը նորից թերի է և հղի հետադիմական օրենսդրական լուծումներով: Այդպիսի կամայական օրենսդրական լուծումների կանխման միջոց կարող է հանդիսանալ Սահմանադրության հոդված 2-ի 2-րդ մասի հետևյալ նոր, առաջարկվող

ձևակերպումը. «Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, ժողովրդական հանրաքվեների, ժողովրդական նախաձեռնության, հարցումների ու համաժողովրդական քննարկումների, տեղական ինքնակառավարման, ինչպես նաև Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»:

Ընտրված անձանց հետ կանչումը կարելի է նախատեսել որոշակի ընտրովի անձանց սահմանադրական իրավակարգավորումներում:

Նման սահմանադրական կարգավորումը և դրա հիման վրա ստեղծված օրենսդրական կառուցակարգերն ունակ կլինեն ժողովրդին դարձնել իսկապես **սահմանադրորեն ձևավորված և կազմակերպված սուբյեկտ**, որն ունի իրական իշխանություն և դրանով հակակշիռ է պետական իշխանության համար, ունակ է համապատասխան ձևերով լուծելու ոչ միայն հանրային կառավարման հարցերը, այլև հասարակական տարատեսակ կոնֆլիկտները:

ԳԼՈՒԽ 3. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

§ 1. Ժողովրդավարության տարօրինակությունները և դրանց արմատները

Դեռևս անտիկ աշխարհում ժողովրդավարությունը համարում էին «կառավարման վատագույն ձև»: Բնակչության քաղաքական մշակույթի ցածր մակարդակը թույլ էր տալիս կառավարողներին մանիպուլյացիա անել ժողովրդավարությամբ, ինչի հետևանքով այն վերածվում էր ամբոխի իշխանության, իսկ սա էլ իր հերթին ծնում էր բռնապետություն: Արիստոտելը տարբերություն չէր դնում ժողովրդավարության և ամբոխավարության միջև: Այդպիսի գնահատականն ազդեց ժողովրդավարության հետագա ճակատագրի վրա: Ընկալվելով բացասաբար՝ այն դուրս մղվեց քաղաքական առօրյայից:

Արդի աշխարհը համարվում է ժողովրդավարության հաղթարշավի դարաշրջան, որում տեղի է ունենում ժողովրդավարացման երրորդ ալիքը: Սակայն արդ ժողովրդավարությանը ևս հատուկ են թերություններ ու նույնիսկ տարօրինակություններ: Փորձենք անդրադառնալ դրանց և վեր հանել դրանց հիմում ընկած պատճառները:

Ժողովրդավարության որպես իդեալի և իրականության խզվածքը: Ժողովրդավարությունը որպես՝ հասարակա-

կան իդեալ, և ժողովրդավարությունը որպես իրականություն չեն համընկնում: Ժողովրդավարությունը իդեալ է, որին ձգտում են քաղաքակիրթ հասարակությունները և պետությունները: Սակայն կատարյալ, ավարտուն ժողովրդավարություն գոյություն չի ունեցել երբեք: Դրա հիմքում ընկած են մարդկային անհատի հոգեբանական, հոգեմտակերպային առանձնահատկությունները, որոնց ուժով մարդու գործունեությունը ժողովրդավարության տեսանկյունից հակասական է, այսինքն՝ ժամանակակից մարդը միշտ չէ, որ մտածում ու գործում է ժողովրդավարական կերպով:

Ժողովրդավարությունն անշուշտ համամարդկային արժեք է: Սակայն գործնականում չկա ժողովրդավարության վերջնական այնպիսի փուլ, որը կբավարարի բոլորին: Դա պայմանավորված է նաև մարդու սուբյեկտիվ բնույթով, որի ձգտումներն անընդհատ փոփոխվում են՝ արդարության մասին իր պատկերացումներին համապատասխան: Երբ մարդը զգում է սահմանափակումներ, օրենքներում չի գտնում այն արդարությունը, որը իր կողմից դրված է իր գոյության հիմքում, երբ հաշվի չեն առնվում նրա բնական ընդունակություններն ու արժանիքները, երբ բացակայում է ճանաչումը՝ կախված հմտությունից, փորձից և այլն, նա բախման մեջ է մտնում պետության հետ: Այդպիսով՝ արդարության ցանկությունը (իսկ դրա նշանակությունը մեծ է ժողորդավարության համար) երբեք լրիվ չի բավարարվում: Ուստի ժողովրդավարությունը (իրական, ոչ թե ձևական) ոչ մի պետության մեջ չի կարող նվաճվել լրիվ և վերջնականապես:

Ժողովրդավարությանը հատուկ են ձևականություններ

և թերություններ: Ժողովրդավարության կենսագործման ճանապարհին առաջանում են բազում հիմնախնդիրներ, ձևականություններ, թերություններ: Ժողովրդավարության գլխավոր և ամենից բարդ հիմնախնդիրն այն իրական դարձնելն է: Միայն հռչակված քաղաքական ու իրավական ինստիտուտներն անբավարար են ժողովրդավարությունն իրական դարձնելու համար: Դրանց միշտ սպառնում է ձևական շղարշի վերածվելու վտանգը: Օրինակ՝ մարդը կարող է ունենալ հնարավորություն՝ ընտրելու «վատի», «սարսափելիի», «անտանելիի» միջև: Արտաքուստ ժողովրդավարությունը պահպանված է: Սակայն իրական ժողովրդավարությունը շեշտադրում է նաև ընտրության որակական կողմերը: Այսինքն՝ մարդը պետք է հնարավորություն ունենա ընտրելու «լավի», «ավելի լավի» և «ամենալավի» միջև: Ընտրությունն ինքը պետք է արժեքավոր լինի:

Ժողովրդավարությունը հաղթահարելով ամբողջատիրության և բռնապետության վատագույն դրսևորումները, ինքն է ծնում մի շարք բացասական երևույթներ, որոնք առկա են նույնիսկ ժողովրդավարական զարգացման բարձր ցուցանիշներ ունեցող երկրներում: Դա հանգեցնում է ժողովրդավարությունից համատարած հիասթափության՝ «խաբված սպասումների էֆեկտի», մարդկանց օտարման, կոնֆլիկտների: Սրանց հիմքում ևս ընկած են մարդկային կեցության հոգեբանական հատկությունները, խաբելու ունակությունը կամ խաբված լինելու սուբյեկտիվ զգացողությունը:

Ժողովրդավարությունը ժողովրդի իշխանությունն է, սակայն պատասխանատվությունը ժողովրդավարության

գոյատևման համար ընկած է հասարակական-քաղաքական ընտրանու ուսերին: Դա ժողովրդավարության տարօրինակությունն /պարադոքսն/ է, քանի որ զանգվածները անտարբեր են, ապակողմնորոշված, և զարմանալիորեն՝ քիչ նվիրված ժողովրդավարական արժեքներին: Իսկ երբ փոքրաթիվ ընտրանին սկսում է գերիշխել տնտեսական և քաղաքական որոշումների կայացման գործում, չբարելավելով փոքրամասնությունների և անզորների վիճակը, ժողովրդավարության համակարգը և նպատակները խաթարվում են: Նույնիսկ զարգացած երկրներում երբեմն բնակչության հիմնական զանգվածը զրկվում է ժողովրդահիշխանության բարիքներից, քանի որ պետությունը և նրա քաղաքականությունը հայտնվում են ֆինանսական օլիգարխների վերահսկողության տակ: Այդ պայմաններում ընտրելու և ընտրվելու իրավունքը, խոսքի ազատությունը վերածվում են ձևական իրավունքի: Ընտրանին ու նրա մարդկային-բարոյական որակները նորից ունեն հոգեբանական, սոցիոմշակութային արմատներ:

Ժողովրդավարության և ազատականության ուղին բռնած շատ երկրներում, այդ թվում և Հայաստանում, զգացնել է տալիս այն հանգամանքը, որ կտրուկ աճել են եկամտային անհավասարությունը և աղքատությունը, մարդու իրավունքներն ամրագրված են Սահմանադրությամբ, սակայն դրանց իրականացման, ապահովման մակարդակը բարձր չէ: Մեկ այլ վճռորոշ խնդիր է փողը քաղաքականության մեջ, որը ջլատում է ժողովրդավարական ինստիտուտները, երբ շահարկում է իր ազդեցությունը ընտրություններում, օրենսդիր

մարմինների քվեարկություններում: Դրա արդյունքում քաղաքական կուսակցություններն անկում են ապրում, կամ էլ հրապարակ են գալիս «փուչիկ» կուսակցությունները՝ որպես սոցիալական մանիպուլյացիայի միջոց:

Ժողովրդավարությունը պարտադիր է ոչ միայն ազգային մակարդակում, այլև պետությունների միջև հարաբերություններում: Այս ոլորտում ևս այն ունի բազում հիմնախնդիրներ: Օրինակ՝ երկակի չափանիշները՝ հանուն իրենց շահերի ապահովման, պետությունների անհավասար ներկայացուցչությունը միջազգային միջկառավարական կազմակերպություններում, միջազգային առևտրական կանոնների անարդարացիությունը և այլն:

Այս ամենը գալիս է հաստատելու, որ ժողովրդավարության համար կարևոր են դրա սոցիալական հիմքը կազմող հասարակության ու նրա անհատների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, հոգեմտակերպը և կայուն դիրքորոշումները: Սրանց կարևորությունը ժողովրդավարության կայացման ու կոնֆլիկտների հաղթահարման գործում հասկանալու համար դիտարկենք հասարակության քաղաքական համակարգը, դրա տարրերը, գործողության կառուցակարգը:

§ 2. Ժողովրդավարական հանրային քաղաքականությունը և դրա իրականացման համակարգը

«Քաղաքականություն» բառը ծագել է հունարեն polis (քաղաք) կամ politike (պետական և հասարակական գործեր) բառերից: «Քաղաքականություն» հասկացության ամենահին և պարզ մեկնաբանումը նշանակում է պետության կառավարման արվեստ, այսինքն՝ պետության ներքին և արտաքին նպատակների իրականացման եղանակ: Ինչպես տեսնում ենք, սկզբնապես քաղաքականությունը հանգում էր պետության՝ որպես կազմակերպության գործունեությանը, որն իրականացնում էր իր տարածքի մենաշնորհային օրինական կառավարումը: Պետությունը, որպես իշխանության կրող, բաշխում էր արժեքները և պաշարները: Սակայն արդի քաղաքացիական հասարակության մեջ քաղաքականությունը պետության մենաշնորհը չէ:

Հասարակության մեջ և՛ համերկրային, և՛ տեղական մակարդակներում առաջանում են բազում խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն: Այդ խնդիրների մի մասը վերաբերում է մեզանից յուրաքանչյուրի սեփական, մասնավոր կյանքին: Օրինակ՝ գնել մեքենա, թե բնակարան: Այդ խնդիրը լուծում ենք մենք՝ մեր ցանկությանը և հնարավորությանը համապատասխան: Այդ պատճառով այն համարվում է մասնավոր գործ: Սակայն կան խնդիրներ, որոնք ունեն ընդհանուր նշանակություն, ազդում են բոլորիս կյանքի և բարեկեցության վրա: Այդպիսի խնդիրների լուծումն իրականացնում են մեր կողմից ընտրված հանրային մարմինները: Օրինակ՝ ինչ-որ

համայնքում չի կատարվում աղբահեռացման աշխատանքը կամ խորհրդարանի նախորդ ընտրություններին ընտրողների բավականին մեծ զանգված չի մասնակցել: Ընտրական հարաբերությունները կարգավորվում են օրենքով, այսինքն՝ խնդրի կարգավորումն իրականացնում է պետությունը: Սակայն մինչև պետության կողմից վերջնական իրավական լուծումները՝ խնդիրը գիտակցվում է մարդկանց և նրանց կազմակերպությունների կողմից: Այնուհետև այդ խնդիրները դառնում են հանրային քննարկման առարկա, ընդ որում՝ այդ քննարկումների ընթացքում մարդկանց և նրանց խմբերի կարծիքները կարող են բախվել:

Լուծումներից մեկն այն է, որ ընտրություններին մասնակցելն օրենքով դարձվի պարտադիր: Հետևաբար, հարցի լուծողը պետության օրենսդիր մարմինն է, որն այդ քաղաքական որոշմանը կարող է տալ օրինական ձև: Սակայն օրենսդիր մարմինը նման որոշում ընդունում է՝ մարդկանց և հասարակական խմբերի, կազմակերպությունների, կուսակցությունների կարծիքները հաշվի առնելով կամ նրանց մասնակցությամբ: Այս ամբողջ գործընթացը, սկսած հիմնախնդրի գիտակցումից, բարձրաձայնելուց մինչև դրա իրավական լուծումը պետության միջոցով՝ համարվում է հանրային քաղաքականություն:

Հանրային քաղաքականությունը գործունեություն է՝ ուղղված հասարակական կյանքի կառավարմանը և կարգավորմանը՝ բարեկեցության, ազատության և սահմանադրական կարգերի հաստատման նպատակով:

Հանրային քաղաքականությունն իրականացվում է

քաղաքական համակարգի միջոցով: Քաղաքական համակարգը գործող կառուցակարգ է, որի միջոցով լուծվում են քաղաքական կառավարման խնդիրներ, ընդունվում են քաղաքական որոշումներ:

Հասարակական կյանքը բազմակողմ և բազմաբնույթ է: Այն կազմված է տնտեսական, սոցիալական, հոգևոր, իրավական և այլ ոլորտներից, որոնց միջև տեղի է ունենում մշտական փոխգործողություն: Այդ փոխգործողության ընթացքում քաղաքականությունը ներխուժում է հասարակության կյանքի բոլոր ոլորտներ: Շատ դեպքերում քաղաքականությունից է կախված այդ ոլորտներում մարդկանց սպասելիքների իրականացումը: Այդ պատճառով, հասարակության զարգացմանը զուգընթաց, մարդկանց հետաքրքրությունը քաղաքականության նկատմամբ աճում է: Մարդիկ իրենց ճակատագրով կապվում են քաղաքականության հետ, քանի որ նրանց կյանքի ընթացքը կախված է քաղաքական գործիչներից և նրանց ընդունած որոշումներից:

Հանրային քաղաքականության իրականացման համակարգն ունի որոշակի կազմակերպական կառուցվածք: Այդ կազմակերպական կառուցվածքը քաղաքական կազմակերպությունների ամբողջություն է, որոնք իրավունքի (օրենքի) շրջանակներում և պետության միջոցով իրականացնում են քաղաքական իշխանությունը կամ պայքարում են դրա իրականացման համար: Քաղաքական համակարգի մասնակիցներ են համարվում պետությունը և քաղաքական կազմակերպությունները (կուսակցություն, շարժում), ՀԼՄ-ները, անհատները և նրանց խմբերը:

Քաղաքական համակարգի մասնակիցների մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում պետությունը: Այն համընդհանուր հանրային իշխանություն է՝ օժտված գերակայությամբ և ինքնիշխանությամբ: Քաղաքական համակարգի ոչ մի այլ մասնակից նման հատկություններ չունի:

Անհատները քաղաքական համակարգում հանդես են գալիս որպես քաղաքական իրավունքներով օժտված քաղաքացիներ: Օրինակ՝ քաղաքական գործիչ, ընտրող, որևէ կուսակցության անդամ, պատգամավորության թեկնածու, պատգամավոր, պաշտոնյա և այլն:

Քաղաքական համակարգի գործողությունը կարգավորվում է իրավական, քաղաքական, բարոյական նորմերով: Քաղաքական համակարգի սուբյեկտները չեն գործում ամենաթողության պայմաններում: Օրենքները պարտադիր են քաղաքական կյանքի բոլոր մասնակիցների համար՝ լինի դա պետություն, կուսակցություն, քաղաքականությամբ զբաղվող քաղաքացի: Կուսակցության քաղաքական ծրագիրը, որի կենսագործմանը ձգտում է նա, կարող է իրականացվել միայն օրինական կարգով՝ ընտրությունների միջոցով իշխանության անցնելով (կառավարող կուսակցություն դառնալով) և այնուհետև իրավական ընթացակարգով որոշումներ ընդունելով:

§ 3. Ժողովրդավարական քաղաքական-իրավական մշակույթի դերը քաղաքական համակարգի գործողության կառուցակարգում

Քաղաքական համակարգը գործում է **«մուտք - ելք»** սկզբունքով: Մուտքը քաղաքական համակարգի վրա շրջակա միջավայրի ազդեցությունն է: Քաղաքական գործընթացներով անցնելուց հետո մուտք եղած տեղեկույթը կարող է վերածվել պաշտոնական որոշման: Արտաքին միջավայրից տեղեկույթը մուտք է գործում քաղաքական համակարգ, և թափ է առնում քաղաքական քննարկումների կամ օրինաստեղծագործության գործընթացը: Հասարակական խնդիրների վերաբերյալ հանրության արձագանքները և, հետևաբար, քաղաքական համակարգին ուղղված տեղեկույթը կարող է լինել երկակի՝ **պահանջներ** և **պաշտպանություն**:

Մուտքային տեղեկույթը կարող է լինել պահանջ: Եթե մարդիկ և կազմակերպությունները դիմում են իշխանություններին հասարակական բարիքների ցանկալի կամ անցանկալի բաշխման կապակցությամբ, արտահայտում են փոփոխությունների իրականացման ցանկություն, ապա դա պահանջ է՝ ուղղված հանրային իշխանությանը: Օրինակ՝ ուժեղացնել բնապահպանությունը և բարելավել շրջակա միջավայրը, բարձրագույն կրթությունը դարձնել անվճար, թեթևացնել հարկերը և այլն: Եթե պահանջները շատ են, ապա դրանք կարող են թուլացնել քաղաքական համակարգը, ապակայունացնել այն:

Քաղաքական համակարգի մուտքային տեղեկույթը

կարող է լինել դրան պաշտպանող: Դրանով մարդիկ և կազմակերպություններն ընտրում են վարքագիծ, որով հավանություն են տալիս քաղաքական համակարգի գործողությանը: Եթե պահանջները թուլացնում են քաղաքական համակարգը, ապա պաշտպանությունը, ընդհակառակը՝ կոչված է ուժեղացնել այն: Քաղաքական համակարգն ամրապնդող այդպիսի վարքագծի տարբերակներն են, օրինակ՝ հարկերի պարտաճանաչ մուծումը, զինվորական պարտքի կատարումը, պետական կառույցների և խորհրդանիշների հարգանքը, կառավարողների պաշտպանությանն ուղղված հանրահավաքի անցկացումը:

Արտաքին միջավայրից ստացած տեղեկույթին քաղաքական համակարգը պատասխանում է քաղաքական որոշումներով ու գործողություններով: Քաղաքական որոշումները կարող են ունենալ նոր օրենքի ձև, լինել հայտարարություն, ֆինանսական հատկացում և այլն: Որոշումների կատարումն ապահովվում է իրավունքի ուժով:

Այսպիսով հանրային քաղաքականությունը գործընթաց է, որում քաղաքական համակարգը, փոխգործակցելով արտաքին միջավայրի հետ, ստացված մուտքային տեղեկույթը ելքում վերածում է համապատասխան որոշումների ու գործողությունների՝ լուծելով հանրային հրատապ խնդիրները: Եթե քաղաքական համակարգն ընդունակ չէ դրան, ապա այն երկար չի գոյատևի:

Քաղաքական գործընթացում կարևոր նշանակություն ունեն նաև բնակչության, քաղաքական ուժերի անդամներ, պետական պաշտոնյաների քաղաքական-իրավական գիտակ-

ցությունն ու վարքագծային մշակույթը: Դրա հասունության աստիճանը, ակտիվությունը, հանդուժողական բնույթը մեծ նշանակություն ունեն հանրային քաղաքական համակարգի արդյունավետ գործողության համար: Եթե քաղաքական իրավական գիտակցությունը իր կրող բոլոր տեսակի սուբյեկտների մոտ ժողովրդավարական չէ, ունի անհանդուրժողական ու ապակառուցողական բնույթ ու կողմնորոշում, ապա ժողովրդավարության ոչ մի ինստիտուտ չի կարող կատարել իր առաքելությունը նեկարառյալ կոնֆլիկտների կանխման ու հաղթահարման: Հետևաբար, շատ կարևոր է, որ դրանց բնութագրիչները լնեն իսկական քաղաքացիական, ժողովրդավարական, հանդուրժողական, կառուցողական:

Եթե հասարակությունը և նրա անդամները չունեն ազատության պատրաստակամություն, պատասխանատվության զգացում, ինքնասահմանափակման ընդունակություն, հարգանք համաքաղաքացիների իրավունքների ու շահերի նկատմամբ, օրենքի նկատմամբ մանկուց ներարկված հարգանքի զգացում, ապա քաղաքացիական հասարակության կայացումը դառնում է հարցական: Հակառակ դեպքում, այսինքն՝ թվարկված որակների դրական միտվածությունը ընդունակ է ստեղծել պայմաններ հոչակված ժողովրդավարության սկզբունքների իրականացման համար: **Հետևաբար, քաղաքացիական հասարակության կառուցման առաջին խնդիրն այդպիսի անհատի կայացումն է:**

§ 4. Ժողովրդավարական քաղաքացիական դիրքորոշման բնութագրերը

Ազատական հայ մարդուն իրականություն դարձնելու լավագույն միջոցը գիտելիքն է ժողովրդավարության, մարդու իրավունքների և դրանց նշանակության մասին: Ժողովրդավարության տեսաբաններից Ա. դե Թոքվիլն (1805-1859) ասել է. «Ազատ ապրելու արվեստը ընդունակ է ստեղծել հրաշքներ, բայց միևնույն ժամանակ չկա ավելի դժվար բան, քան սովորել ազատ ապրելե: Բացի գիտելիքներից, իսկական քաղաքացու ձևավորման համար կարևոր է նաև իրական, առօրյա կենսափորձը:

Ժողովրդավարական, հանդուրժողական քաղաքացիական դիրքորոշումն անհատին բնորոշ հոգեբանական երևույթ է, որում առկա են երեք տարր՝ տեղեկութային, հուզական-գնահատողական, վարքագծային:

Տեղեկութային տարրը ենթադրում է մարդու աշխարհայացքը և այն իդեալը, որին նա ձգտում է: Այս դեպքում խոսքը քաղաքացիական իդեալների մասին է, որոնք ամրագրված են Սահմանադրությամբ: Ժողովրդավարությունը պետք է սովորել, հաստատե՛լ մեզանում, որը կբերի մեզ արդարության զգացումի, այլոց նկատմամբ խորը հարգանքի, կարեկցանքի:

Ամեն մարդու դիրքորոշման մեջ կան **հուզական-գնահատողական** տարրեր, որոնք ենթադրում են համակրանք և հակակրանք ինչ-ինչ օբյեկտների նկատմամբ: Ժողովրդավարությունը ենթադրում է հանդուրժողականություն, բացառելով անհիմն հակակրանքը, սակայն դա չի նշանակում զիջում,

ներողամտություն կամ բացասական վարքագծի խրախուսում: Ժողովրդավարությունն ամենից առաջ կամավոր ակտիվ հուզական վերաբերմունք է՝ ձևավորված մարդու իրավունքների ճանաչման հիման վրա: Ոչ մի դեպքում ժողովրդավարությունը չի կարող ծառայել դրանց նկատմամբ ոտնձգությունների արդարացմանը:

Իմացությունը և հույզերը որոշում են մեր վարքագիծը, արարքները: Այսպիսով՝ քաղաքացիական դիրքորոշումը նշանակում է կամավոր պատրաստակամություն, բարոյական պարտք՝ միշտ և բոլոր դեպքերում գործել ժողովրդավարության և մարդու իրավունքների չափանիշներին համապատասխան: Այդ պայքարի և գործելակերպի միջոցներից են բռնության մերժումը, բռնության զոհերի հետ համերաշխության ցուցադրումը, մարդկային ատելության հրահրմանն ուղղված քարոզչության վարկաբեկումը և այլն:

Այդպիսով՝ ժողովրդավարական քաղաքացիական դիրքորոշումը, որպես հոգեբանական հատկություն, նշանակում է, որ անհատին բնորոշ է պատասխանատվություն իր երկրի ու իր քաղաքացիական պարտականությունների նկատմամբ, այսինքն՝ քաղաքացիականություն: **Նման անհատը որպես իսկական քաղաքացի, գիտակցում է իր իրավունքներն ու պարտականությունները հայրենիքի և պետության նկատմամբ և ակտիվ ու կամավոր կատարում է դրանք:**

Իսկական քաղաքացու բնութագրիչներ

Իսկական քաղաքացին օրինահպատակ է, հանրորեն ակտիվ, հասարակությունից չօտարված: Նման քաղաքացին

ազատ անհատն է, որն իրեն պատասխանատու է համարում իր արարքների համար, զգում է իրեն իր ժողովրդի և հայրենիքի մասնիկը: Իր ժողովրդի հետ նա կապված է անցյալով, ներկայով, ապագայով և ընդհանուր ճակատագրով: «Պակասավոր է այն հայը, որ հայրենի պատմության իմաստասիրությունը, նրա հետագա զարգացման ուղիները հասկանալու համար չի վերապրել իր ժողովրդի ողջ անցյալը:

Իսկական քաղաքացին անտարբեր չէ, թե ինչ է կատարվում իր հայրենիքում: Ունենալով հայրենիքի համար պատասխանատվության զգացում՝ նա օգտագործում է իրեն ընձեռված բոլոր հնարավորությունները երկրի և պետության կյանքի վրա ազդելու համար:

Իսկական քաղաքացին՝ լինելով տնտեսապես անկախ և ունենալով անձնական ազատություն, ակտիվ մասնակցում է հանրային խնդիրների լուծմանը, ազդում է պետության վրա դրականորեն:

«Իդեալական քաղաքացին ոչ միայն չպետք է վնասի ուրիշներին, խախտի ուրիշի սեփականությունը կամ կատարի այլ անարդարություն, այլև պարտավոր է օգնել անարդարությունից տուժածներին և աշխատի ընդհանուր բարիքի համար» (Ցիցերոն):

Իսկական քաղաքացին հանդուրժողական է, տոգորված խորը հարգանքով այլոց իրավունքների նկատմամբ: Նա հասկանում է, որ ինքն ազատ է, կարող է ունենալ և պնդել իր համոզմունքները, ճանաչում է այլոց նույնպիսի իրավունքը: Սակայն դա չի նշանակում հանդուրժող վերաբերմունք սոցիալական անարդարությանը, հրաժարում սեփական կարծիքից:

§ 5. Մասնակցությունն ու հանդուժողականությունը որպես ժողովրդավարության տեսակ

Քաղաքացիական դիրքորոշման հիմնական ցուցանիշն անհատի կամավոր և ակտիվ մասնակցությունն է հանրային գործերին: Հասարակական գործերի, խնդիրների, դրանց լուծման ուղիների նկատմամբ հետաքրքրվածությունը քաղաքացիական դիրքորոշման կարևոր գործոնն է: Քաղաքացիական դիրքորոշումն այնքանով է ուժեղ, որքանով անհատը հասարակական բարիքների կենսագործումը վեր է դասում անձնական, մասնավոր շահերից: Իհարկե, բոլոր ժամանակներում կա, եղել և մնում է տարբերությունն անհատական շահերի և այլասիրության միջև, և, անշուշտ, հասարակության հաջող զարգացումն անհնարին է առանց անհատական շահերի հզոր շարժառիթների: Քաղաքացիական հասարակության անդամներից չի պահանջվում լինել լրիվ այլասեր. քաղաքացիական հասարակությունը ենթադրում է գիտակցված անհատական շահ: Դա նշանակում է, որ անհատական շահը որոշվում է հանրային շահերի և պահանջմունքների համատեքստում: Այդպիսի անձնական շահը չի համարվում «կարճատես»: Դա «հեռատես» անհատական շահ է, որը հաշվի է առնում նաև հանրային, ընդհանուր շահը:

Անշուշտ, մենք բոլորս էլ, ապրելով մեր հայրենիքում, մասնակից ենք այստեղ ընթացող գործընթացներին: Մասնակցությունն օրինաչափորեն պահանջում է մարդկային գործունեության կամավորության մեծ աստիճան: Սակայն մեր մասնակցությունը միատեսակ չէ: Անհատներին բնորոշ

են ինքնուրույնության և կամավոր ակտիվության տարբեր աստիճաններ: Անհատի մասնակցության աստիճանը հիմնված է նրա քաղաքացիական որակների վրա:

Համոզված եղեք, որ «Առանձին անհատի ընկերային դիրքավորումը, նրա վերաբերմունքը դեպի իր պետությունը - ահա թե ինչով է պայմանավորվում այդ վերջինի ճակատագիրը – պետության ճակատագիրը: Հնարավոր են հետևյալ դիրքավորումները: Նախ՝ անհատը սիրում է իր պետությունը և այդ դեպքում անձնվիրաբար գործում, զոհաբերում, տառապում նրա համար, որով և նպաստում է նրա հզորացմանը և պաշտպանմանը: Նա խորթանում է իր պետությունից՝ դառնում անտարբեր դեպի նրա ճակատագիրը, որով վերջինը դառնում է տկար և դյուրակործան: Վերջապես նա, անհատը, թշնամանում է իր պետությանը և աշխատում ի կորուստ նրա» (Գ. Նժդեհ):

Մեծ հայրենասերի այս խոսքերից հետևում է, որ մարդկանց ներքին դիրքորոշման տեսանկյունից մասնակցությունը մեր հասարակության տարատեսակ գործերին կարող է լինել տարբեր: Մեզանից ամեն մեկի մասնակցությունը տարբերվում է իր **շարժառիթներով**, այսինքն՝ ըստ մարդուն գործողության դրդող գործոնների: Օրինակ՝ համոզմունքները, արժեքային կողմնորոշումները: Դրանք պայմանավորում են անհատի մասնակցության ակտիվության աստիճանը: Օրինակ՝ մենք բոլորս պարտավոր ենք կատարել օրենքները: Սակայն այդ կատարումը մեզանից ամեն մեկի մոտ կարող է լինել տարբեր: Մեկի մոտ դա պայմանավորված է խորը և համոզված օրինահպատակությամբ, հետևաբար՝ կամավոր է, իսկ

մյուսը կատարում է հարկադրված՝ պատասխանատվությունից վախենալով: Ըստ այդմ կարելի է առանձնացնել մասնակցության հետևյալ տեսակները.

1. Կամավոր ակտիվ քաղաքացիական մասնակցություն: Այս դեպքում անհատը գործում է համոզված կերպով: Դա քաղաքացիական դիրքորոշման բարձր մակարդակն է: Այն կամավոր նախաձեռնողական վարքագիծ է, որը կարող է դառնալ և հաճախ դառնում է բուն ժողովրդավարական բարեփոխումների գործոն: Այսպիսի մասնակիցը կոչվում է իսկական քաղաքացի, որն ունի պատրաստակամություն՝ օգտագործել ժողովրդավարության հնարավորությունները, ստեղծագործաբար ղեկավարվել դրանցով իր ամենօրյա վարքագծում: Ակտիվ մասնակցության հիմքում ընկած են կամավոր նախաձեռնությունը, ստեղծագործությունը, անհատի գործնական ակտիվությունը:

2. Հարմարվողական քաղաքացիական մասնակցություն: Այս դեպքում անհատը հարմարվում է իր շրջապատի (անմիջական շրջապատի, խմբի և այլնի) կարծիքին, ենթարկվում նրանց: Այլ խոսքերով՝ մարդը վարվում է այդպես, քանի որ ուրիշներն այդպես են վարվում: Հարմարվողականությունը սովորաբար ճանաչվում է սոցիալապես օգտակար երևույթ, քանի որ անհատը, ենթարկվելով այլոց կարծիքին, վարվում է հանրորեն օգտակար: Սակայն պետք է ընդունել և այն, որ այդպիսի դիրքորոշումը, լինելով ընդունելի, հանրության համար ցանկալի չէ, քանի որ իրենից ներկայացնում է կույր հետևում, առանց սեփական քաղաքացիական դիրքորոշումների ակտիվության:

Հարմարվողականության պատճառով մարդիկ չեն արտահայտում իրենց մտքերը, համոզմունքները, չեն դրսևորում անկեղծություն, նախաձեռնություն, իրական (ոչ ձևական) ինքնուրույնություն: Ակնհայտ է, որ այլակարծությունն անհրաժեշտ է հասարակությանը: Այլակարծությունն այն անհատների առաջ ընկնող, ահազանգող վարքագիծն է, ովքեր մյուսներից շուտ են սկսել գործել, պայքարել անհատի իրավունքների համար: Սակայն այլակարծությունը պետք է դրսևորվի օրենքի շրջանակներում: Ժողովրդավարությունը բազմազանության դրսևորում է, սակայն ոչ ամենաթողություն:

3. Հասարակությունից օտարված և անտարբեր գոյատևում: Օտարումը հասարակությունից, պետական կառավարումից, սեփականությունից կործանիչ է և՛ անհատի, և՛ պետության, և՛ հասարակության համար: Օրինակ՝ մարդու օտարումը սեփականությունից նշանակում է մարդու կտրվածություն նրա ազատությունը սնող տնտեսական արմատներից: Անշուշտ, նյութական ազատություն նշանակում է մարդու նաև հոգևոր, անձնական, քաղաքական, բարոյական անկախություն: Մարդկանց օտարումը քաղաքականությունից հանգեցնում է պետական իշխանության ամենաթողության, չարաշահումների: Իսկական քաղաքացին չպետք է լինի անտարբեր: Չէ՞ որ հայրենիքը միայն մեր ընտանիքը և ունեցվածքը չէ:

Ասվածը հիմք է տալի պնդելու, որ **քաղաքացիական կամավոր մասնակցությունը ժողովրդավարության տեսակ է:** Այն ենթադրում է, որ, բացի ընտրություններից, քաղաքացիները պետք է ունենան իրավունք և հնարավորություն ակտիվ

մասնակցելու քաղաքական որոշումների ընդունմանը, ինչպես նաև ընդունված որոշումների կատարման նկատմամբ վերահսկողությանը:

Այդպիսի ժողովրդավարությունը խրախուսում է մասնակցությունը հասարակական և պետական կյանքին՝ խթանելով գիտակցված կամավորությունը: Մասնակցության ապահովմամբ զանգվածները ներառվում են հանրային կառավարման գործում: Դրանով հաղթահարվում է բնակչության անտարբերությունը, և ձևավորվում է կամավոր ու ակտիվ հանրային վարքագիծ: Դրանից բխում է նաև, որ ժողովրդավրության կայացման համար սնհրաժեշտ է իրականացնել ժողովրդավարական սոցիալիզացիայի ու կրթության, հանդուժողականության մշակույթի արմատավորման լիարժեք քաղաքականություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐ

§ 1. Անհանդուրժողական մշակույթից դեպի կառուցողականության ու հանդուրժողականության մշակույթ

Մարդկային հասարակությունը հազարամյակների պատմություն ունի: Դրանցից քիչ թե շատ ստույգ են վերջին երեք ու կես հազար տարիները: Մեզ հասած գրավոր պատմական աղբյուրների օգնությամբ կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ այդ երեք ու կես հազար տարիներից միայն երկու հարյուր հիսուն տարիներն են եղել խաղաղ: Այսինքն՝ մարդկային հասարակության պատմությունն անընդհատ պատերազմների, ավերումների, նվաճումների, բռնությունների պատմություն է, քան թե բարգավաճման, կառուցման ու զարգացման: XX դարը բռնության ու դաժանության մասշտաբներով գերազանցեց նախորդներին: Այնպես որ XXI դարը մարդկությանը դրել է երկընտրանքի առաջ: Այն կամ դառնալու է խաղաղության մշակույթի և հանդուրժողականության դար, կամ էլ լինելու է վերջինը մարդկային քաղաքակրթության պատմության մեջ: Անցած դարում պատերազմի մշակույթն ու անհանդուրժողականությունն իրենց բոլոր դրսևորումներով դարձան մարդկության մեծագույն չարիքներից մեկը: Երկու աշխարհամարտերը, ավելի քան 200 խոշորամասշտաբ պատերազմները և զինված ընդհարումները,

ամբողջատիրական և հակաժողովրդավարական վարչաձևերի բռնությունները, իշխանության համար մղված պայքարը, ցեղասպանությունները՝ որպես պատերազմի մշակույթի հետևանք, տարել են մինչև 300 մլն. մարդու կյանք: Զանգվածային ոչնչացման զենքի ստեղծումը, կատարելագործումը և տարածումը վկայում են այդ զենքի օգտագործման վտանգի ուժեղացման մասին: Անհանդուրժողական ներքաղաքական պայքարը և սոցիալական հակամարտությունները բազմաթիվ երկրներում, ռասիզմը, ցեղասպանության փաստերը, աշխարհի տարբեր մասերում ծագող և ընթացող պատերազմները վկայում են, որ խաղաղության ու հանդուրժողականության գաղափարների սերմանումը և դրանց մշակույթի ձևավորումը վճռական նշանակություն ունեն ամեն մի մարդու, ընտանիքի, կազմակերպության, պետության, հասարակության և ողջ մարդկության կյանքում: Մարդկության փրկությունը խաղաղության մշակույթի և դրա անխզելի բաղադրատարրը կազմող հանդուրժողականության հոգեմտակերպի սերմանումն է: Պատերազմի մշակույթը և անհանդուրժողականությունը մարդկությանը տանում են դեպի եղբայրական գերեզման:

Ահա այս տեսանկյունից իմաստավորելով մարդկության նախորդ պատմությունը՝ մենք հանգում ենք աներկբա եզրակացության: Մարդկությունը պատերազմի և բռնության մշակույթից անհրաժեշտաբար պետք է անցում կատարի խաղաղության ու ներդաշնակության մշակույթին: Այդ անցման հետևանքով պետք է ձևավորվի խաղաղության մշակույթը՝ որպես ամեն մի մարդու և ողջ մարդկության հոգևոր հարստացման գործընթաց: Արդյունքում խաղաղության գոյություն ունեցող գաղափարները կդառնան ամեն մի մարդու անձնական բարոյահոգևոր արժեքները, կպայմանավորեն նրա հոգեմտակերպը, կուղղորդեն նրա ստեղծագործական ուժերն ու ընդունակությունները, ողջ գործունեությունը: Միայն այդպիսի մշակույթի միջոցով է հնարավոր կանխել մարդկության կործանումը, խավարն ու քաոսը և հասնել խաղաղության ու ներդաշնակության, պայմաններ ստեղծել մարդկային զարգացման համար:

Մարդկության առաջադեմ ներկայացուցիչները և միջազգային կազմակերպությունները, ինչպես, օրինակ, ՅՈՒՆԵՍԿՕ-ն, դեռ անցյալ դարի վերջերին, խորապես գիտակցելով այս փաստը, հռչակեցին «Զարգացում հանուն խաղաղության, խաղաղություն հանուն զարգացման» քաղաքականությունը, որը՝ որպես հակակշիռ պատերազմի մշակույթին, առաջ է քաշում խաղաղության մշակույթի կերտման ու բարիդրացիության հայեցակարգը: ՄԱԿ-ը, իր հիմնական խնդիրը համարելով սերունդներին պատերազմներից և բռնություններից զերծ պահելը, ևս առաջ քաշեց խաղաղության մշակույթին անցման ռազմավարությունը: ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 52-րդ նստաշրջանը 2000թ. հայտարարեց խաղաղության մշակույթի տարի, իսկ երրորդ հազարամյակի առաջին տասը տարին՝ խաղաղության մշակույթի տասնամյակ:

Խաղաղության մշակույթը կմերժի բռնությունը և կառաջարկի հիմնախնդիրների լուծումը գտնել երկխոսության ու բանակցությունների միջոցով: Այն հակամարտությունների կանխման մշակույթ է: Հանդուրժողականությունն ինքնան-

պատակ չէ և ոչ էլ վերջնական արդյունք: Հանդուրժողականությունը միջոց է հասնելու իրական ժողովրդավարության և համընդհանուր խաղաղության: Ժողովրդավարությունը, մարդու իրավունքները, հանդուրժողականությունը և խաղաղությունը որպես արժեքներ կազմում են խաղաղության մշակույթի հիմքը: Խաղաղության մշակույթը մարդկության խաղաղ ապրելու իրավունքի երաշխիքն է:

Խաղաղության մշակույթը բարիդրացիության մշակույթ է, որի հիմքը որպես արժեքներ կազմում են մի շարք սկզբունքներ, ինչպես, օրինակ, ազատությունը, արդարությունը, ժողովրդավարությունը, հանդուրժողականությունը, բռնության մերժումը, համերաշխությունը, բոլոր մարդկանց բոլոր իրավունքների հարգումը և այլն:

Խաղաղության մշակույթը հնարավոր է միայն նշված բոլոր սկզբունքների համալիր պահպանման պայմաններում: Այլ կերպ ասած, խաղաղության մշակույթի արմատավորումը որպես նոր հարյուրամյակ և նոր հազարամյակ թևակոխած մարդկության նպատակ, գլխավոր խնդիր ենթադրում է խաղաղության մշակույթի նշված սկզբունքների, այդ թվում նաև հանդուրժողականության իրագործում:

Հանդուրժողականությունն անբաժանելի է խաղաղությունից ու մարդու իրավունքներից: Հանդուրժողականության մթնոլորտն անհրաժեշտ պայման է մարդու իրավունքների իրացման, խաղաղության հաստատման, մարդկային զարգացման ապահովման համար: Որովհետև ամեն մի մարդ, կրոնական համայնք, ժողովուրդ, կրոն, քաղաքակրթություն հանդուրժողական վերաբերմունքի իրավունք ունի: Այսինքն՝

հանդուրժողական վերաբերմունքի արժանանալը նույնպես պետք է համարել մարդու հիմնական իրավունքներից մեկը: Ունենալով իրավաբանորեն ամրագրված իրավունքներ ու ազատություններ և իրացնելով դրանք՝ յուրաքանչյուր անհատ և հասարակական խումբ պետք է ելնի այն համոզմունքից, որ նույն իրավունքներով ու ազատություններով օժտված են նաև ուրիշները: Լինել հանդուրժողական նշանակում է հարգել այլոց անձը, անհատականությունը, իրավունքներն ու ազատությունները: Հանդուրժողականությունը ենթադրում է հարգանք՝ անհատների, կանանց և տղամարդկանց, տարբեր քաղաքակրթությունների միջև: Հարգանքը ներառում է տարբերությունների գոյության գիտակցումը, ոմանց արտոնությունների և ուրիշների նկատմամբ գերիշխանության անընդունելիությունը: Հարգանքը նշանակում է մշտական ջանքեր տարբերությունների համագոյակցության բանաձևի որոնման, բանական հասարակական ներդաշնակության հաստատման ուղղությամբ:

Խաղաղության մշակույթը ենթադրում է հակամարտությունների լուծման ուժի և վախի տրամաբանությունից անցում բռնության մերժման, բանականության ու փոխադարձ հարգանքի տրամաբանության: Խաղաղության մշակույթը համընդհանուր ազատության և հարգանքի մշակույթն է՝ մարդու իրավունքների պաշտպանության և խրախուսման պայմաններում: Խաղաղության մշակույթի պայմաններում ո՛չ մարդիկ, ո՛չ էլ ժողովուրդները չեն շահագործվելու: Այն երաշխավորելու է հասարակության առավել խոցելի խավերի մարդկային արժանապատվությունը և բարեկեցությունը: Խաղա-

ղության մշակույթը ենթադրում է պատասխանատվություն ողջ մարդկության ընդհանուր ապագայի համար: Խաղաղության մշակույթը երկրագնդի ողջ բնակչության համերաշխության ու հավասարության մշակույթն է:

Հանդուրժողականության հիմնախնդիրը միշտ էլ հրատապ է ցանկացած հասարակության համար: Հատկապես մեծ է դրա դերն անցման շրջանում գտնվող հասարակությունների, այդ թվում նաև մեր համար: Ընթացող բարեփոխումների հետևանքներից մեկն էլ հակասությունների աճն է մեզանում: Այդ աճն արդյունք է ժողովրդավարության, քանի որ հասարակության մեջ առաջ են եկել բազմաթիվ սոցիալ-քաղաքական խմբեր, որոնք բացահայտորեն արտահայտում են իրենց շահերը, որոնք հաճախ հակասության մեջ են մտնում այլ խմբերի ու իշխանությունների շահերի հետ: Այս տեսանկյունից ժողովրդավարությունը ենթադրում է հակասություններ: Սակայն իրական ժողովրդավարությունը ոչ թե նրանում է, որ յուրաքանչյուր ոք հնարավորություն ունի պնդել ու պաշտպանել իր շահերը տարբեր միջոցներով, այլ նրանում, որ ծագող հակասությունները լուծվում են կառուցողաբար, մարդասիրական, քաղաքակիրթ եղանակներով՝ հանդուրժողականության մթնոլորտում: Ներկայումս մեր հասարակությունում ուժեղացող սոցիալական լարվածության ու հակամարտության պատճառներից մեկն էլ մեզանից ամեն մեկի անհանդուրժողական մշակույթն է:

§ 2. Հանդուրժողականության հայեցակարգի միջազգային իրավական հիմքերը

Անհանդուրժողականությունը իր բացասական հետևանքները թողել է մարդկության ողջ պատմության ընթացքում: Հանդուրժողականության գաղափարը պատմականորեն հասունացել ու զարգացել է Եվրոպայում՝ XVI-XVIIդդ.: Ավերիչ կրոնական պատերազմները, մշտական սոցիալական բախումներն այն ժամանակվա եվրոպացուն բերեցին այն համոզման, որ կրոնական միասնության խզումը անխուսափելի է: Հասարակական խաղաղության հաստատման համար անհրաժեշտ էր լինել հանդուրժող հանդեպ այլ հավատքների: Այն ժամանակվա առաջավոր մտածողները (Ջոն Լոկ, Վոլտեր և այլոք) հատուկ աշխատություններ նվիրեցին հանդուրժողականության գաղափարին: Դրանցում հանդուրժողականությունը համարվում էր մարդկային առաքինություն: Այդ առաքինությունը ենթադրում է հանդուրժել մարդկանց միջև տարբերությունները, ուրիշներին չխանգարելով ապրելու ունակություն, ընդունակություն ունենալ իրավունքներ և ազատություններ՝ չխախտելով այլոց իրավունքները և ազատությունները:

Այդպիսով ի սկզբանե հանդուրժողականությունը հանդես եկավ իբրև բազմազանության և մարդկության հարատևման փիլիսոփայություն: Ցանկացած հասարակություն, որում չկա էթնիկական, սոցիալական, մշակութային միատարրություն, հանդուրժողականության կարիք ունի: Այդպիսով, հանդուրժողականությունը՝ որպես վերաբերմունք սո-

ցիալական և մշակութային տարբերություններին, այլոց կարծիքներին ու հավատքին, վարքագծի ձևերին, հանդիսանում է երկրային քաղաքակրթության հիմնարար սկզբունքներից մեկը: Հանդուրժողականության և դրա անհրաժեշտության փիլիսոփայական իմաստավորումից բացի, մարդկության առջև կանգնած հրատապ խնդիրն այն ամեն մի մարդու, սոցիալական խմբի, էթնոսի, քաղաքական ուժի հոգեմտակերպի վերածելն էր: Այդ խնդրի գիտակցումը պայմանավորեց հանդուրժողականության գաղափարի ներթափանցումը միջազգային իրավունքի ոլորտ և դրա ամրագրումը միջազգային փաստաթղթերում: Այդ ներթափանցումը պատերազմի ու անհանդուրժողականության մշակույթից խաղաղության ու հանդուրժողականության մշակույթին անցնելու առաջին ծիծեռնակն էր:

Հանդուրժողականության գաղափարի միջազգային-իրավական ամրագրման առաջին քայլերը կատարվել են դեռևս XIX դ. վերջերին: Այսպես, Ժնևի 1894թ. համաձայնագիրը պահանջում էր պատերազմի ժամանակ հարգանք դրսևորել զինվորի անձի նկատմամբ և ճանաչել բժշկական անձնակազմի չեզոքությունը: Այդ գաղափարն իր զարգացումն ստացավ ռազմագերիների հետ վարվելակերպի կանոնների սահմանմամբ, Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի ստեղծմամբ:

Ազգերի Լիգան ևս որոշակի քայլեր է կատարել հանդուրժողականության գաղափարի հաստատման ուղղությամբ: 1926թ. Լիգան ընդունեց համաձայնագիր, որն օրենքից դուրս էր հայտարարում ստրկությունը:

Երկրորդ աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո հանդուրժողականության գաղափարը դարձավ հրատապ և թելադրեց քաղաքականության, մտածողության և գործունեության նոր մշակույթի անհրաժեշտությունը: ՄԱԿ-ը և նրա կառուցվածքային օղակները համընդհանուր, համամարդկային գաղափարները, այդ թվում նաև հանդուրժողականությունը դրեցին իրենց գործունեության հիմքում: Իրավահավասարության, մարդու իրավունքների հարգման, հանդուրժողականության ուտոպիստական թվացող փիլիսոփայական գաղափարներն քայլ առ քայլ իրավաբանորեն ամրագրվեցին և գործնականորեն կիրառվեցին:

ՄԱԿ-ի կանոնադրությունն ամրագրում է Միավորված ազգերի վճռականությունը գալիք սերունդներ ազատելու պատերազմի աղետներից, վերահաստատելու հավատը մարդու հիմնական իրավունքների, մարդկային անհատի արժանապատվության և արժեքի նկատմամբ և այդ նպատակով դրսևորել հանդուրժողականություն, ապրել միասին, հաշտ ու խաղաղ, իբրև բարի դրացիներ:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1945 թ. ընդունված կանոնադրության նախաբանում ընդգծվում է, որ «աշխարհը պետք է հենվի մարդկության մտավոր և բարոյական համերաշխության վրա»:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948թ.) հռչակում է. «Յուրաքանչյուր մարդ ունի մտքի, խղճի ու կրոնի ազատության իրավունք, համոզմունքների ազատության և դրանք ազատորեն արտահայտելու իրավունք: Ըստ հռչակագրի, կրթությունը պետք է նպատակաուղղված լինի անձի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների

ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Այն պետք է նպաստի ազգերի, ռասայական կամ կրոնական խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը:

Բացի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից անցած տարիների ընթացքում ընդունվել են մարդու իրավունքներին առնչվող ձեզ հայտնի բազմաթիվ միջազգային պայմանագրեր, որոնք ամրագրում են մարդու քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները կամ էլ ուղղված են անհանդուրժողականության ու խտրականության զանազան դրսևորումների արգելմանը կամ վերացմանը: Եթե հաշվի առնենք, որ երկրորդ աշխարհամարտից անցել է ավելի քան կես դար, և դրանից հետո տեղի չի ունեցել նման բնույթի և մասշտաբի որևէ աղետ, ապա կարող ենք փաստել, որ դա նշված միջազգային պայմանագրերի ազդեցության արդյունք է: Բայց և այնպես իրավիճակը գոհացուցիչ չէ այն իմաստով, որ չնայած ջանքերին, այնուամենայնիվ, անհանդուրժողականությունն ու խտրականությունը շարունակում են առաջացնել իրենց ավերիչ հետևանքները: Ե՛վ «սառը պատերազմի» տարիներին, և՛ դրանից հետո աշխարհում առկա են եղել սոցիալական, կրոնական, մշակութային, միջքաղաքակրթական բախումներն ու հակամարտությունները: Դրանք հաճախ վերածվել են զինված բախումների: Անհանդուրժողականությունն իր բազմաթիվ դրսևորումներով շարունակում է մնալ սպառնալիք խաղաղության, ժողովրդավարության և մարդու իրավունքների համար: Անհանդուրժողականությունն ինչպես

ազգային, այնպես էլ միջազգային հարաբերություններում շարունակում է հանդիսանալ արգելք զարգացման ճանապարհին:

Ահա այդ պատճառով ՄԱԿ-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնությամբ 1995թ. (այդ կազմակերպությունների 50-ամյակի տարին), հռչակեց հանդուրժողականության միջազգային տարի: Միջազգային տարին հնարավորություն ստեղծեց մշակել նոր մոտեցումներ, քննարկել և իմաստավորել հանդուրժողականության հին ու նոր հիմնախնդիրները: Առաջին անգամ շեշտը դրվեց մարդուն հանդուրժողականության ոգով դաստիարակելու վրա: Հանդուրժողականությունը դիտարկվեց որպես համամարդկային առաքինություն, մարդուն ներկայացվող քաղաքական-իրավական պահանջ, առանց որի անհնարին է ամեն մի հասարակության և ողջ մարդկության խաղաղ համագոյակցությունը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն մշակեց և իրագործեց բազմաթիվ ծրագրեր՝ նվիրված հանդուրժողականության քարոզչությանը, կրթությանը և արմատավորմանը: Մոլորակի վեց ականավոր նկարիչներ նկարեցին վեց դրոշներ՝ հանդուրժողականության խորհրդանիշներ: ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպանը դրանք ուղարկեց բոլոր պետություններին՝ որպես միլիոնավոր մարդկանց հանդուրժողականության հավերժական հիշեցում:

Այդ տարվա ընթացքում հանդուրժողականության, մշակույթների բազմազանության, մարդկանց միջև տարբերությունների, կրոնական և մշակութային երկխոսության հիմնահարցերը դարձան ավելի քան 50 տարածաշրջանային և մի-

ջազգային խորհրդակցությունների քննարկման առարկա: Այդ խորհրդակցություններում մշակվեցին հանդուրժողականության հասկացությունը և պահանջները, որոշվեցին հանդուրժողականության տարածման և աճող անհանդուրժողականության վերացման ռազմավարությունը: Այդ ջանքերն ավարտվեցին 1995թ. նոյեմբերի 16-ին Փարիզում Հանդուրժողականության սկզբունքների հռչակագրի ընդունմամբ, որն ստորագրեցին ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ 185 պետություններ:

Հռչակագիրը բնորոշում է հանդուրժողականությունը որպես ամեն մի մարդու, սոցիալական խմբի, պետության բարոյական պարտք, նրանց ներկայացվող քաղաքական և իրավական պահանջ: Հռչակագիրը մատնանշում է անհանդուրժողականության հաղթահարման միջոցառումների համակարգը: Այն միաժամանակ նոյեմբերի 16-ը հայտարարում է *Հանդուրժողականության միջազգային օր:*

§ 3. «Հանդուրժողականություն» և «անհանդուրժողականություն» հասկացությունները

1. «Հանդուրժողականություն» հասկացությունն օգտագործվում է մի շարք իմաստներով: Հանդուրժողականությունը փիլիսոփայություն է: Որպես այդպիսին այն հանդիսանում է հասարակական հարաբերությունների՝ իրենց կարծիքներով, համոզմունքներով, հավատով, դիրքորոշումներով և այլ հատկանիշներով տարբերվող մասնակիցների քաղաքակիրթ համագոյակցության բանաձև: Այդ գաղափարն առաջ է քաշվել հասարակական կյանքի որպես բազմազանության ներ-

դաշնակ, կայուն և հուսալի հարատևմանը նպաստելու համար: Ժամանակակից աշխարհը կազմող խոշոր ընդհանրությունները (օրինակ, պետությունները) իրենց էթնիկական, ազգային, կրոնական և այլ հատկանիշներով գերբարդ, բազմազան համակարգեր են, որոնցում մարդիկ հանդես են գալիս որպես տարբերվող խմբերի ներկայացուցիչներ: Հանդուրժողականությունը, նախ, ենթադրում է, որ անհատները, ինչպես նաև խմբերը իրավահավասար են: Երկրորդ, յուրաքանչյուր անհատ և խումբ ճանաչում և ընդունում է մյուս կողմի հատուկ կարծիքի, մտածողության, կամքի ու վարքագծի յուրահատկության իրավունքը: Հակառակ դեպքում միջանձնային, միջխմբային տարաձայնություններն ու հակամարտությունները, այսինքն՝ անհանդուրժողականությունը կտանի հասարակության կործանման: Ըստ Հանդուրժողականության սկզբունքների հռչակագրի.

- Հանդուրժողականությունը նշանակում է մեր աշխարհի մշակույթների հարուստ բազմազանության, մեր ինքնաարտահայտման ձևերի և մարդկային անհատականության արտահայտման եղանակների հարգանք, դրանց ընդունում և ճիշտ ընկալում:
- Հանդուրժողականությունը զիջում, ներողամտություն կամ բացասական վարքագծի խրախուսում չէ: Հանդուրժողականությունն ամենից առաջ ակտիվ վերաբերմունք է՝ ձևավորված մարդու համընդհանուր իրավունքների ու ազատությունների ճանաչման հիման վրա: Ոչ մի դեպքում հանդուրժողականությունը չի կարող ծառայել այդ հիմնական արժեքների նկատմամբ ոտնձգությունների արդարացմանը:

• Հանդուրժողականությունը պարտականություն է նպաստելու մարդու իրավունքների, բազմակարծության (այդ թվում նաև մշակութային), ժողովրդավարության և իրավակարգի հաստատմանը:

• Հանդուրժողականության հասկացությունը նշանակում է հրաժարում դոգմատիզմից, ճշմարտության բացարձակացումից և ենթադրում է միջազգային փաստաթղթերում ամրագրված մարդու իրավունքների վերաբերյալ նորմերի իրական հաստատում:

• Հանդուրժողականության դրսևորումը, որը համահունչ է մարդու իրավունքների հարգմանը, չի նշանակում հանդուրժող վերաբերմունք սոցիալական անարդարությանը, հրաժարում սեփական կարծիքից կամ զիջում այլոց համոզմունքներին: Հանդուրժողականությունը նշանակում է, որ յուրաքանչյուր ոք ազատ է ունենալու և պնդելու իր համոզմունքները և ճանաչում է այլոց նույնպիսի իրավունքը:

• Հանդուրժողականությունը նշանակում է, որ մարդիկ բնականից տարբերվում են իրենց արտաքին տեսքով, դիրքով, խոսքով, վարքագծով ու արժեքներով և իրավունք ունեն ապրել խաղաղ ու պահպանել իրենց անհատականությունը: Դա նաև նշանակում է, որ մի մարդու հայացքները չեն կարող պարտադրվել այլ մարդկանց:

Գաղափարներն ինքնաբերաբար չեն կենսագործվում, իրականության չեն վերածվում: Ամեն մի հասարակության և մարդկության առջև կանգնած կարևոր խնդիրներից մեկն էլ հանդուրժողականության գաղափարն իրականություն դարձնելն է:

Այդ խնդիրն իրագործելու համար Հանդուրժողականության սկզբունքների հռչակագիրը սահմանում է, որ այն ամեն մի մարդու, խմբի և պետության բարոյական պարտքն է և իրավական պարտականությունը: Սակայն միայն այս պահանջի ամրագրումը բավարար չէ հանդուրժողականության գաղափարն իրականության մեջ արմատավորելու համար: Այստեղից առաջանում է ևս մեկ խնդիր. Կրթության և դաստիարակության միջոցով հանդուրժողականությունը դարձնել անհատների և սոցիալական խմբերի մտածելակերպ, բարոյականություն, արժեքային կողնորոշում, այսինքն՝ ձևավորել հանդուրժողական մշակույթով օժտված անհատ:

Հանդուրժողականության մշակույթով օժտված անհատը և սոցիալական խմբերը որոշումներ ընդունելիս անպայմանորեն ելնում են «ես»-ի նկատմամբ «մենքի» առաջնայնության սկզբունքից: Հանդուրժողականության մշակույթը բարոյահոգևոր ընդունակությունների այնպիսի ամբողջություն է, որը ենթադրում է անբիծ հանդուրժողական վարքագիծ: Այդպիսի վարքագիծը պայմանավորվում է ոչ այնքան արտաքին գործոններով, օրինակ, սևամորթին վիրավորելու համար պատասխանատվության ենթարկվելու վախը, այլ գլխավորապես ներքին բարոյական շարժառիթներով: Ինչպես բարոյական անհատն է ամաչում ինչ-որ բարոյական նորմ խախտելուց (օրինակ, սուտ ասելուց, տկլոր փողոց դուրս գալուց), այնպես էլ հանդուրժողական մշակույթ ունեցող անձն է ամաչում անհանդուրժող, ագրեսիվ, չար լինելուց: Այդպիսի մարդու մոտ հանդուրժողականությունը դառնում է արժեք (նպատակ), ինչպես, օրինակ, սերը, ընկերությունը, որոնք ուղղոր-

դում են նրա անհատական (հետևաբար նաև խմբային) գիտակցությունն ու գործունեությունը:

Այսպիսով, հանդուրժողականությունն առաքինություն է, որը հնարավոր է դարձնում խաղաղությունը և նպաստում է պատերազմի մշակույթը խաղաղության մշակույթով փոխարինելուն:

2. Անհանդուրժողականությունը՝ որպես բարոյահոգեբանական երևույթ, բնական նախադրյալներ ունի, այսինքն՝ «ի բնե» հատուկ է մարդուն: Անհանդուրժողականությունը՝ որպես մարդու հոգեմտակերպի առանձնահատկություն, հասարակական կյանքում երկակի, հակասական դեր է կատարում: Մի կողմից, այն ունի կառուցողական, դրական ներգործություն: Լինել հանդուրժողական չի նշանակում համբերել և տանել ամեն ինչ: Ամենի հանդուրժումը՝ որպես անսկզբունքայնություն, կարող է տանել հասարակության հիմքերի քայքայմանը: Օրինակ, պետությունը չպետք է հանդուրժի և պատասխանատվության չենթարկի շահադիտական նկատառումներով սպանություն կատարողին կամ ահաբեկչին: Չի կարելի հանդուրժել և հաշտվել կեղծ, ոչ ճշմարիտ, «գիտական ներկայացվող» եզրահանգումների հետ: Այս երևույթների նկատմամբ անհանդուրժողականությունն ունի դրական հասարակական նշանակություն: Մյուս կողմից, անհանդուրժողականությունը քայքայիչ, հակահասարակական դեր է կատարում, որովհետև հանգեցնում է հասարակական կյանքում բարոյահոգեբանական մթնոլորտի վատթարացմանը, իսկ որպես դրա հետևանք՝ բռնության ու զոհերի: Օրինակ, ռասիստական գաղափարախոսության

տարածումը՝ որպես անհանդուրժողականության դրսևորման ձև, նպաստում է այդ հողի վրա կատարվող բռնությունների և սպանությունների աճին: Ուրեմն, անհանդուրժողականությունը երբեմն կարող է կառուցվել կեղծ, հակամարդկային արժեքների վրա: Հենց այդ կերպ դրսևորվող անհանդուրժողականությունն է վտանգում մարդկային հասարակության գոյությունը: Ինչու՞, որովհետև այն նախադրյալ է հարձակողական գործողությունների անցնելու համար: Այդպիսով, ամբողջ վտանգը հանգում է նրան, որ մարդիկ կամ մարդկանց խմբերը, ում հատուկ է կեղծ կամ խեղաթյուրված հիմքեր ունեցող անհանդուրժողականությունը, միշտ պատրաստակամ են վիրավորել, ճնշել, հարձակման ենթարկել նրանց, ովքեր դուր չեն գալիս իրենց: Հետևաբար, անհանդուրժողականությունը հարձակողական, հակամարտ վարքագծին անցնելու, պատերազմի և բռնության առաջին նախադրյալն է:

Անհանդուրժողականությունը բացասական, մերժողական դիրքորոշում կամ վերաբերմունք է՝ ուղղված այլ մարդուն կամ մարդկանց խմբին: Անհանդուրժողականությունը բխում է սուբյեկտիվ, միակողմանի համոզմունքից, թե ինքդ կամ քո խումբը (այդ թվում նաև էթնոսը), դավանանքի համակարգը կամ ապրելակերպը, քաղաքակրթությունը գերազանցում են մյուսներին: Այդպիսի մտածելակերպի շրջանակներում սեփական ամեն ինչ երևում է սրբի տեսքով, իսկ ամեն օտարը՝ սատանայի կերպարով: Այդպիսի ինքնագիտակցությունը կեղծ է, չի արտացոլում իրականությունը:

Հանդուրժողականությունը կամ անհանդուրժողականությունը համընդհանուր հասկացություններ չեն: Դրանք ու-

նեն կոնկրետ բովանդակություն կոնկրետ իրադրության մեջ: Հանդուրժողականությունն անվերջ չէ: Այն ունի սահմաններ: Օրինակ, չի կարելի հանդուրժել սոցիալական անարդարությունները կամ, ասենք, ձեր կյանքի, առողջության, սեփականության դեմ ոտնձգությունը: Անվերջ հանդուրժողականությունը ոտնձգողի կողմից կարող է ընկալվել որպես թուլության, պարտության վկայություն և նպաստել ոտնձգության աճին: Դրա համար դուք օժտված եք օրենքով սահմանված բոլոր եղանակներով պաշտպանվելու, այդ թվում նաև անհրաժեշտ պաշտպանության իրավունքով:

Բացասական, պատերազմի մշակույթի տարր հանդիսացող, խաղաղության մշակույթը մերժող անհանդուրժողականությունն արտահայտվում է այլ մարդուն կամ մարդկանց խմբերին արհամարելով, նրանց ծայրահեղ անբարենպաստ գնահատելով: Մենք արտահայտում ենք մեր անհանդուրժողականությունն ամեն անգամ, երբ ասում ենք, որ մեզ դուր չի գալիս որևէ մեկը: Այլ կերպ ասած, անհանդուրժող անհատն այն մարդն է, որը սովորաբար պատրաստակամություն է դրսևորում խոսքով կամ որևէ այլ կերպ բացասական գնահատական տալ այլ մարդկանց, ցուցաբերել թշնամանք նրանց նկատմամբ՝ ինչ-ինչ հիմքերից ելնելով:

Անհանդուրժողականությունը՝ որպես մարդու հոգեբանական դիրքորոշում (գերազանցության համոզմունք), սոցիալապես բազմատարր, բազմաէթնոս, բազմակրոն և բազմամշակութային հասարակություններում կարող է առաջ բերել մի շարք բացասական սոցիալ-կենցաղային հետևանքներ՝ քաղաքավարության պակաս, մյուսների նկատմամբ դրսևորվող

արհամարանք և թշնամություն, մարդու իրավունքների խախտումներ, բռնություն և զինված բախումներ: Ամենաահավոր երևույթն անհանդուրժողականության ներթափանցումն է քաղաքական, պետական ոլորտ, որը որպես հետևանք կարող է առաջ բերել զանգվածային բռնություններ, ռասայական խտրականություն, ցեղասպանություն: Բոլոր նշված դեպքերում մերժվում է մարդ էակի՝ որպես հիմնարար և բարձրագույն արժեքի, գաղափարը:

Անհանդուրժողականությունն «ախտանիշ» է, որն իր մեջ մարդկային հասարակությանը սպառնացող այնպիսի սոցիալական «հիվանդության» լուրջ հնարավորություն է պարունակում, ինչպիսին է բռնությունը: Այս «հիվանդությունից» հասարակությունը, հասարակական բարեկեցությունը պաշտպանելու համար անհրաժեշտ է բոլոր ջանքերի միավորում: Համընդհանուր խաղաղություն հաստատելու համար անհրաժեշտ է նախ և առաջ խաղաղություն հաստատել մեզանում, զերծ մնալ նախապաշարմունքներից և այնուհետև հաստատել արդարության, խորը հարգանքի մթնոլորտ հանդեպ տարբեր անհատների, կարեկցանքով վերաբերվել նրանց, ովքեր մեր անմիջական շրջապատի մեջ չեն մտնում:

§ 4. Անհանդուրժողականության դրսևորումները և հետևանքները

Անհանդուրժողականության «ախտանիշներ» կամ հատկանիշներ կարող են դիտվել նախապաշարմունքը, կանխակալ վերաբերմունքը (օրինակ, եթե մուսուլման է, ուրեմն ահաբեկիչ է), խտրականությունը, սոցիալ-տնտեսական անհաջողությունների մեջ որպես քավության նոխազ ինչ-որ մեկին մեղադրելը (օրինակ, հրեաներին), զրպարտությամբ կամ նվաստացնող լեզվական արտահայտություններով տարբեր ռասայական, ազգային, մշակութային և սեռական խմբերին ստորացնելը, վերջիններիս ծիծաղի առարկա դարձնելը կամ վիրավորելը, ինչպես նաև արհամարելը, նրանց գոյության փաստի հետ չհաշտվելը և չընդունելը, նրանց նկատմամբ վախեցնելու, ահաբեկելու քաղաքականություն իրականացնելը: Այդպիսի հատկանիշներից են նաև տարբեր ռասայական, ազգային, մշակութային խմբերին պատկանող կամ նրանց համար արժեք ներկայացնող մշակութային և կրոնական խորհրդանիշերի ու կառույցների պղծումը կամ վնասումը, ինչպես նաև այդ խմբերին պատկանող անձանց հարկադրաբար սեփականությունից զրկելը, որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելը, հասարակական կյանքին մասնակցելու իրավունքից զրկելը, հասարակությունից փաստացի դուրս մղելը կամ առանձնացնելը, նշված խմբերին պատկանող անձանց իրավունքների սահմանափակումը կամ իրավունքներից զրկելը, նրանց նկատմամբ բռնության կիրառումը՝ ընդհուպ մինչև ֆիզիկական ոչնչացումը:

Ըստ անհանդուրժողականություն դրսևորող սոցիալական սուբյեկտների բնույթի և առանձնահատկությունների, անհանդուրժողականությունը կարող է լինել.

1) միջանձնային, օրինակ՝ միմյանց նկատմամբ անհանդուրժողական վարքագիծ են դրսևորում երկու դպրոցականներ,

2) որևէ անհատի և սոցիալական խմբի միջև, օրինակ՝ երբ դասարանցիներից որևէ մեկը հակադրել է իրեն ողջ դասարանին կամ ընդհակառակը,

3) միջխմբային, այսինքն՝ տարբեր սոցիալական խմբերի միջև: Սոցիալական խմբերը կարող են լինել մեծ և փոքր, օրինակ, դասարանները, կուսակցությունները, ունևորները և չունևորները (դասակարգեր), կանայք և տղամարդիկ, էթնիկական խմբերը (ազգեր և ժողովուրդներ), ռասաները, քաղաքակրթությունները և այլն: Օրինակ, մեծ քաղաքակրթությունները (արևելյան և արևմտյան, քրիստոնեական և մուսուլմանական և այլն), որ ձևավորվել են հազարամյակների ընթացքում, դեռ երկար են գոյատևելու: Հետևաբար, դրանք, չնայած նրանց միջև տարբերություններին, անհրաժեշտաբար պետք է համագոյակցեն: Արդի աշխարհում պետք է կանխվեն ցանկացած քաղաքակրթության փորձերը գերիշխել մնացածների վրա, ինչպես նաև որևէ քաղաքակրթության համոզվածությունը, որ իր սկզբունքներն ու արժանիքները միակ ճշմարիտն են: Երկրագնդի վրա չկան մյուսներին գերազանցող քաղաքակրթություններ: Կան որևէ քաղաքակրթության սկզբունքներ, գնահատականներ և կրոններ, որոնք ընդունելի են դրանցում ծնվածների համար, բայց ոչ

մնացած մարդկության համար,

4) միջպետական, երբ անհանդուրժողականության մթնոլորտը տարածվում է առանձին պետությունների միջև կամ պետությունների երկու տարբեր խմբավորումների միջև:

Կախված մարդու կենսագործունեության ոլորտներից՝ անհանդուրժողականությունը կարող է դրսևորվել ընտանիքում, կենցաղում, աշխատանքային հարաբերություններում, քաղաքական-պետական, մշակութային, կրոնական և այլ ոլորտներում: Օրինակ, քաղաքական-պետական ոլորտում անհանդուրժողականությունն առկա է, երբ պետությունն անհանդուրժող և խտրական վերաբերմունք է դրսևորում իր սեփական քաղաքացիների նկատմամբ, որոնք համաձայն չեն կառավարող վերնախավի հայացքների կամ քաղաքականության հետ, կամ էլ երբ պետության ներսում առանձին քաղաքական խմբերը, կուսակցությունները դուրս են գալիս ռազմաշունչ, մարտնչող պայքարի, երբ քաղաքական մեծամասնությունը բացասաբար է վերաբերում փոքրամասնությանը, բռնանում նրա վրա՝ պարտադրելով իր կարծիքը:

Անհանդուրժողականությունը, որպես կանոն, հանգեցնում է մի շարք հետևանքների.

➢ ***Խտրականությունը*** որոշակի անձանց, կազմակերպությունների կամ պետությունների իրավունքների սահմանափակումն է կամ դրանցից զրկելը՝ հիմք ընդունելով ռասայական, ազգային, սեռային, պետական պատկանելիությունը, ինչպես նաև գույքային դրությունը, քաղաքական և կրոնական համոզմունքները և այլն: Այսպես, քաղաքական խտրականության տարածված տեսակներից է ընտրական իրա-

վունքներից զրկելը: Շատ ավելի տարածված է ռասայական խտրականությունը:

➢ ***Սեռային խտրականությունն*** արտահայտվում է տղամարդու համեմատ կնոջ իրավունքների սահմանափակմամբ, հասարակական և պետական կյանքին կնոջ մասնակցության արգելմամբ կամ սահմանափակմամբ:

➢ ***Ագրեսիվ ազգայնամոլությունը*** ենթադրում է առանձին ազգերի առավելությունը, գերակայությունը մյուս ազգերի նկատմամբ:

➢ ***Բռնի ասիմիլացիան*** գերիշխող ազգի կողմից վարվող հատուկ քաղաքականություն է, որի նպատակն է ձուլել որևէ էթնիկական խումբ: Արդյունքում վերջինս վերանում է կամ էլ կորցնում է իր ազգային առանձնահատկությունները:

➢ ***Ցեղասպանությունը*** դրսևորվում է այնպիսի գործողություններում, որոնք ուղղված են որևէ ազգային, ռասայական, էթնիկական կամ կրոնական խմբի լրիվ կամ մասնակի վերացմանը (այդ խմբերի անդամների սպանություն, նրանց ծանր մարմնական վնասվածքների կամ մտավոր խանգարումների պատճառում, մանկածնության կանխում և այլն):

➢ ***Հրեափեցությունը (հակասեմիտիզմ)*** արտահայտվում է հրեական ազգությանը պատկանող անձանց նկատմամբ թշնամական վերաբերմունքի մեջ:

➢ ***Քսենոֆոբիան (օտարափեցություն)*** արտահայտվում է օտարերկրացիների (ոչ յուրայինների) նկատմամբ ատելության և վախի ձևով: Շատ էթնոսներում «օտարների» նկատմամբ ատելությունը դաստիարակվում է մանկուց: Օրինակ, արաբական մի ասացվածք ասում է. «Ես դեմ եմ իմ եղ-

բորը, ես և իմ եղբայրը դեմ ենք մեր հորեղբորորդուն: Մենք՝ ես, եղբայրս և հորեղբորորդիս դեմ ենք բոլոր օտարներին»: Օտարները միշտ դիտարկվում են բացասական բնութագրերով և համարվում են վտանգի աղբյուր: Քսենոֆոբիայով տառապող էթնոսները կամ խմբերը օտարների նկատմամբ կարող են դիմել ներգործության ցանկացած ձևի և միջոցի, որոնք անթույլատրելի են յուրայինների շրջանակում: Քսենոֆոբիայի սուբյեկտը զուրկ է բնական իրավունքներից, նրա նկատմամբ չեն գործում ոչ մի բարոյական և իրավական պարտականություններ:

➢ ***Քաղաքական հետապնդումները*** ենթադրում են քաղաքական գաղափարների բաց և ազատ քննարկման ու տարածման արգելում, ազատ և արդար ընտրությունների բացառում, խոսքի ազատության սահմանափակում, քաղաքական այլախոհության համար պատասխանատվություն:

➢ ***Մարգինալացումն*** արտահայտվում է գործողություններում, որոնց արդյունքում մարդը, մարդկանց որոշակի խմբերը կամ էթնոսները հարկադրաբար կտրվում և օտարացվում են իրենց ավանդական էթնիկական, ազգային, կրոնաբարոյական, քաղաքական արժեքներից կամ էլ չեն կարողանում յուրացնել կամ հարմարվել իրենց շրջապատող «օտար» մշակույթի արժեքներին: Մարգինալացման հետևանքն օտարվածության զգացումի և ագրեսիվության աճն է անձանց կամ սոցիալական խմբի մոտ, որը հղի է հասարակական մեծ վտանգավորությամբ:

➢ ***Ֆաշիզմը*** դրսևորվում է ժողովրդավարական ազատությունների ժխտման, բազմակարծության և բազմազանության մերժման, ինչպես նաև անհատների նկատմամբ ընդհանուր վերահսկողություն սահմանելու ձևով:

➢ ***Կրոնական մոլեռանդությունն*** արտահայտվում է որոշակի դավանանքի պարտադրմամբ և դրա հետ կապված ծիսակատարություններին հասարակության բոլոր անդամներին հարկադրաբար մասնակից դարձնելով, կրոնական խտրականություն սահմանելու և այլ ձևերով: Կրոնական անհանդուրժողականության հողի վրա միջնադարում տեղի են ունեցել բազմաթիվ պատերազմներ: Մեր օրերում ևս որոշ կրոններ կամ կրոնական աղանդներ մարտնչող են տրամադրված այլահավատների կամ այլ աղանդների նկատմամբ:

➢ ***Ռասայական խտրականությունը*** մարդու իրավունքների սահմանափակումը կամ դրանցից զրկելն է ռասայական պատկանելության հիմքով: Ռասայական խտրականության ձևերն են ապարտհեյդը, սեգրեգացիան և այլն:

➢ ***Ապարտհեյդը*** ռասայական խտրականության և սեգրեգացիայի քաղաքականություն է, որն ուղղված է որևէ ռասայական խմբի կողմից մյուս խմբի նկատմամբ գերիշխանություն հաստատելուն և նրան ճնշելուն ու շահագործելուն:

➢ ***Սեգրեգացիան*** ռասայական խտրականության ծայրահեղ ձևերից մեկն է, երբ սևամորթ կամ մաշկի այլ գույն ունեցող բնակչությունն առանձնացվում է սպիտակամորթներից: Այն կիրառվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում զուգահեռ՝ սևամորթների համար առանձին, սպիտակամորթների համար առանձին հիմնարկություններ կամ բաժանմունքներ ստեղծելու ճանապարհով: Օրինակ, սրճարանը

կամ ռեստորանը նախատեսված է միայն սպիտակամորթների համար: Երբեմն կիրառվում է նաև բնակավայրն ազատորեն ընտրելու արգելքը:

➢ ***Շահագործումը*** նշանակում է մարդկանց աշխատանքի դիմաց անարդարացի հատուցում, ինչպես նաև բնական պաշարների աննպատակ և անխնա սպառում:

➢ ***Իմպերիալիզմը*** ենթադրում է մեկ կամ մի քանի ժողովուրդների ենթարկումն իմպերիալիստական տերություններին՝ կախյալ կամ գաղութացված ժողովրդի կամ ժողովուրդների հարստությունը և բնական պաշարները վերահսկելու նպատակով: Տնտեսական գերիշխանությունը լրացվում է իմպերիալիստական տերությունների ամենաիշխանությամբ՝ քաղաքական, գաղափարախոսական, տեղեկատվական և հասարակական կյանքի այլ ոլորտներում: Իմպերիալիստական երկրների տնտեսական և ուժային մենաշնորհների հետևանքով խախտվում է պետությունների իրավահավասարության սկզբունքը և նախադրյալներ են ստեղծվում գերիշխող երկրների՝ մնացածների հաշվին գոյատևելու համար: Միջազգային ոլորտում ստեղծում են համադաշնություններ, որոնք կազմավորվում են «յուրայիններին» միավորելու միջոցով:

§ 5. Անհանդուրժողականության հաղթահարման և դրա դեմ պայքարի միջոցները

Անհանդուրժողականությունն ուղեկցել է մարդկային հասարակությանը նրա զարգացման պատմության ամբողջ ընթացքում՝ հանդես գալով որպես պատերազմների, կրոնական և գաղափարական հողի վրա ծագող լարվածության ու բախումների հիմնական պատճառ: Չնայած անցած դարի վերջին տասնամյակում տեղի ունեցած արմատական քաղաքական փոփոխություններին, «սառը պատերազմի» դադարին, այնուամենայնիվ մարդկությունը չկարողացավ ձերբազատվել անհանդուրժողականություն ծնող գործոններից: Մեր օրերում նույնպես էթնիկական, մշակութային, կրոնական և լեզվական առանձնահատկությունները կարող են հանդիսանալ անհանդուրժողականության աղբյուր, ինչի ապացույց են երկրագնդի տարբեր հատվածներում տեղի ունեցող միջէթնիկական և միջկրոնական խոշորամասշտաբ բախումները: Աշխարհը, հակառակ սպասելիքների, դարձել է ավելի բախումնային, ինչը ստիպում է մարդկությանը խաղաղության մշակույթի, հանդուրժողականության և բռնության մերժման փիլիսոփայությունից անցնել դրանց կիրառմանը, դաստիարակությանը իրականություն դարձնելուն: Փիլիսոփայություն, որը չունի երկընտրանք: Հանդուրժողականության դիրքորոշման, հավատ-հանդուրժողականության, բարիդրացիության, խաղաղասիրության, հոգեմտակերպի և ապրելակերպի արմատավորման, ձևավորման, զարգացման համար անհրաժեշտ է ցուցաբերել համակարգային մոտե-

ցում: Անհանդուրժողականության հաղթահարումը բարդ և երկարատև գործընթաց է, որը արդյունավետ է մի շարք գործոնների, պայմանների կամ նախադրյալների առկայության դեպքում:

Իրավական նախադրյալ.

Իրավական կարգավորումը, մարդկանց և խմբերին հարկադրանքի կիրառման սպառնալիքով պարտադրելով նորմատիվ, օրինահպատակ վարքագիծ, դրանով իսկ հասարակական կյանքում հաստատում է կայուն, քաղաքակիրթ կարգ՝ դուրս մղելով անհանդուրժողականության բոլոր դրսևորումները: Քաղաքակրթության համընդհանուր սկզբունքների շրջանակներում կիրառվող հարկադրանքը կանխում է հասարակական խմբերի փոխոչնչացումը: Որպես ընդհանուր նախադրյալ, այն իր հերթին տարանջատված է երկու առանձին նախադրյալների՝ միջազգային իրավական և ներպետական (ազգային) իրավական: Ինչպես միջազգային իրավունքը, այնպես էլ յուրաքանչյուր պետության օրենսդրությունը պետք է ամրագրի և կիրառի մարդու իրավունքների, դրանց պաշտպանության վերաբերյալ համընդհանուր ճանաչում գտած նորմերը: Եվ միջազգային հանրությունը և պետությունները պարտավոր են ընդունել այնպիսի նորմեր, որոնք կնպաստեն հասարակական կյանքում հանդուրժողականության հաստատմանը, հնարավորություններ կստեղծեն անհանդուրժողականության հաղթահարման, դրա դրսևորման ձևերի վերացման համար՝ սահմանելով իրավական պատասխանատվություն:

Կրթական նախադրյալ.

Իրավական-օրենսդրական նախադրյալը թեև կարևոր, սակայն միակ պայմանը չէ անհանդուրժողականության հաղթահարման համար: Հանդուրժողական գիտակցությունը և կենսական դիրքորոշումը բնական օժտվածություն չէ: Այն կարելի է ամրակայել միայն դաստիարակության միջոցով: Հասարակության, էթնոսի և այլ խմբերի անհանդուրժողականությունը նրանց անդամների անհանդուրժողականության գումարն է: Հաճախ անհանդուրժողականության, ագրեսիվության, չարության պատճառ են հանդիսանում այլ ազգերի, կրոնների, մշակույթների վերաբերյալ տեղեկությունների պակասը կամ իսպառ բացակայությունը, վախը անհայտի, տարբերի նկատմամբ, այսինքն՝ կրթության անբավարար մակարդակը: Ուստի կարևոր է շեշտը դնել կրթության որակական կողմի բարելավման վրա՝ զգալի ջանքեր գործադրելով հանդուրժողականության և մարդու իրավունքների ուսուցման գործում: Դրա համար անհրաժեշտ է մշակել և իրականացնել հանդուրժողականության ուսուցման ծրագրեր ինչպես դպրոցներում, այնպես էլ այլ ուսումնական հաստատություններում՝ ընդգրկելով մարդկանց տարբեր տարիքային խմբեր: Կրթությունն ինքնանպատակ չէ: Այն կոչված է նպաստել ձևավորելու հանդուրժողականության մշակույթ, երբ խաղաղությունը և հանդուրժողականությունը դառնում են մարդկանց և սոցիալական խմբերի արժեքային կողմնորոշման բաղադրատարր:

Տեղեկատվական նախադրյալ.

Անհանդուրժողականությունն իրենից առավել մեծ վտանգ է ներկայացնում, երբ այն օգտագործվում է առանձին անհատների կամ անհատների խմբերի քաղաքական կամ տնտեսական, կրոնական ամբիցիաները բավարարելու համար: Նման դեպքերում իրենց պահանջների հիմնավորման համար այդ անհատները սովորաբար օգտագործում են կեղծ փաստարկներ, կեղծ վիճակագրական տվյալներ, ինչպես նաև դիմում են ապատեղեկատվության: Անհանդուրժողականության այսօրինակ դրսևորումների դեմ պայքարելու համար անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ՝ ուղղված մամուլի ազատության կայացմանն ու զարգացմանը, որպեսզի հասարակության անդամները կարողանան տարբերել կեղծիքը իրական փաստերից: Այլ կերպ ասած, անհանդուրժողականության հաղթահարման նախադրյալներից մեկն էլ ազատ տեղեկատվական համակարգի և տեղեկատվության մատչելիությունն է, որի հիման վրա հասարակայնությունը կկարողանա տարբերել կեղծիքները փաստերից:

Այլ նախադրյալներ.

Իրավական, կրթական և տեղեկատվական նախադրյալներից բացի, հանդուրժողականության հաստատման համար կարևոր նշանակություն ունեն ժողովրդավարական ինստիտուտները, մարդու իրավունքները և դրանց երաշխիքները: Բայց դրանք ընդհանուր, համահասարակական բնույթի նախադրյալներ են, որոնք պետք է լուծվեն պետության ու հասարակական կազմակերպությունների կողմից: Պետք է նկատի ունենալ, որ շատ ընդհանուր հիմնախնդիրների լուծումնե-

ը պայմանավորված են անհատական գործոնով: Անհանդուրժողականության դեմ պայքարը մեզանից ամեն մեկի բարոյական պարտքն է, իսկ դրա միջոցներն են բռնության մերժումը, անհանդուրժողականության զոհերի հետ համերաշխության ցուցադրումը, ատելության հրահրմանն ուղղված քարոզչության վարկաբեկումը և այլն:

§ 6. Անհանդուրժողականության ցուցանիշները հասարակական կյանքում

Հասարակական կյանքում հանդուրժողականության առկայությունը կամ բացակայությունը պարզելու համար մշակված են ցուցանիշներ, որոնց օգնությամբ նաև դուք կարող եք որոշել, թե որքանով է հանդուրժողական մեր հասարակությունը՝

Լեզվական ցուցանիշ

Հանդուրժողական է այն հասարակությունը, սոցիալական խումբը, որի լեզվում բացակայում են խտրական, էթնիկական, սեռային պիտակավորումները: Բացի այդ, ԶԼՄ-ները որոշակի դեպքեր կամ մարդկանց վերաբերյալ տեղեկատվություն մատուցելիս զերծ են մնում այնպիսի բառակապակցություններ օգտագործելուց, որոնք վկայում են կանխակալ, միակողմանի, վիրավորական, նվաստացնող վերաբերմունքի մասին: Եթե տվյալ երկրում կան փոքրամասնություններ, ապա խրախուսվում նրանց լեզվի պահպանությունը և զարգացումը:

Իրավահավասարության ցուցանիշ

Հանդուրժողականությունն առկա է այնտեղ, որտեղ կա իրավահավասարություն հասարակության բոլոր անդամների միջև: Յուրաքանչյուր ոք ունի սոցիալական բարիքներից օգտվելու, ինչպես նաև պետական կամ հասարակական գործերին մասնակցելու հնարավորություն՝ անկախ սեռից, ռասայական, ազգային, կրոնական, սոցիալական պատկանելությունից և այլն: Իրավահավասարությունը ենթադրում է բոլոր քաղաքացիների իրավունքների և պարտականությունների, սոցիալական ազատության հավասար չափ: Իրավահավասարությունը, որպես հանդուրժողականության ցուցանիշ ենթադրում է նաև անձանց օրենքի առջև պատասխանատվության հավասար աստիճան՝ բացառելով նրանց փաստական տարբերությունները, օրինակ, մաշկի գույնը, լեզուն և այլն: Իրավահավասարությունը բացառում է նաև օրենքով վերապահված արտոնությունները, առավելություններն իրավական վեճերի մասնակիցների միջև:

Սոցիալական ցուցանիշ

Հանդուրժողական հասարակությունում սոցիալական հարաբերությունները կառուցվում են հասարակական համերաշխության, աջակցության և մարդկային արժանապատվության փոխադարձ հարգման հիման վրա: Հանդուրժողական հասարակության բոլոր անդամների նվազագույն սոցիալական պահանջմունքները պետք է ապահովվեն, որպեսզի կանխվի նրանց սոցիալական-ունեցվածքային բևեռացումը: Եթե մարդը չունի բնակարան կամ սոված է, ապա շատ դժվար է նրան հանդուրժողականության պահանջ ներկայացնել: Այդպիսի մարդն ավելի շատ կհետևի գոյատևման բնազդին, քան համամարդկային սկզբունքներին ու սուրբ պատգամներին:

Քաղաքական ցուցանիշ:

Հանդուրժողական է այն հասարակությունը, որում քաղաքական գաղափարախոսությունները չեն քարոզում բռնություն, իսկ քաղաքական գործընթացները պարտադիր կերպով կրում են կառուցողական, ժողովրդավարական բնույթ: Քաղաքական մեծամասնությունը որոշումները կայացնելիս նկատի է ունենում նաև փոքրամասնության կարծիքը: Դրա համար ժողովրդավարական երկրներում օրենքով ամրագրվում են քաղաքական փոքրամասնությունների իրավունքները:

Ազգային և այլ փոքրամասնությունների կարգավիճակի ցուցանիշ

Հանդուրժողական հասարակության մեջ պայմաններ են ստեղծվում ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնատիպության ու լեզվի պահպանման համար: Ազգային արժանապատվության և իրավունքների նկատմամբ առկա է հարգանքի մթնոլորտ: Առաքինի և հանդուրժող է մեծամասնություն կազմող այն ազգը, որն օգնում է փոքր ժողովուրդներին պահպանել իրեն, իր լեզուն և մշակույթը: Հանդուրժողականության մշակույթի պայմաններում տարբեր ժողո-

վուրդների էթնիկական, լեզվական և մշակութային առանձնահատկությունները, մաշկի գույնը չեն կարող դառնալ հասարակական բախումների և հակամարտությունների աղբյուր:

Կրոնական ցուցանիշ

Ամենից հաճախ անհանդուրժողականությունը զարգանում է կրոնական հողի վրա: Պատճառը որոշ կրոնների և կրոնական ուղղությունների մարտնչող տրամադրվածությունն է այլահավատների նկատմամբ: Հանդուրժողական հասարակության մեջ մարդիկ իրավահավասար են՝ անկախ կրոնի նկատմամբ իրենց վերաբերմունքից: Այստեղ արգելվում է քաղաքացիների իրավունքների սահմանափակումը կրոնական կամ աղանդավորական պատկանելության շարժառիթներով, կրոնական հողի վրա թշնամության ու ատելության հրահրումը: Հանդուրժող հասարակությունում կրոնական կամ աթեիստական կազմակերպություններն առանձնացված են պետությունից: Աշխարհիկ բնույթ ունի ոչ միայն պետությունը, այլև պետական կրթական համակարգը: Հանդուրժողական հասարակական մշակույթը ենթադրում է բոլոր կրոնների և կրոնական կազմակերպությունների հավասարություն օրենքի առջև, ինչպես նաև բռնություն, անհանդուրժողականություն և այլ հակամարդկային արժեքներ քարոզող կրոններն արգելված են:

Երկխոսության ցուցանիշ

Հանդուրժողական է այն հասարակությունը, որում հասարակական բոլոր հիմնախնդիրները լուծվում են հասարակության բոլոր անդամների, սոցիալական, մշակութային, կրոնական, քաղաքական խմբերի երկխոսության ու մասնակցության հիման վրա: Հանդուրժողական հասարակությունն իրավիճակային, միասնական ռազմավարությունը մշակում է բոլոր դիրքորոշումների հաշվառմամբ: Լինելով կառուցողական աշխարհայացք՝ հանդուրժողականությունը հնարավորություն է տալիս բազմազան խմբերին տեսնել ոչ միայն իրենց զատող հանգամանքներն ու գործոնները, այլև իրենց միավորող ընդհանուր շահերի կամուրջը: Օրինակ, ժամանակակից աշխարհում միմյանց հետ շփվում և երկխոսության մեջ են մտնում լրիվ տարբեր մշակույթներ և մշակութային ավանդույթներ: Մարդկությունը պետք է սովորի մշակութային երկխոսություն վարել: Ոչ ոք չպետք է բացարձակացնի իր մշակութային արժեքները: Մարդուն պետք է դաստիարակել մշակութային հանդուրժողականության, տարբեր մշակույթների նկատմամբ հարգանքի ոգով:

§ 7. Ժողովրդավարության ու հանդուրժողականության խորհուրդներ

Ժողովրդավար լինելու, աննհանդուրժողականությանը դիմակայելու, այն հաղթահարելու համար անհրաժեշտ պայմաններից մեկն էլ ամեն մի անհատի կողմից հիմնախնդրի

անձնական գիտակցումն է: Ուրեմն մինչև հանդուրժողականության դրական կողմերի կամ անհանդուրժողականության վտանգավոր հետևանքների մասին դատողություններ անելը, եկեք խորհենք, թե ինքներս հանդուրժողական ենք արդյո՞ք, թե՞ ոչ: Արդյո՞ք մենք մոլեռանդ չենք, անտեղի չե՞նք պիտակավորում մարդկանց կամ անհամ կատակներ անում՝ ելնելով նրանց մշակութային, ռասայական, ազգային, սեռային, քաղաքական, ունեցվածքային և այլ հատկանիշներից, քավության նոխազ չենք դարձնում նրանց: Գիտակցո՞ւմ ենք արդյոք մենք, որ անհանդուրժողականության և բռնության ամեն մի վարքագիծ սկիզբ է դնում անվստահության ու բռնության կախարդական շրջանակի: Ժողովրդական իմաստնությունն ասում է. «Ինչ ցանեցիր, այն էլ կհնձես»: Անհանդուրժողականությունը և բռնությունն առաջ են բերում դիմադրություն, զոհերին ստիպում են որոնել վրեժի ճանապարհ: «Քանի որ պատերազմները սկսվում են մարդկանց ուղեղներում, ապա ուղեղներից էլ պետք է սկսվի խաղաղության կերտումը»:

Խորհելով այս մասին՝ փորձիր յուրացնել հանդուրժողական վարքագծի հետևյալ կանոնները.

✓ *Հարգի՛ր յուրաքանչյուր և բոլոր մարդկանց բոլոր իրավունքները, արժանապատվությունը և կյանքը:*

✓ *Պահպանի՛ր գործող օրենքները և ենթարկվիր օրինական իշխանություններին:*

✓ *Զեռնպահ մնա՛ բռնությունից կամ բռնություն կիրառելու սպառնալիքից՝ որպես նպատակներին հասնելու միջոց:*

✓ *Դրսևորիր հանդուրժողականություն այլոց նկատմամբ: Նրանք ունեն նույն հավակնությունները և իրավունքները, ինչ դու:*

✓ *Ի՞նչ է ժողովրդավարությունը: Միություն. այո՛, միօրինակություն. ո՛չ: Բազմազանություն. այո՛, բռնություն. ո՛չ: Կրքոտ վեճեր. այո՛, ուժ և ենթարկում. ո՛չ:*

✓ *Հանդուրժողականությունը ոչ զիջում է, ոչ էլ անտարբերություն: Այն մյուսներին գիտենալն ու հասկանալն է:*

✓ *Անհանդուրժողականությունն ագրեսիվության, մոլեռանդության, չարության, դյուրաբորբոքության հականիշն է:*

✓ *Հանդուրժողականությունն անսկզբունքայնություն չէ: Դա այլի, տարբերությունների և առանձնահատկությունների՝ որպես ամբողջի մասերի խորը գիտակցումն է:*

✓ *Հասարակական խաղաղություն և հանդուրժողականություն հաստատելու համար առաջին հերթին խաղաղություն ու հանդուրժողականություն հաստատի՛ր քեզանում, դիմակայի՛ր քո սեփական նախապաշարմունքներին ու կանխակալությանը, քո գերազանցության զգացումին:*

✓ *Ժողովրդավարությունը և հանդուրժողականությունը հարմարվողականություն չեն:*

✓ *Մենք կարող են սովորել և զարգանալ մյուսներին ունկնդրելով:*

✓ *Ոչ ոք չգիտե ամեն ինչի պատասխանը:*

✓ *Գոյություն ունեն աշխարհին նայելու և այն մեկնաբանելու մեկից ավելի մոտեցումներ:*

✓ *Սովորե՛ք ամեն ինչին նայելու ոչ միայն ձեր, այլ նաև ուրիշ մարդու տեսանկյունից:*

✓ *Ժողովրդավարությունն ամենից առաջ ակտիվ վերաբերմունք է՝ ձևավորված մարդու իրավունքների ու ճանաչման*

հիման վրա:

✓ *Ժողովրդավարությունը պարտականություն է՝ նպաստելու մարդու իրավունքների, բազմակարծության, իրավակարգի հաստատմանը:*

✓ *Ժողովրդավարությունը նշանակում է, որ յուրաքանչյուր ոք ազատ է ունենալու և պնդելու իր համոզմունքները և ճանաչում է այլոց նույնպիսի իրավունքը:*

✓ *Ժողովրդավարության մերժմամբ մերժվում է մարդ էակի՝ որպես հիմնարար և բարձրագույն արժեքի գաղափարը:*

ԳԼՈՒԽ 5. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

§1. Ժողովրդավարության ֆենոմենոլոգիայի հայեցակարգային հիմքերը

Մարդկությունն իր գոյության ամբողջ ժամանակահատվածում մշտապես գտնվել է այնպիսի օպտիմալ պետական իշխանության և կառավարման համակարգի փնտրտուքների հորձանուտում, որտեղ կիշխեն սոցիալական արդարությունը, խաղաղությունը, երջանկությունը, իսկ մարդիկ կլինեն ազատ և իրավահավասար: Հենց այս գաղափարն էլ ընկած է ժողովրդավարության տեսության հիմքում:

Ժողովրդավարության ընդհանուր սահմանումից բխում է, որ «Ժողովրդավարությունը ցանկացած կազմակերպության կառուցվածքի ձև է, որը հիմնված է կառույցի կառավարմանը իր անդամների իրավահավասար մասնակցության և մեծամասնության կողմից որոշումների ընդունման վրա»[1]: Այստեղից հետևում է, որ ժողովրդավարությունը դրսևորվում է ոչ միայն պետաիշխանական ասպեկտով, այլև ցանկացած այլ սոցիալական կազմակերպությունում:

Ինչպես երևում է, ժողովրդավարության տեսությունը հիմնվում է միայն մաքուր մարդկային արժեքների վրա, սակայն ինչպես ցույց է տալիս կյանքը, իրական ժողովրդավա-

[1] Տե՛ս *Пугачев В.П., Соловьев А.И.,* Введение в политологию: учебник для студ. высш. учеб. заведений. М.: Аспект Пресс, 2005, էջ 7:

ությունն անհասանելի է, ինչը բխում է հասարակության էությունից, քանզի այն չի կարող լինել միատարր, քանզի անհավասարությունը մարդկային հասարակության բնական հատկություն է: Ուստի, այն մարդիկ, ովքեր հասարակության մեջ ունեն արտոնյալ դիրք, իրենց գույքային կարգավիճակի ուժով միշտ ձգտելու են ընդլայնել իրենց իշխանությունը[2]:

Իդեալական ժողովրդավարության բացակայությունը հիմնավորվել է նաև հայեցակարգային մտածողներից մեկի՝ Ժան Ժակ Ռուսոյի կողմից, համաձայն որի. «Եթե «ժողովրդավարություն» եզրույթն ընդունենք բառի բուն իմաստով, ապա երբեք իրական ժողովրդավարություն գոյություն չունի և չի կարող ունենալ: Իրերի դրությանը հակասում է այն, որ մարդկանց մեծ քանակությունը կառավարի, իսկ փոքր քանակությունը կառավարվի»[3]: Միևնույն ժամանակ, ժողովրդավարության տեսությունն ունի հստակ արտահայտված արժեքների հավաքածու՝ սկսած սոցիալական արդարությունից մինչև հրապարակայնություն, որոնք միանշանակ դրական արձագանք չեն գտնում մարդկանց մեծամասնության կողմից: Հետևաբար նշված արժեքների իրացնելը կամ կյանքի կոչելը պայմանավորված է պետական մակարդակում դրանց ապահովմամբ: Ժամանակակից պետության մեջ ժողովրդավարության հռչակված արժեքները, որպես կանոն, ապահովվում են ազատ ընտրությունների միջոցով:

[2] Տե՛ս *Бегунов Ю.К., Лукашев А.В., Пониделко А.В.* 13 теорий демократии. СПб.: Изд. дом «Бизнес Пресса», 2002, էջ 9:

[3] Տե՛ս *Руссо Ж.Ж.* Об общественном договоре: Трактаты. М.: ТЕРРА-Книжный клуб; КАНОН-пресс-Ц, 2000, էջ 57:

«Ժողովրդավարություն» եզրույթի գիտական ուսումնասիրությունը կարևորվում է այն առումով, որ վերջինս, որպես գիտական կատեգորիա, միանշանակ ընկալում և գնահատում չունի: Հայեցակարգային ոչ միանշանակության արդյունքում «ժողովրդավարություն» կատեգորիան պրակտիկայում ձեռք է բերում ամենատարբեր դրսևորումներ, ինչի արդյունքում այսօր ունենք օրինակ ամերիկյան, ռուսական, արաբական, առավել ևս հայկական ժողովրդավարություն և այլն:

Որոշ հետազոտողներ ժողովրդավարությունը դիտարկում են որպես կարգ, որում մարդն առավելագույնս կարող է հասարակական կյանքին մասնակցելիս իրացնել իր իրավունքները, ազատություններն ու հնարավորությունները, որոշները՝ որպես Երկրի վրա խաղաղ և ազատ կյանքի մեծագույն վտանգի աղբյուր: Նշենք, որ հակաժողովրդավարների նման դիրքորոշումը հաճախ ստիպում է մտորել այն հարցի շուրջ, թե վերջին հաշվով ի՞նչ ենք հասկանում «ժողովրդավարություն» եզրույթի տակ. հասարակություն, որտեղ ոչ ոք ոչ մեկին չի կառավարում և ոչ ոք պատասխանատվություն չի կրում, քանի որ ամենուրեք «ազատություն, հավասարություն և եղբայրություն» է: Կամ արդյո՞ք ժողովրդավարությունը բացի ազատությունից, իրավունքների և ազատությունների հետ մեկտեղ ենթադրում է նաև պատասխանատվություն:

Մեր հետազոտության հրատապությունը հենց պայմանավորված է «ժողովրդավարություն» եզրույթի հայեցակարգային ոչ միանշանակությամբ: Քանզի Ե. Պոլյակովն իր «Ժողովրդավարություն, ինչպիսի՞ն է, ու՞մ համար» աշխատության մեջ նշում է. «ժողովրդավարության եզրութաբանությունը

ոչ մի դեպքում չանտեսեցին Հիտլերն ու Մուսոլինին, Ֆրանկոն ու Սալազարը»[4]: «Ավելի քան 200 տարի - ահա թե ինչ արժեցավ ԱՄՆ-ի քաղաքակրթական առաքելությունը, որը փորձում էր ամբողջ աշխարհում մշակութայնացնել ժողովրդավարությունը»[5]:

Ժողովրդավարության, որպես պետական կառուցվածքի ձևի, սահմանումը, բնութագիրն ու մանրամասն նկարագրությունը առաջին անգամ տվել է հույն փիլիսոփա Պլատոնը (մ.թ.ա. 4-րդ դար): Վերջինս բացահայտում է անտիկ ժողովրդավարության մի շարք բացասական գծեր[6], որոնք մինչ օրս չեն վերացել այդ կարգից, չնայած նրան, որ այդ ձևը ժամանակի ընթացքում ենթարկվել է արտաքին ձևափոխումների: Այսպես, իր «Պետություն» աշխատության մեջ Պլատոնը նշում է ժողովրդավարական ռեժիմում ազատության խեղաթյուրված ընկալումը, հասկացությունների շուռ տված լինելը, անկայունությունը և հակասականությունը: Այդ կարգը մտածողը սահմանում է որպես «մեծամասնության իշխանություն»:

Ժողովրդավարության, որպես ինքնուրույն պետական կարգի գաղափարը որն անտիկ շրջանում լայն տարածված էր, հետագա ժամանակշրջաններում կարծես թե ջնջվեց մարդկանց գիտակցությունից: Միջնադարն ու նոր ժամանակաշրջանը ավելի քիչ են առնչվում ժողովրդավարության հետ, որպես այդպիսին: Ժողովրդավարություն հիշեցնող վարչակարգերը ծագել են որպես կոնկրետ պատմական հանգամանքների արձագանք, որոնց կենտրոնում ընկած էր միապետերի կամայականությանը դիմադրելու և պարփակված օլիգարխիկ խմբավորումների կողմից բնակչության շահերի ոտնահարման դեմ պայքարի գաղափարը:

Ժողովրդավարության հայեցակարգը սկսեց վերածնվել միայն 18-րդ դարում լուսավորչական գաղափարների շարժմամբ և Մեծ ֆրանսիական հեղափոխության գաղափարներով (1789-1792 թթ.):

Մեր օրերում ժողովրդավարության հասկացության և դրա կարևորագույն բնութագրիչների որոնումը հրատապ է երեք հիմնական հանգամանքների բերումով:

Առաջին. Ժամանակակից հասարակությունները հնարավորություն ունեն զարգանալու մաքուր, արտաքինից ոչնչի չհակասելու ժողովրդավարության պայմաններում: Եթե ժողովրդավարական հասարակության մեջ խոսքը գնում է օլիգարխիկ կամ բռնապետական սկիզբների մասին, ապա ստիպված ենք խոսել ոչ թե սկզբունքորեն տարբեր սոցիալ-քաղաքական հասարակարգերի բախման, այլ հենց իր՝ ժողովրդավարական կարգի ներսում ներքին հակամարտությունների մասին:

Երկրորդ. Ժամանակակից գիտական գիտելիքների բարդացումը և միևնույն երևույթը տարբեր համատեքստերում, տարբեր տեսանկյուններից դիտարկելու և իրենց կողմից իրականացվող գործառույթների բազմազանության հնարավո-

[4] Տե՛ս Поляков Е. Б. Демократия: какая? Для кого? Л.: Лениздат, 1987, էջ 3:

[5] Տե՛ս նույն տեղը, էջ 4:

[6] Տե՛ս Античная демократия в свидетельствах современников / Под ред. С. Л. Соложенкиной. М. : Ладомир, 1996:

ությունը թույլ չի տալիս հստակ և հակիրճ տալ ժողովրդավարության սահմանումը:

Երրորդ հանգամանքը. Ժամանակակից ժողովրդավարական ռեժիմը, որը տարածվում է հսկայական տարածքների վրա, այնքան էլ համադրելի չէ այն դասական ձևին, որը նույնիսկ ոչ մեծ պետական կազմավորումների (օրինակ անտիկ պոլիսների) պայմաններում հարաբերականորեն կարելի էր դիտարկել որպես հաջողված ձև: Այլ խոսքերով ասած, ժամանակակից ժողովրդավարությունը ներդրված է ոչ այն պայմաններում, որոնք ի վերուստ ներհատուկ էին վերջինիս: Այստեղից էլ անհրաժեշտություն է առաջանում նորից վերաիմաստավորել և սահմանել այդ երևույթը:

Բերենք մի շարք օրինակներ, որոնք գործառնավորում են գիտական գրականության մեջ: Այպես, Ժողովրդավարությունը պետական-քաղաքական կառուցվածքի ձև է, հիմնված ժողովրդի՝ իշխանության աղբյուր լինելու սկզբունքի ճանաչման վրա[7]: Երկրորդ սահմանման մեջ ժողովրդավարությունը պետության ձև է, որը բնութագրվում է մի շարք հատկանիշներով. Ժողովուրդը որպես իշխանության աղբյուր, ազատ ընտրությունները որպես իշխանական ինստիտուտների ձևավորման միջոց, անհատի իրավունքների և ազատությունների երաշխավորում և այլն[8]:

[7] Տե՛ս Политология: Краткий словарь основных терминов и понятий / Под ред. проф. В. С. Пусько. М. : Изд-во МГТУ им. Н.Э.Баумана, 2010. 110 с.

[8] Տե՛ս Мухаев Р. Т. Политология: учеб. пособие. М.: Проспект, 2010, էջ 630:

Մեկ այլ բնորոշման մեջ ժողովրդավարությունը՝ ա) հասարակության քաղաքական կազմակերպման ձև է՝ հիմնված ժողովրդի, որպես իշխանության հիմնական աղբյուրի, սկզբունքի ճանաչման վրա, բ) քաղաքական ռեժիմ, որը բնութագրվում է քաղաքական բազմակարծությամբ (օրինական ընդդիմության, տարբեր գաղափարական հոսանքների, քաղաքական կուսակցությունների գոյություն), հասարակական կյանքի բոլոր ոլորտներում օրենքի գերիշխանությամբ, մարդու իրավունքների իրացման բարձր մակարդակով, իշխանության մարմինների ընտրովիությամբ և դրանց պարբերական փոփոխելիությամբ, իշխանությունների բաժանման սկզբունքի իրացմամբ, զարգացած քաղաքացիական հասարակության առկայությամբ[9]: Հաջորդ սահմանմամբ՝ ժողովրդավարություն նշանակում է այնպիսի կառավարման ձև, որի պայմաններում բնակչությունը մասնակցում է քաղաքացիական իշխանության իրականացմանը անմիջական (երբ քաղաքացիները հանրաքվեի միջոցով անմիջականորեն որոշում են ընդունում քաղաքական կյանքի կարևոր հարցերի վերաբերյալ) և ներկայացուցչական ժողովրդավարության (երբ ժողովուրդն իրականացնում է իր իշխանությունը ընտրովի և ներկայացուցչական մարմինների միջոցով) միջոցով[10]: Հետազոտման առարկայի մյուս սահմանմամբ՝ ժողովրդավա-

[9] Տե՛ս Погорелый Д. Е., Фесенко В. Ю., Филиппов К. В. Политологический словарь-справочник. Ростов н/Д. : Наука-Спектр, 2008, էջ 85:

[10] Տե՛ս Тавадов Г. Т. Политология: учеб. пособие. М.: ФАИР-ПРЕСС, 2000, էջ 115:

ությունը իշխանության կազմակերպման հատուկ ձև է, որի պայմաններում հասարակությունը հնարավորություն ունի պարբերական հիմքով իրավաբանորեն ամրագրված ոչ բռնի ընթացակարգերի միջոցով շտկել կառավարիչների, ինչպես նաև կառավարող խմբավորման անձնակազմի և քաղաքական էլիտայի գործունեությունը[11]:Եվ վերջապես ժողովրդավարությունը ժողովրդի կառավարումն է, ընտրված ժողովրդի կողմից և ժողովրդի համար (Ա. Լինկոլն)[12]:

Ինչպես երևում է բերված սահմանումներից, ամենուր «ժողովրդավարություն» եզրույթը ասոցացվում է «ժողովուրդ» կատեգորիայի հետ, և ամենատարբեր ձևակերպումներում փաստվում է, որ ժողովուրդն ունի հնարավորություն իրականացնելու իշխանությունը կամ ազդել դրա իրականացման վրա:

Եթե աշխարհի կայացած և զարգացած ժողովրդավարություն ունեցող երկրների համար հիմնախնդիրը մեթոդաբանական առումով որոշակիորեն հստակեցված է, ապա նույնը չի կարելի ասել այն պետությունների համար, որոնք գտնվում են պետականաշինության և կայացման ճանապարհին: Խնդիրն այն է, որ պետականությունն ու ժողովրդավարությունը հենց այնպես, ինքնահոսի չեն կարող ձևավորվել: Այստեղից հետևում է, որ մարդը, հասարակությունը, պե-

[11] Տե՛ս Политология: учеб. пособие / А. Ю. Мельвиль [и др.]. М. : Московский гос. ин-т международных отношений МИД России, ТК Велби, Проспект, 2008. 618 с. , с. 221]

[12] Տե՛ս Пугачёв В. П., Соловьёв А.И. Введение в политологию: учебник для студентов вузов. 4-е изд., перераб. и доп. М. : Аспект-пресс, 2005. 477 с.

տությունը ժողովրդավարությունը իրավական օբյեկտներ են և պետք է ստանան հայեցակարգային հիմնավորվածությամբ իրավական ամրագրում: Այս ամենի կենտրոնում կանգնած է մարդը, որի գոյությունը հնարավոր է բացառապես հավաքական գոյի պայմաններում,որը պետք է կառուցվի բացառապես արժեհամակարգի հիման վրա: Բնականաբար հարց է առաջանում. Արդյո՞ք հնարավոր է ձևավորել վարքագծի կանոններ և դատողություններ անել այնպիսի արժեքների վերաբերյալ, որոնք բոլոր մարդկանց համար լինեն օբյեկտիվորեն ճշմարիտ, և, ընդ որում, դրանք սահմանված լինեն հենց մարդու կողմից, այլ ոչ թե պարտադրված՝ «հեղինակության» կողմից:

Հենց այս հարցադրման պատասխանն էլ (ԱՅՈ կամ ՈՉ) հանդես է գալիս որպես բազային սկզբունք, որով կանխորոշվում է ժողովրդավարական հասարակության ձևավորման և ներդաշնակ զարգացման մեթոդաբանական մոտեցման կենտրոնական ասպեկտը:

«ՈՉ» պատասխանի դեպքում սկզբնավորվում է իրավունքի էության շրջանակներում այնպիսի հայեցակարգային մոտեցում, որը բազային թեզիսի ընդունմամբ կանխորոշում է մեթոդաբանական այնպիսի ուղղություն (ճյուղ), որի համաձայն՝ ժխտվում է մարդու՝ վարքագծի օբյեկտիվ ճշմարիտ կանոններ ձևավորելու ունակությունը:

Արդյունքում ձևավորվում է մի սկզբունք, համաձայն որի՝ արժեքների վերաբերյալ դատողությունները չունեն օբյեկտիվ արժանահավատություն և իրենցից ներկայացնում են լոկ անհատի կամայական, չհիմնավորված նախընտրություններ ու

հակակրանքներ, որոնք էլ արդյունքում դառնում են օրենքի առարկա և նորմ, հաջորդական ամրագրում ստանում օրենսդրական համակարգում՝ գործի դնելով պոզիտիվ իրավունքի իրավաստեղծագործական մեթոդաբանական ողջ զինանոցը:

Այս պարագայում հասարակությունն ու պետությունը կառուցվում են արժեհամակարգի այնպիսի մոդելով, որին վերագրվում է յուրաքանչյուր ցանկալի բարիքի սահմանումը, և այստեղ ցանկությունը հանդես է գալիս որպես արժեքի չափանիշ, այլ ոչ թե՝ ընդհակառակը: Բնականաբար նման պարագայում արժեքի իրավական էությունը (էականություն) որոշվում և սկզբնավորվում է սուբյեկտիվ մակարդակում՝ անհատի ցանկությունների և նախընտրությունների շրջանակներում:

Նման սուբյեկտիվ պետականագոյացումը (արժեքի հիման վրա նորմագոյացումը) հենվում է այն բանի վրա, որ եթե հաճույքը մարդու համար բարիք է, իսկ տառապանքը՝ չարիք, ապա գործում է այն սկզբունքը, համաձայն որի՝ ցանկությունները համարվում են գնահատականի որոշիչ գործոն, այսինքն, միայն այն ցանկություններն են հավակնում լինել արժեք, որոնց իրականացումը հաճույք է պատճառում, իսկ մնացած ամեն ինչը՝ ոչ:

Նման ծայրահեղ սուբյեկտիվիզմն իր բնույթով անհամատեղելի է էթիկական նորմերի համապարփակության և բոլոր մարդկանց համար մատչելի լինելու գաղափարի հետ: Եվ եթե նման սուբյեկտիվիզմը լիներ իրավական էթիկայի միակ ձևը, ապա մենք կհայտնվեինք էթիկական բռնապետության

և մարդու օբյեկտիվ իրավունքներն ապահովող համապարփակ էթիկական նորմեր ունենալու հավակնությունից հրաժարվելու ընտրության առջև:

Ինչպիսի՞ փաստարկներ կարելի է ներկայացնել նրանց, ովքեր մեևժում են մարդու՝ վարքագծի օբյեկտիվ ճշմարիտ նորմեր ձևավորելու ունակությունը: Այս պարագայում որպես փաստարկ ընտրում ենք «ԱՅՈ» պատասխանը՝ գործի դնելով հասարակության և պետության կառուցման միանգամայն այլ հակադիր մեթոդաբանական ուղղություն, որը հենվում է արժեքների օբյեկտիվ բնույթը ճանաչելու և ընդունելու հայեցակարգի վրա: Այս տրամաբանությամբ՝ «այն, ինչ համարվում է բարիք և համապատասխանում է կարգին, իրերի բնույթով է համարվում այդպիսին, և կախված չէ մարդկանց միջև եղած համաձայնությունից»[13]:

Նման գաղափարախոսական մոտեցման արդյունքում ձևավորվում է մի սկզբունք, համաձայն որի՝ արժեքներն ունեն օբյեկտիվ բնույթ, արժեքային դատողություններն ունեն օբյեկտիվ արժանահավատություն և կարող են ներկայացվել նորմի ձևականացված տրամաբանական մոդելների ձևով՝ դրանք ամբողջական օրենսդրական համակարգի շրջանակներում համապատասխան օրենքով ամրագրելու միջոցով: Արդյունքում արդեն գործի է դրվում բնական (օբյեկտիվ) իրավունքի նորմաստեղծագործության ողջ մեթոդաբանական զինանոցը:

Այս պարագայում նորմերի տրամաբանական մոդելների

[13] Տե՛ս Руссо Ж.-Ж. Указ соч., էջ176:

դուրս բերումը պետք է հենվի համակարգային ուսումնասիրության և հաջորդաբար կուտակված ճանաճողության արդյունքում ձեռք բերված գիտելիքների վրա: Այդ գործընթացը պետք է տեղի ունենա իրավունքի մասին գիտության շրջանակներում, որում իրավունքի էությունը կարևորվում է որպես առաջնահերթ և առանցքային հիմնախնդիր:

Ինչպես արդեն նշեցինք, հասարակության և պետության իրավագոյացումը պետք է դիտարկել մեկ միասնական ամբողջականության մեջ և այն առաջին հերթին պետք է հիմնվի «Մարդ» կատեգորիայի վրա այն առումով, որ Մարդը համարվում է բնականության օրենքներով գործառնավորող տիեզերքի մի մասնիկը, որը ենթադրում է, որ վերջինս պետք է համակարգային հիմքով գտնվի Մարդ-Բնականություն հարաբերությունների շրջանակներում: Հակառակ պարագայում կխախտվի Աշխարհի կարգավորվածության պարադիգման, և կչեղարկվի Տիեզերքի գլոբալ բանականությունը՝ լավագույն դեպքում տեղ հատկացնելով բանականությանը իրավիճակային կարգավորվածության մակարդակում: Իսկ վատագույն դեպքում՝ քաոսի հոչակումը որպես Տիեզերքի գոյի հիմնական սկզբունք: Այս խնդրին անդրադարձել է Գերմանացի հայեցակարգային մեծ մտածող Է. Կանտը, որը ցավով արձանագրում էր պրակտիկ բանականության գերակայությունը մաքուր բանականության նկատմամբ[14]:

Հենց այս մոտեցմամբ էլ ձևավորվում է պոզիտիվ իրավունքի պարադիգման: Ցանկացած դեպքում մարդն իր փաստացի գոյությամբ դատապարտված է հավաքական գոյի ձևաչափով հարաբերությունների համակարգի արտաքին աշխարհի օբյեկտների հետ: Նույնիսկ անհատական գոյի ձևաչափում տեղի է ունենում շփում արդեն ներքին աշխարհի օբյեկտների հետ, որոնք անպատճառ համարվում են Մարդ-բնականություն հարաբերությունների ենթահամակարգ: Դրանք ենթարկվում են բնականության օբյեկտիվ օրինաչափություններին և կանխորոշում են ներքին աշխարհի գործառնավորման կառուցակարգը:

Այս երկու ենթահամակարգերը սահմանադրորեն փոխկապակցված են և համարվում են միասնական ամբողջի մասեր և համապատասխանաբար գտնվում են միասնական իրավական ամրագրման իրավասության ներքո: Մարդու, որպես իրավական ամրագրման առանձին օբյեկտի բավանդակային ամբողջականությունն էլ հենց հանդես է գալիս որպես սահմանադրաիրավական օբյեկտ, որը սահմանում է մարդու, որպես հատուկ երևույթի, տիեզերքի մասնիկի, ածանցյալ բազիսային բովանդակությունները, որոնք ձևավորում են մարդու ֆենոմենոլոգիան, որպես տիեզերքի գործառնավորման բնական ընթացքի հատուկ երևույթ: Այստեղից էլ բխում են մարդու կյանքի, ազատության և երջանկության իրավունքները: Այս ամբողջականության խաթարումը խախտում է վերը նշվածներից յուրաքանչյուրի իրավաչափությունը և նախադրյալներ է ստեղծում համակարգային հակամարտության ծագման համար, որի պարագայում մարդու մասնավոր կյանքի, ազատության և անհատական երջանկության իրավունքները, որպես ներքին աշխարհի օբյեկտներ, հակասութ-

[14] Տե՛ս Кант, Критика чистого разума, Изд. Мысль, М., 1994:

յան մեջ են մտնում հավաքական գոյի իրավավական դրվածքի հետ, որի շրջանակների մեջ են մտնում այնպիսի համակարգային օբյեկտներ, ինչպիսիք են, հասարակությունը և պետությունը, այսինքն մարդու արտաքին շփումների իրավակարգավորումը արդեն որպես հասարակական և պետական իրավակարգի սուբյեկտի, արդեն սահմանվում է իր՝ պետության մեկնաբանությամբ կյանքի, ազատության և երջանկության իրավունքը:

Այստեղից ակնհայտ է, որ ամբողջականությունը կարելի է ապահովել միայն իրավական պարադիգմայի հայեցակարգային միատարրությամբ, որը կբացառի մարդու բովանդակային դրսևորման դիտարկումը որպես մասնավոր և հավաքական գոյի սուբյեկտ, տարբեր տրամաբանական հարթությունների տեսակետից: Այսինքն, ներքին աշխարհի էթիկական նորմերը չպետք է հակամարտության մեջ լինեն հասարակական օրենսդրությունից բխող էթիկայի հետ: ՈՒստի նույնիսկ մարդկային հասարակության զարգացման առաջին փուլերում Իրավունքը համագոյակցում էր այնպես, ինչպես այսօր իր բովանդակային ունիվերսումով: Այդ պարագայում էվոլյուցիան տեղի էր ունենում էթիկական հարաբերությունների մակարդակում, որը համարժեք էր գիտակցական մակարդակում հասարակության իրավագիտակցությանը և ինքնանույնականացմանը ինչպես մարդու ներքին դրսևորման, այնպես էլ արտաքին աշխարհի հոգևոր զարգացման առումով: Այսպես թե այնպես հասարակական հարաբերությունների կարգավորման իրավագենեզը իրականացվում էր «Էթիկա» կատեգորիայի, որպես իրավագոյացնող ագրեգատի

միջոցով:

Հայեցակարգային դրսևորման մակարդակում Էթիկան ենթադրում էր բարոյականության, որպես պատվիրանների հիմնարար սկզբունքների համակարգի, անհրաժեշտություն, որոնց հիման վրա կառուցվում էր բարոյական օրենսդրությունը, սահմանելով մարդու՝ տիեզերքի հետ փոխգործակցության վարքագծային ձևաչափը:

Անհրաժեշտ է նշել, որ կրոնական օրինաստեղծագործության իրավագոյացման մեթոդաբանությունը հիմնականում հենվում էր այն սկզբունքի վրա, որ իրավակարգավորումը պետք իրականացվի արդեն իսկ սահմանված Էթիկայի միջոցով՝ բնակչության բոլոր շերտերի վարքագծային ռեֆլեքսների մակարդակում: Այդ մեթոդաբանությունը առանցքային կերպով փոփոխվեց իրավունքի ֆենոմենոլոգիայի և աշխարհիկ հասարակության ձևավորման գիտափիլիսոփայական զարգացման պատմական սինթեզում, փոխարինելով էթիկական ռեֆլեքսիան իրավագոյացման նոր սուբստրատով՝ «Մարդու և հասարակության իրավագիտակցություն՝ քաղաքացիական իրավասությամբ (իրազեկությամբ)»:

Անպատճառ իրավակարգավորման բովանդակային բնույթն ու գործառնավորման կառուցակարգը պետք է մեկտեղեն համապատասխանաբար «արժեքների համակարգի» իրավական ամրագրումը և իրավակիրառման տեխնիկական մասը՝ բացառելով ինքնբուխ իրավագոյացումը: Ուստի Բարոյականության, որպես օրինագոյացման համակարգաստեղծ ագրեգատի, իրավական բովանդակությունը ձեռք է բերում առանցքային նշանակություն իրավաձևավորման բոլոր փու-

լերում: Այլ խոսքերով, ցանկացած օրենք և օրենսդրություն ամբողջությամբ չեն կարող լինել անբարոյական:

Բարոյականությունն արդեն հանդես է գալիս որպես արժեքների համակարգի և համապատասխանաբար բարոյական օրենսդրության իրավական ամրագրման օբյեկտ, այդպիսով ձևավորելով միասնական համապարտադիր նորմ, որից բխում է իրավակիրառման վարքագծային ասպեկտը որպես առանձին իրավական օբյեկտ:

Չգրված սահմանադրության և կրոնական օրենսդրության պարագայում դրանք միաձուլվում են, ստեղծելով դրանց նույնականացման տեսիլ, որն անպատճառ այդպես չէ: Այսինքն համապարտադիր վարքագիծը, որը բխում է համապարտադիր նորմից, արդեն գործող ռեֆլեքսի պարագայում, համապարտադիր նորմը պրեդիկատից դարձնում է էթիկայի ստվերային ածանցյալ օբյեկտ, ձևավորելով վարքագծային ավանդույթի և համապարտադիր նորմի թվացյալ նույնականացում:

Ինչպես երևում է վերոգրյալ ձևակերպումներից, ժողովրդավարության և ներդաշնակ հասարակության կառուցումը չի կարող լինել ինքնահոսի, այն բացառապես հնարավոր է միայն իրավունքի էության շրջանակներում սահմանադրականության սիստեմատեխնիկայի կիրառմամբ:

Ժամանակակից Եվրոպայի ամենաինքնտիպ քաղաքական փիլիսոփաներից մեկի՝ Էնտոնի Դե Յասայիի «Պետություն» աշխատությունը սկվում է հետևյալ արտահայտությամբ.

«Ի՞նչ կանեիք, եթե լինեիք պետություն»[15]: Այս հարցի պատասխանն էլ կարելի դիտարկել որպես պետության և ժողովրդավարական հասարակության կառուցման սահմանադրականության սիստեմատեխնիկան:

Առանձին վերցրած պետականության մասշտաբում դիտարկելիս այս պոստուլատը ուժի մեջ է մտնում ժողովրդի կամահայտնության միջոցով: Այստեղ ժողովուրդը հանդես է գալիս որպես հասարակության էկզիստենցիալ համակարգի հայեցակարգային մոդելը հաստատող իմանենտ իրավունքի կրող: Այդ մոդելը միանշանակ ձևականացման մակարդակում լիարժեքորեն առարկայական նկարագրում և բացահայտում է արժեհամակարգը, որպես իրավական ամրագրման օբյեկտ, որի հիման վրա պետք է մշակվի արդեն էկզիստենցիալ համակարգի գործառնական մոդելը, գործի դնելով իրավական տարածությունը, որում պետք է տեղավորվեն ինչպես հասարակությունը, այնպես էլ վերջինիս կողմից հիմնադրվող պետությունը (իր գործառնական առաքելության և լիազորությունների իրավաբանական ամրագրմամբ), ինչպես նաև համալիր հասարակական գործընթացների իրավական կարգավորման համակարգը:

Սա իրավագոյացման առաջին սահմանադրական ակտն է, որի արդյունքում ձևավորվում է իրավական տարածությունը, որը իրացնում է կառավարելի էկզիստենցիայի կարգավորվածությունը արժեքների կոորդինատների համակարգում, նրանում զետեղելով հասարակությունը, դրանով իսկ

[15]Տե՛ս Энтони де Ясаи, Государство, Москва: Челябинск: ИРИСЭН, Социум, 2016, էջ 13:

ձեռք բերելով իրավական լեգիտիմություն: Այսպիսով, սահմանվում է Հեգելյան «իրավունքի և ոչ իրավունքի»[16] շեմը և տեղի է ունենում իրավունքի բովանդակային գործողության տարածության գոյացումը:

Սա ամենաառանցքային ասպեկտն է, որի վրա կառուցվում է երկրորդ պոստուլատը:

Հասարակությունը պետք է ունենա կամք և գործառնական ունակություն կառուցելու իր էկզիստենցիալ համակարգը, որպես համալիր տեխնոլոգիական գործընթաց, որն իր մեջ ներառում է բոլոր ենթահամակարգերի կառուցումը, որոնց համակարգային փոխգործակցության արդյունքում ապահովվում է հասարակության և պետության ներդաշնակ ու հավասարակշռված գործառնական էկզիստենցիան ինչպես վերպետական ու վերազգային, այնպես էլ ներպետական և ազգային մակարդակներում :

Այս պոստուլատի ընդունումը նշանակում է, որ հասարակությունը արդեն ունենալով համարժեք իրավագիտակցություն և ինքնագիտակցություն՝ նույնականացնելու իրեն որպես բանական գոյի (բարձր կազմակերպված բանականության կրողի բնական իմանենտ իրավասուբյեկտություն), ճանաչելով համակարգային մակարդակում իր էկզիստենցիայի կառավարման անհրաժեշտությունն ու օբյեկտիվ բնույթը, որպես ֆունկցիոնալ-ակտիվ արարող, ստեղծագործող, պարտականություն է ստանձնում կառուցելու էկզիստենցիայի համակարգ ֆունկցիոնալի իրավասուբյեկտության ձևաչափում:

[16] Տես Георг Вилгельм Фридрих Гегель, Философия права, Академия наук СССР, Институт Философии, издательство “Мысль”, Москва, 1990.

Սա իրավագոյացման երկրորդ սահմանադրական ակտն է, որում «Մարդ» և «հասարակություն» իրավական օբյեկտները, ունենալով կյանքի և գոյատևման սահմանադրական իրավունք, արդեն որպես ֆունկցիոնալներ, ծանրաբեռնվում են իրանց ճակատագրի և կենսապահովման համար պատասխանատվությամբ, դրանով իսկ ավարտելով լիարժեք իրավասուբյեկտության ակտը: Այդպիսով տեղի է ունենում իրավունքի ֆունկցիոնալ գործողության տարածականագոյացումը: Այսինքն, տեղի է ունենում իրավունքի օնտոգենեզ, որպես իրավունքների և պարտականությունների սինթեզ միասնական ամբողջում, որի արդյունքում գործառնականորեն իրացվում է իրավագոյացումը, քանի որ արդեն առկա է ինչպես իրավունքի կառուցվածքը, այնպես էլ դրա կրողը, որի դերում հանդես է գալիս Սուբյեկտը: Այդպիսով համակարգագոյացումը ձեռք է բերում իրավական բնույթ, իրավական օբյեկտի հատկություն, համապատասխանաբար և իրավական բովանդակություն պարտավորվածության, կարգավորվածության և կառավարելիության կազմվածքով ստեղծվող համակարգի շրջանակներում: Ինչպես նաև սիստեմատեխնիկան հանդես է գալիս որպես իրավական օբյեկտ՝ ֆունկցիոնալի՝ համակարգագոյացման տեխնոլոգիական իրականացման բովանդակային առաքելությամբ:

Նման դրվածքում դիտարկվում է նաև իրավագոյացման երրորդ սահմանադրական ակտը, եզրափակելով իրավագենեզի ամբողջականության սիստեմատեխնիկական կառուցվածքը, գործի է դնում իրավունքի օպերացիոն գործողության

տարածությունը՝ դրանում տեղադրելով պետությունը որպես իրավական օբյեկտ տեխնիկական ընթացակարգային մակարդակում՝ հիմնական օրենքի ընդունման իրավաբանական կանոնակարգի շրջանակներում:

Իրավունքի համակարգի կառուցման նման սիստեմատեխնիկայի արդյունքում ընդգծվում են այն սահմանադրական օբյեկտները, որոնք իրավունքի և պետության կառույցի համակարգագոյացման մեջ ունեն բարձրագույն իրավական կշիռ, և սահմանվում է նորմատիվ ակտերի աստիճանակարգի և ներդրվածության համակարգը, որոնք գործի են դնում համալիր հասարակական գործընթացի իրավական կարգավորումը իրավունքի սահմանադրական գործողության գործառնական կանոնակարգի և մետրիկայի մեջ, դրանով մեկնարկելով սահմանադրահիրավական կարգավորումը օպերացիոն մակարդակում:

Ըստ էության իրավագոյացման սիստեմատեխնիկան ձևաչափ է, որի համաձայն իրավագենեզն ու պետականագոյացման շրջանակներում իրավական կարգավորման համակարգագոյացումը ապահովում են իրավունքի գործողության սահամանադրական ամբողջականությունը, բացառելով, չթույլատրելով և կանխարգելելով կամ վատագույն դեպքում՝ լուծելով համակարգային հակամարտությունները իրավունքի լեգիտիմության խելամիտ և վերլուծական մետրիկայում:

Իրավունքի գերակայության սկզբունքի իրավական բովանդակության ընկալումը որպես իրավական պետության և քաղաքացիական հասարակության կարգավիճակի ապահովման հիմնական պայման, կանխորոշվում է իրավական համակարգի ներսում իրավունքի գործողության բոլոր մակարդակներում համակարգային հակամարտություններ չթույլատրելու իրավագիտակցությամբ:

Նման մեթոդաանական մոտեցումը ակնհայտորեն կարելի է կիրառել ռեկուրսիվորեն հավաքական գոյի ձևի և դրսևորման աստիճանակարգի ցանկացած հատվածում, խնդիր դնելով սահմանելու յուրաքանչյուր կոնկրետ մակարդակի համար սահմանադրահիրավաան կարգավորման սիստեմատեխնիկան: Այդ մակարդակներն են.

- Մարդկություն
- Քաղաքակրթություն
- Ժողովուրդ
- Ազգ, ազգություն
- Պետական կոնգլոմերացիաներ, կայսրություններից մինչև միութենական, դաշնային, ծրագրային, նպատակային կազմավորումներ, ունիտար պետական կազմավորումներ
- Բիզնես կոնգլոմերացիաներ՝ տրանսազգայինից մինչև անհատ ձեռնարկատերերը
- Հասարակական միավորուներ ու շարժումներ,
- Սոցիալական կազմավորումներ՝ տոհմացեղային, ընտանեկան, ակումբային շահերով և այլն,
- Մարդը, որպես մասնավոր գոյի իրավասուբյեկտության կրող, որը եզրափակում է համակարգագոյացման այդ աստիճանակարգը, համարվում է վերը նշված կոլեկտիվ գոյի իրացման ձևերի աստիճանների սուբստանցալ հիմքը:

Այս պարագայում, ակնհայտ է, որ Իրավունքի համակար-

գի կամ իրավունքի գործողության շրջանակներում իրավական տարածությունը, իրավական ամրագրումը և իրավաստեղծագործությունը ունեն փոխկապակցվածության և ներդրվածության բնույթ վերը նշված աստիճանակարգին համապատասխան, որում կենտրոնական իրավական օբյեկտի դերում հանդես է գալիս մարդը:

Կոլեկտիվ գոյի աստիճանակարգի յուրաքանչյուր աստիճանում իրավական բովանդակությունը չի կարող դիտարկվել Մարդու բովանդակային կոնստրուկտիվի ամբողջականությունից դուրս, ինչպես նաև մարդու իրավական բովանդակությունը չի կարելի սահմանափակել իրավասուբյեկտույան նեղ միջանցքով՝ մասնավոր գոյի իրավագոյացման շրջանակներում

Առանց իրավական ամրագրման օբյեկտի բովանդակության բացահայտման չի կարող կատարվել իրավական ամրագրում՝ այդ ամրագրման առարկայի բացակայության պարագայում, այսինքն, օբյեկտի էությունը չի կարող բացակայել կամ լինել անորոշ, և ոչ միանշանակ, քանի որ իրավական ամրագրումը պետք է միանշանակորեն և որոշակիորեն ապահովի հենց օբյեկտի ընտրված կոնստրուկցիայի էության համապարտադիրությունը, որպես բազային ճշմարիտ, հաջորդականորեն չթույլատրելով դրա իրավական բովանդակության մեջ բազմազանությունը նորմատիվ կոնստրուկտիվի մեկնաբանության միջոցով (օրենքի կամ այլ ենթաօրենսդրական ակտի միջոցով):

Այս առումով սահմանադրական իրավագոյացման սիստեմատեխնիկան իրավական ամրագրման օբյեկտի

դերում ընտրում է ոչ թե կոլեկտիվ գոյի աստիճանակարգի առանձին դրվագներ, այլ կոլեկտիվ գոյի աստիճանակարգի ամբողջ ծառը՝ որպես մասնական ամբողջ:

Այս պարագայում իրավունքի գործողության հայեցակարգային տարածությունում լուծվում է ևս մեկ՝ նավիգացիայի առանցքային մեթոդաբանական հիմնախնդիր. իրավագենեզի սուբստանցիալ մակարդակը կանխորոշող բազային համակարգագոյացնող օբյեկտից, որը հանդիսանում է մարդը, վերընթաց մինչև կոլեկտիվ գոյի աստիճանակարգի օբյեկտներ, որոնց բարձրագույն մակարդակը համարվում է մարդկությունը, որպես իրավական օբյեկտ, որի իրավական բովանդակությունը կանխորոշվում է կոլեկտիվ գոյի աստիճանակարգի բոլոր օբյեկտների վերջնական սինթեզով:

Ինչպես նաև հնարավոր է դառնում նավիգացիան իրավունքի օպերացիոն գործողության տարածությունում, որում տեղի է ունենում օպերացիոն իրավակիրառման գործառնական իրացման վայրընթացը արդեն սահմանադրաիրավական կարգավորման ռեժիմում, այսինքն, կոլեկտիվ գոյի աստիճանակարգի յուրաքանչյուր աստիճանի իրավակարգավորումը բխում է աստիճանակարգում առկա վերադաս օբյեկտի իրավական տարածությունից:

Այսինքն, ցանկացած նորմատիվ ակտ պետք է ունենա սահմանադրությունից բխող հետագիծ: **Նման սիստեմատեխնիկան թույլ է տալիս բացառել իրավունքի համակարգային հակամարտությունները բովանդակային մակարդակում օրենսդրական համակարգի համակարգային սինխրոնիզացման միջոցով, որի ցանկացած նորմատիվ ակտը**

պետք է արտացոլի մարդու, որպես ժողովրդի ներկայացուցչի, հասարակության անդամի, քաղաքացու, պետության շրջանակներում համալիր հասարակական գործընթացների իրականացման իրավական բովանդակությունը:

Կոլեկտիվ գոյի շրջանակներում Մարդու գոյության սկզբունքի գիտակցումը պետք միտված լինի նրան, որ յուրաքանչյուր մարդ ունի կյանքի իրավունք: Համապատասխանաբար, պետությունն ունի պարտականություն ապահովելու քաղաքացիների կյանքի անձեռնմխելիությունը, որպես վերջիններիս բազային և առաջնային իրավունքի: Առանց նման գիտակցության իրավաբանական իրավասության հասարակության իրավագիտակցության ինստիտուտը կլինի ոչ լիարժեք՝ քաղաքացիների կողմից գիտակցական մակարդակում իրենց իրավունքների ու պարտականությունների չընկալման ռեցիդիվով:

Մասնավորապես, այդ ասպեկտն էլ համարվում է անկատարության և երբեմն նաև անկոնֆլիկտ իրավական կարգավորման համարժեք համակարգի ստեղծման անհնարինության պատճառական մակարդակը: Օրինակ, միջազգային իրավունքի համակարգի ճգնաժամը, երկմակարդակ սահմանադրության գործառնավորումը վերազգային, դաշնային մակարդակներում և իրավունքի գործողությունը ինքնավարության մակարդակում՝ ինքնիշխանության այս կամ այն մոդելով:

Միաժամանակ մեթոդաբանական մոտեցումն ընտրված է իրավունքի, որպես համակարգային երևույթի, համակարգի և համակարգայնության, որպես իրավագենեզի սուբստանցիալ հիմքի, սիստեմատեխնիկայի, որպես իրավունքի համա-

կարգի և պետության կառույցի կառուցման գործառնական ունակության, սահմանադրականության, որպես իրավական ամրագրման համակարգի, որն ապահովում է իրավունքի համակարգային ամբողջականությունը պետության գենեզիսի բոլոր փուլերում, բովանդակային բնույթի ֆենոմենոլոգիական սինթեզի նպատակով:

Որպես ֆենոմենոլոգիական սինթեզի հետևանք, սահմանադրականությունը հանդես է գալիս որպես պետական կառույցի պատասխանատու իրավագոյացման մեթոդաբանական սկզբունք և համալիր հասարակական գործընթացների իրավական կարգավորման համակարգագոյացման ունակություն՝ իրավական կարգավորման համակարգում համակարգային հակամարտությունների բացառման սիստեմատեխնիկական սկզբունքով:

Այս պարագայում սահմանադրականությունը հանդես է գալիս որպես իրավունքի լեգիտիմացման համակարգ՝ իր ելակետային բովանդակային գործառնական առաքելությամբ և դրսևորմամբ, իրավունքի համակարգային ամբողջականության մետրիկայի միջոցով, որի կորուստը նրան դարձնում է ոչ իրավունք:.

Ինչպես երևում է, սահմանադրականության ընկալման պատկերացման մեջ վերոնշյալ սպեկտրից դուրս ցանկացած պարզեցում անխուսափելիորեն կահանգեցնի իրավունքի էության ընկալման անունակության ընդհանրապես և սահմանադրականության էության մասնավորապես, որի արդյունքում սահմանադրականությունը կդիտարկվի որպես սահմանադրության ընդունման տեխնիկական ակտ, որը որպես

կանոն, տեղի է ունենում այլ սահմանադրությունների տեքստերից արտագրելու և սուբյեկտիվ իրավասության (որպես կանոն ոչ իրավասու պրոֆեսիոնալների կամ ոչ պրոֆեսիոնալների կողմից) շրջանակներում խմբագրելու միջոցով, որը երաշխավորում է իրավունքի գործողության դոֆորմացման ռեցիդիվները սահմանադրաիրավական կարգավորման մակարդակից մինչև իրավակիրառ բնույթի ընթացակարգերը: Արդյունքում համալիր հասարակական գործընթացում տեղի ունեցող ցանկացած ցնցում և էքսցես պարզապես դուրս է մնում սահմանադրական կարգավորումից և տրամաբանությունից՝ հասարակությանը մխրճելով խորը ճգնաժամի մեջ:

Բացական պատասխանը, այսինքն իրավական պոստուլատի չընդունումը գործի է դնում անհամակարգայնության թույլատրելիությունը, որի արադյունքում հնարավոր չի դառնում գոյատևման ներդաշնակ ու հավասարակշռված էկզիստենցիալ համակարգի կառուցումը, կամ նեղացվում է համակարգագոյացման դրվածքը համաշխարհային հանրության այն անդամների շահերի իրավիճակային պայմանավորվածությունների ձևաչափում, որոնց դիրքորոշումները հնարավոր չէ անտեսել ուժի իրավունքից տեսանկյունից: Այս դրվածքի պայմաններում առաջանում է իրավունքի համակարգագոյացման համակարգային հակամարտություն, որում հնարավոր չի լինում կառուցել իրավունքի համակարգ, որն ապահովի իրավունքի գերակայության սահմանադրական սկզբունքը, և որի պայմաններում իրավագոյացման սուբստանցիալ հյուսվածքները փոխարինվում են վարքագծի կանոնագոյացմամբ, որը դուրս է լեգիտիմության իրավական մետրիկայից,

փոխարինելով իրավական իմպերատիվը (սահմանադրական իրավական լեգիտիմության օբյեկտիվ բնույթը) որոշում կայացնող ուժային խմբի բռնապետական թելադրանքով (ոչ իրավական լեգիտիմության ներսուբյեկտային բնույթը): Սրա հետևանքը լինում է այն, որ հասարակության համար վարքագծի կանոնների սահմանումը շեղվում է իր տրամաբանական ընթացքից և դառնում կամայական, երբեմն նաև հակասության մեջ մտնելով մարդու էության հետ:

«Մարդկություն» և «համաշխարհային հանրություն» եզրույթների համակողմանիությամբ և մեծածավալությամբ հանդերձ, իրավագիտության տեսանկյունից, որը պարտավոր է դիտարկել դրանք որպես իրավունքի օբյեկտներ, դրանք չեն կարող մնալ «պետությունների ներսուբյեկտային ընկալման» հարթության մեջ և ակնհայտ է, որ պետք է ձևականորեն մոդելավորվեն սահմանադրական ունիվերսումի վերլուծական ձևաչափում, որը սահմանում է բովանդակային և գործառնական միանշանակությունը, առանց որի «համաշխարհային հանրություն» հասկացության ընդհանրական ընկալումը հենց համաշխարհային հանրությանը կդարձնի առնվազն անկարող: Արդյունքում, ներկա ժամանակահատվածում մենք դեմ առ դեմ մոլորակային մակարդակում բախվում ենք գլոբալ համակարգային հակամարտության մարտահրավերին: Քանզի սահմանադրական մակարդակում իրավական ինքնանույնականացման բացակայությունը համալրվում է «գերտերության» թելադրանքի սկզբունքով, որը հիմնվում է ձևական հավաքական կոնսենսուսի վրա, որը ձեռք է բերվում համաշխարհային հանրության անդամներին արդեն սահ-

մանված սցենարը արտաքուստ ոչ հրապարակային պարտադրելու միջոցով՝ հենված լինելով «բացառիկության ինքնահռչակ իրավունքի» վրա:

Այս պարագայում կենտրոնական հիմնախնդիրը համարվում է «Իրավունքի համակարգ», «կոնվենցիոնալ իրավունքի տարածականություն» և «Սահմանադրական իրավունք» կատեգորիների ընկալման անորոշությունը: Խնդիրն այն է, որ դրանք բովանդակային մակարդակում նույնական չեն և անհամատեղելի են իրավունքի գործողության գործարկման գործառնական համակարգի կառուցման սիստեմատեխնիկայում:

Ժողովրդավարական պետությունում իրավունքի համակարգ կառուցելիս ամենաառանցքային հարցը համարվում է այնպիսի կոորդինատների համակարգի պրոեկտավորումը, որում իրավունքի գերակայության սկզբունքը (իրավունքի ուժ) ոչ միայն համարվում է հնարավոր, այլև օբյեկտիվ վերլուծական ձևականացման հիման վրա ամրագրվում է սահմանադրական մակարդակով՝ բացառելով իրավունքի դրսևորման կախվածությունը ուժերի աշխարհաքաղաքական դասավորվածությունից, որոնք ուղղված են ենթակայության աստիճանակարգով ազգային շահերի ուրվագծմանը:

Իրավական համակարգի նման սիստեմատեխնիկայի արդյունքում իրավունքի գործողությունը գործի է դրվում ակտիվ իրավասուբյեկտության պարադիգմայի ձևաչափում: Այս պարագայում ընդունվում է, պետության, որպես ակտիվ գործող սուբյեկտի, հանդես գալու թույլատրությունը, որը հետապնդում է իր սեփական շահերը, որոնք հակադրվում են և

փոխադարձաբար բացառում են պետականության մոդելին, հիմնված քաղաքական - փիլիսոփայական հայեցակարգի վրա, որի համաձայն «պետությունը «պասիվ գործիք է», որը ծառայում է բացառապես հասարակության շահերին ամբողջությամբ:

Այս տարբեր հայեցակարգերի իրավական բովանդակությունը տարբեր է և անհամադրելի, որոնցում սահմանադրական էությունն ու բովանդակությունը տարբեր են: Պետության սուբյեկտության ակտիվ մոդելի դեպքում սահմանադրաիրավական կարգավորումը իր մեջ կրում է եզրութային հայեցակարգային հակամարտություն, որը վերացնում է իրավունքի էությունը և փոխարինում է այն համապարտադիր կանոններով, փոխարինելով իրավագոյացումը կանոնագոյացմամբ, պարտավորության ինստիտուտը փոխարինում է հարկադրական կանոնակիրառմամբ: Պետության օպերացիոն գործառնավորման տեսանկյունից դա կարող է լինել աննկատ, քանի որ իրավունքի դրսևորման իրավակիրառ մակարդակը «իրավունք չունի» քննարկել կամ սահմանել արդարադատության արդարության չափանիշները, որպես ֆունկցիոնալ՝ իր գործադիր բնույթի բերումով, պարտավոր է պահպանել «համապարտադիր վարքագծի կանոնները»:

Արդյունքում նշմարվում է պետականագոյացման համակարգային հակամարտություն, որը կայանում է նրանում, որ պետականության մեթոդաբանական բազիսը, պետության գործառնավորման օպերացիոն բազիսը, որը դիտարկվում է քաղաքական փիլիսոփայությունից դուրս, նեղացվում է տնտեսագետների մոտեցման շրջանակներում, որոնք պե-

տությունը դիտարկում են որպես բիզնես սուբյեկտ, որպես ունիվերսալ կոնստրուկտիվ, միայն պետության դեպքում է, որ վերջինս ձգտում է առավելագույնի հասցնել ոչ թե շահույթը, այլ իշխանական լիազորությունների ծավալը, դրանք օգտագործելով սեփական վերջնական նպատակներին հասնելու համար, ինչպիսին որ նրանք չլինեն:

Նման համակարգային հակամարտության պայմաններում ձևավորվում է համակարգային ռեցիդիվ.

Ամեն ինչ դիտարկվում է օգուտի հարթության մեջ: Պետության դիսֆունկցիան հանդես է գալիս որպես իրավական էության փոխարինման արդյունք, որտեղ էկոնոմիկան չի բխում պետականության աստիճանակարգային կառուցվածքից, որպես հասարակական կառուցվածքի համակարգի, այլ ընդհակառակը, պետությունը հանդես է գալիս որպես օգուտի տնտեսական կոնստրուկտիվի մասնավոր դեպք: Պետության էության նման գաղափարախոսական իրավասահմանման արդյունքում, որպես պարտավորության անվիճելի և առաջնային սահմանադրական առարկա- փոխարինվում է հասարակության և պետության միջև առևտրով, որոնք ունեն օգուտի տարբեր ոլորտներ:

Ստորև ներկայացնում ենք իրավունքի գործառնական գործողության սխեմատիկ կոնստրուկտիվը «ռացիոնալ ընտրության պարադիգմայում», պետության քաղաքական դինամիկայի շրջանակներում:



Նման դասավորվածությամբ «պետության հիմնական գործիքը համարվում է այս կամ այն խմբի հպատակների սատարման գրավումը նրանց օգտին ուրիշներից զավթած հարստության վերաբաշխման» միջոցով...

Այս պարագայում պետությունը պարփակվում է քաղաքական իշխանության ներքին բնույթի մեջ, ունենալով կենտրոնական նպատակ և խնդիր՝ ցանկացած միջոցով փոփոխվող հանգամանքների պայմաններում ապահովել իշխանության համակարգի հավերժությունն ու անխափանությունը, սահմանելով այն ուղին, որով զարգանում են կառավարման ձևերը, այլ ոչ թե ուղին է սահմանվում այդ ձևերով: Սա սահմանադրականության համակարգային հակամարտության թաքնված ռեցիդիվ է, երբ սահմանադ-

ությունը գրվում է կամ փոփոխվում է հարմարավետ կառավարման ձևի համար, այլ ոչ հակառակը, որ կառավարման ձևը և հասարակական համալիր գործընթացների կառավարման համակարգը բխեցվում են պարտավորության (долженствование) սահմանադրական կարկասից, որը իրացնում է հասարակության արժեքների համակարգը՝ պետական շահերի իրավական մետրիկայով: (Պոզիտիվիզմի կոնֆլիկտաբանական բնույթը):

Պետության և հասարակության շահերի միջև անհավասարակշռությունը հնարավոր չէ լուծել առանց լեգիտիմության իրավական մետրիկայի, որը որոշում և ուրվագծում է իրավական թույլատրելիության սահմանները (շահերը որպես այդպիսիք), որն էլ իր հերթին կարող է դուրս բերվել պետության շահերի իրավական բովանդակության և հասարակության շահերի իրավական բովանդակության կոնստրուկտիվներից:

Անհավասարակշռության նշմարման հնարավորության բացակայությունը դեռևս չի նշանակում որ այդ անհավասարակշռությունը կանհետանա և չի լինի, թեպետ իրավական առումով ոչ ոք ձևականորեն այն չի էլ կարող ապացուցել սահմանադրական ձևաչափի բացակայության պարագայում, որի հիման վրա հնարավոր կլիներ անցկացնել սահմանադրական մշտադիտարկում: Սա ուղղակիորեն վերաբերում է վերը նշված սահմանադրական օբյեկտներին ինչպես իրավական բովանդակության կոնստրուկտիվի առումով, այնպես էլ դրանից բխող իրավակիրառ ձևաչափի առումով, որը հնարավորություն է տալիս պրակտիկայում գնահատական տալ

անհավասարակշռությանը և իրականացնել սահմանադրական մշտադիտարկում պետության և հասարակության շահերի բախումները կանխարգելելու առումով: Քանզի հակամարտության առկայությունն արդեն իրենից ներկայացնում է սահմանադրականության, քաղաքացիական իրավական հասարակության սկզբունքի վերացում և այս կամ այն ձևով Սահմանադրության խախտում:

Ուստի իրավագիտության տրամաբանական հարթակը տեսականորեն թույլատրում է նման հակամարտության առկայությունը որպես «իրերի բնական վիճակ» պետության զարգացման դինամիկայի պայմաններում և համապատասխանաբար պետություն-հասարակություն հարաբերություններում նոր հանգամանքների ի հայտ գալով: Ավելին, այդ ամենը բնական և օրինաչափ չեն և բացառում են ***սահմանադրականությունը, որի խնդիրն է սահմանել պետականության բազիսի անփոփոխելիությունը (արժեհամակարգի և կառավարման ձևի սահմանադրական կոնստրուկտիվը, որն ապահովում է այդ արժեքների համակարգի ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը) և իրավական համակարգը, որը ապահովում է այդ պետականության իրավական ամրագումը և իրավաբանական ուղեկցումը արդեն օպերացիոն գործառնական մակարդակում:***

Այս պարագայում սահմանադրականության էությունը անորոշ է դառնում հասարակության քաաքացիական իրավասությանը համաչափ, երբեմն իջնելով մինչև կենցաղային մտածողության մակարդակ, ձևավորելով անկարողություն հասկանալու սահմանադրական բազիսի փոփոխության ի-

րավական բովանդակության և կարգավիճակի տարբերությունը և այն հանգամանքները, որոնք փոխգործակցության կոնֆիգուրացիայի փոփոխության ուժով պահանջում են իրավական ամրագրում համալիր հասարակական գործընթացի շրջանակներում, որոնք նոր հանգամանքների (որոնց իրավական բովանդակությունը չպետք է դուրս գա սահմանադրական բազիսի շրջանակներից) բերումով պահանջում են կատարելագործում և լրացոցիչ իրավական ամրագրում:

Սա իրավական վերլուծության որակի համարժեքության համար պատասխանատվության առանցքային հիմնահարցն է, որն ի վիճակի է հասկանալ իրավունքի էությունն ընդհանրապես և սահմանադրականության իրավական բովանդակությունը, որպեսզի «ակնածանքով» վերաբերվի իրավունքի գենեզիսի, հասարակության, պետության, պետականության ինստիտուտի ամրագրման իրավագոյացման և պետության իրավասուբյեկտության գործառնական նախագծման հիմքերին վերաբերող ցանկացած հարցի: Սահմանադրությունը ընթացիկ իրավիճակի ներքո չի կարող գրվել: Սահմանադրականության, որպես պետականության իրավական ամրագրման դիսցիպլինի գաղափարը չի կարող հիմնվել կարճաժամկետ կամ նույնիսկ միջնաժամկետ հանգամանքների իրավաստեղծագործության վրա, սակայն օբյեկտը սահմանադրական օրինաստեղծագործության կարգավիճակ ձեռք է բերում միայն այն դեպքում, եթե ունենում է համակարգաստեղծ ֆունկցիոնալություն, այսինքն բովանդակային և մասնավորապես, նրա իրավական բովանդակության կազմվածքի առումով ունենում է ոչ միայն երկարաժամկետ ֆունկցիոնալության բնույթ, այլև, որպես բազային օբյեկտ, անփոփոխելիության իմանենտ կարգավիճակ, որից կախված է համակարգային ամբողջականությունը: ***Մասնավորապես, պետությունը չունի բարձրագույն իշխանության իմանենտ իրավունք, այն պատկանում է բացառապես ժողովրդին-հասարակությանը (հասարակության իրավական բովանդակությունը):*** Այս պարագայում իրավունքի համակարգի կառուցման համակարգային ճարտարաբանությունը սկզբունքորեն չի ապահովում իրավագոյացման առաջին և երկրորդ սահմանադրական ակտերը, պարփակվելով ընդամենը իրավունքի գործողության օպերացիոն տարածության մեջ ձևական առումով սահմանադրության ակտի ընդունմամբ, որպես տեխնիկական ընթացակարգ:

Համակարգային հակամարտությունների գենեզիսի մեթոդաբանական համալիրի առջև ծառացած կենտրոնական առանցքային հարցը իրավունքի էության տեսանկյունից շարունակում է մնալ մարդկության պատմության մեջ հավաքական գոյի ամենասկանդալային ռեցիդիվին առնչվող հարցին պատասխանելու փոստացի ունակությունը. ինչպե՞ս են պետությունն ու հասարակությունը միմյանց հետ փոխգործակցում, որի արդյունքում չեն արդարացնում մեկը մյուսին՝ միմյանց գցելով խղճուկ և անարժան վիճակի մեջ.....

Ցանկացած սահմանադրաիրավական կարգավորման համակարգ հայեցակարգային-եզրութային սանձարձակության, ամենաթողության և վերլուծական քաոսի պայմաններում, որպես կանոն, իրավունքի և կառավարման էության,

ինչպես նաև համարժեք ֆունկցիոնալ առաքելության տեսակետից պետք է համարվի է ոչ լեգիտիմ: Մինչդեռ իրավունքի էությունն ֆունկցիոնալ առաքելությունը կառավարման օրինականանության ապահովումն է լեգիտիմության հստակ ու միանշանակ չափանիշները սահմանելու միջոցով: Բնականաբար, եթե գոյություն չունի գիտական մոտեցում, ապա առաջանում է մի իրավիճակ, որտեղ թույլատրելի է դառնում սահմանումները, հասկացությունները և կատեգորիաները իրենց խիստ գիտական ձևաչափից փոխարինել սուբյեկտիվ բնույթի ենթագիտակցական ընկալումներով: Դրանք որպես կանոն, ունեն ոչ պրոֆեսիոնալ բնույթ՝ պայմանավորված իրավունքի և նորմաստեղծագործության ոլորտի սուբյեկտների (հատկապես օրենսդիր իշխանության թևի) գիտելիքների, կրթվածության և փորձի սահմանափակ մակարդակով: Արդյունքում բխած եզրահանգումների համակցությունը, որոնց որակականությունը դարձյալ որոշվում է ոչ գիտական մտածողության դիսցիպլինի շրջանակներում, դրսևորվում է կենցաղային մտածողության սուբյեկտիվ չափանիշներով, որոնք հանգեցնում են վերլուծական քաոսի: Օրինակ այնպիսի հասկացությունների ընկալումն ու բազմաբովանդակ մեկնաբանությունը, ինչպիսիք են ժողովրդավարությունը կամ կոնստիտուցիոնալիզմը, հանգեցնում է ինքնիշխան ժողովրդավարության սկզբունքի ձևավորմանը (եվրոպական, ամերիկյան, արաբական, ասիական, անգամ հայկական ժողովրդավարություն, որոնք արդյունք են «միջազգային իրավունքի ժողովրդավարության» ստանդարտ սահմանման բացակայության, ինչպես նաև անթույլատրելի է կոնստիտուցիոնալիզմի

սուբյեկտիվ նորմականացումը ոչ գիտական դիսցիպլինի շրջանակներում):

Այս պարագայում ցանկացած ընթացիկ իշխանություն և ամենատարբեր քաղաքական ուժեր կիրառում են իրենց սեփական «լեգիտիմության» ինքնահռչակման սկզբունքն այնպիսի կատեգորիաների մեկնաբանությամբ, ինչպիսիք են իրավական կառավարչական համարժեքությունը և իրավական կարգավորումը՝ դրանց ֆունկցիոնալ առաքելության սուբյեկտիվ ընկալման արտապատկերմամբ: Մինչդեռ կառավարումը պետք է ապահովի համալիր հասարակական գործընթացն իր ֆունկցիոնալ համարժեքությամբ, որը պետք է ընթանա համալիր հասարակական արդյունքի ստեղծման շրջանակներում (այն ոչ միայն ներքին համախառն արդյունքն է, կամ համախառն ազգային արդյունքը, այլ առաջին հերթին, ոչ նյութական աղբյուրները, որոնք ուղղված են արժեքների համակարգի ամրապնդմանն ու հասարակության ինքնանույնականացման ապահովմանը): Հակառակ պարագայում ձևավորվում է հեղափոխական անախրոնիզմի սինդրոմ, երբ յուրաքանչյուր ընթացիկ իշխանություն կարող է ցանկացած պահի հեշտությամբ վերացնել, տապալել հին սահմանադրահիրավական կարգավորման համակարգը և հռչակել բոլորովին նոր սահմանադրահիրավական կարգավորման համակարգ՝ որպես միակ լեգիտիմ և օրինական, նախաձեռնելով ըստ էության հրաբխային մի գործընթաց, որում անկանոն կերպով ժայթքում են հասարակական ցնցումներն ու թռուցիկ որպեական լեգիտիմությունը: Հավանաբար, աննհրաժեշտություն է հասունացել, որպեսզի նոր ձևավոր-

ված գիտությունների կողքին, ինչպիսին է հակամարտաբանությունը, ձևավորվի առանձին գիտական դիսցիպլին՝ հեղափոխության տեսություն: Որպես ասվածի օրինակ, կարելի է բերել ԽՍՀՄ սահմանադրության վերացումը, Եգիպտոսում ընթացող իրադարձությունները, կոնստիտուցիոնալիզմի սկզբունքների և նոր պետականության իրավագոյացման գիտական գիտակցման և պատասխանատու ընկալման բացակայության պայմաններում ընթացող սահմանադրությունների շքերթները, արաբական գարունը, ուկրաինական ճգնաժամը և այլն:

Ասվածի համատեքստում առանձին ուսումնասիրության առարկա պետք է դառնա նաև հայկական այսպես կոչված «Թավշյա հեղափոխության» ֆենոմենը, որը նույպես չի տեղավորվում իրավագոյացման և պետականագոյացման գործընթացի լեգիտիմության շրջանակներում, և կարծես թե խեղաթյուրում է ինչպես պետականության, այնպես էլ իրավական պետության ու քաղաքացիական հասարակության գաղափարը:

Այս տեսակետից սահմանադրական իրավունքի գիտության առջև խնդիր է դրված չթույլատրել և կանխարգելել հայեցակարգային-եզրութային ոչ միանշանակությունը, գիտական-իրավական սանձարձակությունն ու ամենաթողությունը, որոնք հանգեցնում են վերլուծական քաոսի, նպատակ հետապնդելով ապահովել իրավական կարգավորման համակարգի հաջորդական զարգացումը լեգիտիմ իրավագոյացման ֆունդամենտալ գիտելիքների հիման վրա: Հենց այս հանգամանքով էլ բացատրվում է հիմնախնդրի հրատապության ծայրահեղ կարևորությունը:

Բացի այդ, Խնդրի նմանատիպ դրվածքը արդյունք է Սահմանադրության համակարգի մշակման մեթոդաբանական հեշտացված մոտեցման, որի նպատակն է այսպես կոչված կառուցողական մոտեցմամբ բացառել անարդյունավետ հիմնարար հետազոտություններն ու դատողությունները, որոնք իրենց տեսական ձգձգումներով խոչընդոտում են սահմանադրական նորմաստեղծագործության գործընթացը: Այն իր հերթին առաջացնում է «Տեքստային սահմանադրությունների» ստեղծման տենդենց և ֆենոմեն, որի արդյունքում շատ երկրներ հայտարարում են. «Մեր սահմանադրության տեքստը լավագույնն է և ամենաժողովրդավարականը աշխարհում կամ եվրոպայում» և այլն: Հիմնարար տեսական բազիսի բացակայության պայմաններում սահմանադրության իրավաձևավորման տրամաբանական հարթությունը նեղացվում է մինչև հռչակագրային կազմվածքների մակարդակ, որոնք որպես կանոն բաղկացած են լինում մի քանի ձևակերպումներից, որոնք փոխարինում են սահմանադրության ամբողջ հայեցակարգային հիմնավորմանը (հատկապես սահմանադրական օբյեկտների ձևականացման ժամանակ):

Արդյունքում ձևավորվում է մի իրավիճակ, որում ինչպես իրավագիտության գիտական կոմպետենտությունը (ի դեմս փորձագիտական հանրության), այնպես էլ քաղաքացիական կոմպետենտությունը (ի դեմս յուրաքանչյուր քաղաքացու և ամբողջությամբ վերցրած՝ հասարակության) ընկալում են այս «հռչակագրային ոչ կոմպետենտությունը» բուտաֆորիայի ձևաչափով որպես լիիրավ սահմանադրական նորմաստեղ-

ծագործություն, և ժամանակի հետ միասին աճող իներցիայով այն դառնում է որպես ի վերուստ տրված իրողություն: Իրերի նման դրվածքի պարագայում նույնիսկ հնարավոր է մեկ տողանոց Սահմանադրության ընկալում. «յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության և երջանկության իրավունք, և ժողովրդավարական պետությունը պետք է ապահովի իր բոլոր քաղաքացիների երջանկությունը...»: Ավելին, Սահմանադրության գործառնական անունակությունը դրանում ամրագրված նպատակների լուծման սկզբունքների ու մեթոդների բացակայության պատճառով դարձյալ կարող է արդարացվել տրամաբանական բուտաֆորիայի հիման վրա, որը նույնպես ունի հռչակագրային բնույթ. «Այդ ո՞վ ասաց, որ Սահմանադրությունը ձեռնտու չէ հասարակությանը, այն ձեռնտու չէ քաղաքականությամբ զբաղվողներին... Օրենքները լավն են, սակայն դրանք չեն իրականացվում, ուստի եթե հստակորեն հենվենք սահմանադրության դրույթների վրա և դրանք իրագործենք, ապա հասարակությունը կլինի երջանիկ և լավ կզարգանա, մարդու իրավունքներն ու ազատությունները պաշտպանված կլինեն, իշխանության մարմինները կգործառնավորեն դինամիկ ու արդյունավետ... Բարդ սահմանադրությունն ու օրենքները բնորոշ են նորմալ երկրներին, մեզ պետք են պարզ, հասկանալի ու գործող Սահմանադրություն և համապատասխան օրենքներ, որոնք համահունչ են մեր առանձնահատկություններին...» Միանշանակ նման մոտեցման պարագայում միակ կոնստրուկտիվը դառնում է ընթացիկ իշխանության լեգիտիմացումը սահմանադրության տեքստի մեջ հասցեագրված նորմեր ներմուծելու միջոցով

(ընդհուպ մինչև ցմահ Նախագահի ինստիտուտի ամրագրումը): Նման մոտեցումը ենթադրում է, որ յուրաքանչյուր նոր քաղաքական ուժի իշխանության գալով սահմանադրությունը պետք է հարմարեցվի «նոր քաղաքական իրողություններին», բնականաբար և ենթարկվի փոփոխությունների: Արդյունքում հասարակության «ալեկոծված բանականության» վրա թևածում է հետևյալ հարցադրումը. «Այդ ի՞նչ կար մեր Սահմանադրության մեջ, որը ստիպեց սահմանադրության ընդունման հաջորդ օրը կատարել փոփոխություններ, և ընդ որում հնարավոր չ՞էր արդյոք այն նախապես կանխատեսել սահմանադրության մշակման և ընդունման ժամանակ...» Մենք ցանկանում էինք, որ լավ լինի, բայց ստացվեց՝ ինչպես միշտ...» մոտեցումը դուրս է սահմանադրության ստեղծման համակարգային սիստեմատեխնիկական ստանդարտներից: Չի կարելի ցանկանալ գրել Սահմանադրություն, այլ պետք է իմանալ գրել և՝ ոչ սահմանափակ կարծիքի, այլ հիմնարար գիտական տրամաբանության հիման վրա:

Ասվածի ֆոնին նկատենք, որ այսպես կոչված «թավշյա հեղափոխության» արդյունքում Հայաստանի Հանրապետության նոր իշխանություններն արդեն ձեռնամուխ են եղել նոր սահմանադրական փոփոխությունների նախագծի մշակման նախապատրաստական աշխատանքներին, որպեսզի տակավին նոր՝ ընդամենը 2015 թ. Դեկտեմբերին փոփոխված Սահմանադրությունը համապատասխանեցնեն «թավշյա հեղափոխության» «իդեալներին»: Որպես կանոն, ժողովրդավարական հասարակությունների խնդիրն այն է, որպեսզի մշակեն այնպիսի իրավական և մշակութային առաջնահեր-

թություններ, որոնք կարողանան վերացնել դեմագոգիայի սպառնալիքը այն ժամանակաշրջանում, երբ «դեմագոգիան դառնում է գիտական», չգլխատելով ազատությունները և չ-վերացնելով դելիբերացիայի քաղաքական բնույթը, ինչպես նաև ժողովրդավարության ընթացակարգային և ներկայացուցչական կոնֆիգուրացիան[17]: Արդյունքում հասարակության մեջ ծնունդ է առնում «գործադիր իշխանության համակարգային հակամարտությունը», այսինքն օպերացիոն սպառնալիքի, որպես գործառնական պատասխանատվության առաջնահերթ և հիմնական առարկայի, ստեղծում, որի արդյունքում գործադիր իշխանության լիազորություններն ու ինքնավարությունը ամբողջությամբ հիմնավորվում և արդարացվում են սպառնալիքի առջև հասարակության վախի հոգեբանական հիմքով: Կարծես թե գաղափարական առումով նույն իրավիճակն ունենք նաև Հայաստանում, երբ տնտեսական, սոցիալական, հոգևոր-մշակութային ոլորտներում առաջընթացի բացակայությունը սվաղվում է այն սպառնալիքով, որ. «եթե չլինի գործող իշխանությունը, ապա կվերադառնան հները»: Սա պոպուլիզմի ամենավտանգավոր դրսևորումներից մեկն է:

Փաստացի պետության կառույցի և հասարակության մոդելի հայեցակարգային հիմնավորման և դրա արդյունքում իրավական ամրագրման բացակայության արդյունքում տեղի է ունենում ժողովրդավարության հայեցակարգի աղավաղում և

[17] Տե՛ս ***Ackerman B.*** **The Decline and Fall of the American Republic. Cambridge,** MA: **Harvard University Press, 2010. P. 26**

պրակտիկայում հասարակության մեջ դառնում համակարգային հակամարտությունների պատճառ: Հետևանքը լինում է այն, որ ժողովրդավարություն կատեգորիան դառնում է պետությունների ղեկավարների, տարբեր բարձրաստիճան պաշտոնյաների և քաղաքական գործիչների կողմից մանիպուլյացիայի առարկա և վերածվում դեմագոգիայի: Ինչ խոսք, այդ մոտեցումները վերջիններիս մոտ ձևավորվել են պետական կառույցի գործառնավորման և հասարակական հարաբերությունների փաստացի դրսևորման արդյունքում: Բերենք վերը նշված անձանց կողմից ժողովրդավարության վերաբերյալ հրապարակած տեսլականները, որոնք վկայում են ժողովրդավարության հայեցակարգային բազմազանության և համակարգային հակամարտության առկայության մասին: Այսպես, ըստ Ռոբեր դե Ֆլերի. «Ժողովրդավարությունը դա անուն է, որը տրվում է ժողովրդին, երբ նրա կարիքը զգացվում է: Ժողովրդավարությունը կարգուկանոնի կապիտուլյացիան է քաոսի դեմ»[18]: Մեկ այլ բնորոշմամբ՝ «Ժողովրդավարությունը այն է, երբ իշխանությունները այլևս չեն նշանակվում բռի այլասերվածների կողմից, այլ ընտրվում են տգետ մեծամասնության կողմից» (Բեռնարդ Շոու)[19]: Ամերիկյան մեծանուն քաղաքական գործիչ Բենջամին Ֆրանկլինը գրում է, որ «Ժողովրդավարությունն այն է, երբ երկու գայլն և գառնուկը որոշում են, թե ինչ է սպասվում ճաշին»[20]: Մյուս

[18] Տե՛ս http://wisdomcode.info/ru/quotes/themes/49080.html?page=7.
[19] Տե՛ս նույն տեղը:
[20] Տե՛ս նույն տեղը:

բնորոշմամբ՝ ժողովրդավարությունը այն է, երբ ժողովուրդը վերցնում է իշխանությունն իր ձեռքը, իսկ իշխանությունը նստում է նրա վզին (Բորիս Կրուտիե)[21]: Աղավաղված ժողովրդավարության բավականին ինքնատիպ բնորոշում է տալիս Ժակ Ֆրեսկոն, համաձայն որի՝ Ժողովրդավարությունը դա փչանություն է: Այս բառը հորինված է, որպեսզի հանգստացնեն մարդկանց: Ստիպեն նրանց համաձայնվել հասարակության մեջ գոյություն ունեցող ինստիտուտների հետ, որոնք աղաղակում են. «մենք ազատ ենք»: Երբ լսում եք ազատություն և ժողովրդավարություն, զգոն եղեք: Քանի որ իրական ազատ երկրում անհրաժեշտություն չկա բացատրելու, որ դուք ազատ եք[22]: Ամերիկյան սահմանադրականության հիմնադիրներից մեկի՝ Թոմաս Ջեֆերսոնի կարծիքով՝ ժողովրդավարությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ ամբոխի կառավարում, որտեղ մարդկանց հիսունմեկ տոկոսը կարող է քառասունինը տոկոսին զրկել իր բոլոր իրավունքներից[23]:

Ժողովրդավարության աղավաղված հայեցակարգի պրակտիկ ընկալման թերևս ամենացայտուն օրինակը ԱՄՆ նախկին պետքարտուղար Ջոն Քերրիի տեսակետն է, համաձայն որի՝ «ԱՄՆ-ում իրավունք ունեք լինել հիմար, եթե դուք ցանկանում եք լինել այդպիսին: Միևնույն ժամանակ, դուք կարող եք պատսպարվել այն մարդկանցից, որոնք ձեզ դուր չեն գալիս: Իշխանությունները դա սատարում են: ես կարծում

[21] Տե՛ս նույն տեղը:
[22] Տե՛ս նույն տեղը:
[23] Տե՛ս նույն տեղը:

եմ, որ դա առաքինությունն է»[24]:

Փաստացի մենք գործ ունենք ժողովրդավարության համակարգային հակամարտության հետ, որում ԱՄՆ-ն աշխարհի ամենաժողովրդավարական և ազատ պետությունն է, քանի որ նույնիսկ հիմարն իրավունք ունի լինել այդպիսին: Այս պոստուլատի պոզիտիվիստական բնույթը ոչ միայն չի կանխարգելում, այլև թույլատրում է, որպեսզի իդիոտիզմը (հիմարությունը) կարողանա ստանալ իշխանական լիազորություններ՝ անգամ բարձրագույն իշխանության՝ պետության գլխի, մակարդակում : Տարօրինակն այն է, որ աղավաղված ժողովրդավարության գաղափարը ամենայն հոգատարությամբ խրախուսվում և մեծ տարածում է ստանում քաղաքակիրթ համարվող Եվրոպայում: Որպես ասվածի օրինակ բերենք Եվրամիության անվտանգության քաղաքականության և արտաքին գործերի գերագույն ներկայացուցիչ Քետրին Էշտոնի հայտարարությունը.«Ուկրաինայիում պետք է պահպանվի բռնություն կիրառելու պետության մենաշնորհը»: Կարծում ենք նմանատիպ հայտարարությունները բովանդակային առումով հուղարկավորում են իրավունքի էությունը, հիմք ստեղծելով ամենաթողության ու քաոսի համար: Խնդիրն այն է, որ ամենաբարձր մակարդակի պաշտոնատար անձանց կողմից չի գիտակցվում այն հանգամանքը, որ ցանկացած

[24] Տե՛ս Джон Керри: американцы имеют право на глупость. Но имеет ли право на курьезную оговорку сам новый госсекретарь США? Հասանելի աղբյուրը՝ 26.09.2019 թ. http://www.mk.ru/politics/2013/02/27/819021-dzhon-kerri-amerikantsyi-imeyut-pravo-na-glupost.htm

բռնության ակտ իր էությամբ հակահիրավական է: Արդյունքում, պետությունը նմանատիպ հակահիրավական գործողություններով հուղարկավորում է ժողովրդավարության գաղափարը և դառնում հասարակության թիվ մեկ հակառակորդը: Դրա արդյունքում միաժամանակ իրավունքի գերակայության սկզբունքը գլխիվայր շուռ է գալիս. Ուժը գերիշխում է իրավունքին: Մինչդեռ պետություն - հասարակություն փոխհարաբերությունների իրական տիրույթում նրանց շահերը պետք է մեկտեղված լինեն, այսինքն, լիովին համընկնեն միմյանց հետ: Այլ է խնդիրը, երբ ժողովրդավարական հասարակության մեջ հակահիրավական ցանկացած վարքագծային դրսևորում բախվում է պետության կողմից հարկադրանքի կիրառման, ինչը միանգամայն օրինական է: Այս առումով, լավ կլիներ, մեր եվրոպացի և արևմտացի բարձրաստիճան պետական այրերը կարողանային միմյանցից տարազատել «բռնություն» և «հարկադրանք» կատեգորիաները, որոնց բովանդակության խեղումը կարող է ճակատագրական վատ հետևանքներ ունենալ հասարակության վրա:

Ժողովրդավարության ֆենոմենի ոչ միանշանակության և ձևախեղման արդյունքում, որպես համակարգային հակամարտության դրսևորում, լայն տարածում է գտել ժողովրդավարության արտահանումը՝ առանց այն ընդունողի ցանկության, այսինքն, ապրանքը ներկրելու կամ գնելու ցանկության բացակայությամբ: Այս երևույթն իր իրավական բավանդակության տեսակետից կարելի է որակել որպես բռնություն, այլ ոչ՝ հարկադրանք, հատկապես երբ պարբերաբար փոփոխվում են արտահանողի սահմանադրական հիմունքները:

Թեպետ ժողովրդավարության արտահանման հայրենիք կարելի է դիտարկել առաջին հերթին ԱՄՆ-ը, սակայն, ԱՄՆ նախկին պետքարտուղար Հիլարի Քլինտոնն արդարացիորեն նկատում է, որ. «ժողովրդավարությունը կարող է սազել Երկրագնդի ցանկացած այլ անկյանը, բայց ոչ Ասիային: Այն չի տեղավորվում այս տարածաշրջանի զարգացման տրամաբանության մեջ, հնարավոր է, նույնիսկ հակասում է ասիական արժեքներին»[25]:

Փաստորեն առանց ընդունողի համաձայնության ժողովրդավարության արտահանումը հիմնարար պատճառ է հանդիսանում, որի արդյունքում ահաբեկչությունը, որպես իրավական օբյեկտ, միանձնյա դրսևորման ակտից վերափոխվում է այդ բռնությանը դիմադրելու և հակադրվելու համակարգային երևույթի:

Ժողովրդավարությունն արտահանողի համար տվյալ հակադրությունը հանդես է գալիս որպես հասարակության սպառնալիքի նյութականացման անհրաժեշտ գործիքային ագրեգատ, որով իշխանությունը նախաձեռնում է ժողովրդավարության արտահանումը: Արդյունքում հասարակության զարգացման և բարեկեցության առաջնահերթությունը փոխարինվում է սպառնալիքի հաղթահարմանն ուղղված բոլոր ուժերի համախմբման պարադիգմայով՝ ընդհուպ մինչև հասարակության անհարմարավետության արտակարգ ռեժիմ:

Սահմանադրությունը պետության ակտիվ սուբյեկտության ռացիոնալ ընտրության պարադիգմայում, որպես իրա-

[25] Տե՛ս http://wisdomcode.info/ru/quotes/themes/49080.html?page=7.

վական ամրագրման առարկա, դիտարկում է ոչ թե հասարակական պայմանագիրը, այլ հարմարավետ իրավակարգը, որն ապահովում և պահպանում է իշխանության մաքսիմիզացիան, որպես իր շահերի հիմնական առարկա:

Որպես կանոն, սահմանադրության բովանդակության համալրումը առավելապես պետք է կողմնորոշվի այն հիմնարար հարցերի ուղղությամբ, որոնք ապահովում են ազգային և հասարակական նույնականացումը և արժեքների բազիսային համակարգը որպես հասարակության զարգացման հիմնական կառուցակարգ: Մինչդեռ, այն դիտարկվում է որպես զսպումների և հակակշիռների կառուցակարգ, որի նպատակն է պահել պետության և հասարակության միջև պերմանենտ գոյություն ունեցող շահերի հակամարտությունը փոխկապակցված պայմանական հավասարակշռության մեջ: Սա հենց կոնֆլիկտային հասարակության մոդելն է, որում դժվար է կյանքի կոչել ժողովրդավարական և համամարդկային արժեքները:

Վերոգրյալից միանշանակ հետևում է, որ արդիականության ճգնաժամը դա պետականության ինստիտուտի համակարգային հակամարտությունների ռեցիդիվի առկայությունն է, որը հենվում է պոզիտիվիզմի տրամաբանական հարթակի և պոզիտիվ իրավունքի գործառնական անունակության վրա, որն իր մեթոդաբանական հիմով չի կարող իրականացնել քաղաքակրթագոյացման համարժեք իրավական ամրագրում և ինչպես համաշխարհային հանրության, այնպես էլ պետություններում հասարակության իրավական կարգավորման համակարգի նախագծում՝ գլոբալ ինտեգրման ինտենսիվ դի-

նամիկայի պայմաններում:

Ժողովրդավարական հասարակության հակամարտածին բնույթը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ մեր օրերում սահմանադրականության առողջ ավանդույթները դեգրադացվել են ոչ միայն բարձր իրավագիտակցությամբ օժտված քաղաքացիական հասարակություն զարգացման բարձր մակարդակ ունեցող պետություններում, այլև զարգացման և կայացման գործընթացում գտնվող անցումային այն պետություններում, որոնք բռնել են նոր պետականության կերտման ուղին:

Դեգրադացիան հիմնականում դրսևորվում է այդ երկրներում քաղաքացիական իրավասության մակարդակի կտրուկ անկմամբ, ինչպես նաև տեխնիկական առաջընթացի և գլոբալ ինտեգրացիայի որակապես նոր և աննախադեպ մարտահրավերների պարագայում օպերացիոն իրավակարգավորման գործընթացում սահմանադրական նորմերից հեռացմամբ, նույնիսկ դրանց ոտնահարմամբ:

Ժողովրդավարական հասարակության մեջ «ահաբեկչության» ֆենոմենոլոգիայի բյուրեղացումը որպես օպերացիոն սպառնալիք, առանց դրա իրավական բովանդակության բացահայտման, որը և նշանակում է դրա առարկայի սահմանադրումը, ինչի հետևանքով սահմանադրական նորմի մետրիկայով գործող սահմանադրության մեջ ահաբեկչության սահմանադրաիրավական ամրագրման բացակայությունը, ստեղծեցին պոզիտիվիստական իրավական ամրագրման նախադեպ՝ օպերացիոն սպառնալիքի կառավարման առաջնահերթությամբ: Խոսքը գնում է ԱՄՆ-ում Կոնգ-

ռեսի կողմից 2001 թ. Հոկտեմբերի 26-ին ընդունված «Հայրենասիրական ակտ»-ի[26] մասին, որը թույլ է տալիս պետությանը ոտնահարել իր քաղաքացիների սահմանադրական իրավունքներն ու ազատությունները մասնավոր կյանքի անձեռնմխելիության ոլորտում: Խոսքը գնում է չսանկցավորված գաղտնալսումների, մասնավոր ձեռնարկատիրական գործունեության և օրենսդրությամբ արգելված մարդու մասնավոր կյանքի տարբեր ոլորտներ ներխուժելու մասին: Փաստաթղթում այդ ամենը ստորադասվում է ահաբեկչության դեմ պայքարին և պետության անվտանգությանը՝ հուղարկավորելով շատ ժողովրդավարական արժեքներ:

Միաժամանակ ժողովրդավարական հասարակության մեջ նոր մարտահրավերներ են ծառացել տեխնիկական առաջընթացի և «լրատվական հեղափոխության» արդյունքում: Այդ մարտահրավերները ոչ թե ունեն սովորական օպերացիոն բնույթ, այլ ինստիտուցիոնալ են և առնչվում են հասարակության գործառնավորման և կառավարման բնույթի փոփոխություններին: Խնդիրն այն է, որ «լրատվական հեղափոխության» արդյունքում հավաքական գոյի տարածությունում նոր թափ է առնում կիբերհանցագործության ֆենոմենը, որը լինելով ժողովրդավարական հասարակության արդյունք, դեռևս սահմանադրահիրավական ամրագրում չի ստացել և օրենսդրության մակարդակում համակարգային կերպով չի գործում: Որպես օրինակ, բերենք Ֆեյսբուքի կամ այլ սոցիալական ցանցերի կիբերտարածությունները, որոնք ըստ էության գեներացնում են բազմամիլիոնանոց օգտատերերի կողմից խոսքի ազատության իրավունքի իրականացում: Սակայն, արդյունքում, չունենալով ձևավորված քաղաքացիական հասարակություն, այդ կիբերտարածությունը վերածվում է վիրավորանքի, զրպարտության, հասարակության պառակտման, թշնամության, անհանդուրժողականության, ազգակործան, այլասերվածության, բնականությունից հեռանալու քարոզի հարթակի, առանց իրավական պատասխանատվության կառուցակարգերի: Իհարկե, նմանատիպ հանցագործությունների հետևանքների արդյունքում արդեն պոստ ֆակտում ընդունվում են օրենսդրական ակտեր, որոնք ըստ էության գրվում են կոնկրետ գործերի քննության օպերացիոն տրամաբանության հիման վրա, առանց բացահայտելու դրանց սկզբնապատճառները պատճառական և ֆենոմենոլոգիական մակարդակում և համապատասխանաբար առանց իմաստավորելու և բացահայտելու իրավական ամրագրման առարկայի իրավական բովանդակությունը՝ այդ ամենը ընդհանուր եզրութաբանությամբ բնութագրելով որպես հանցագործություն:

Արդյունքում այդ օրենսդրական ակտերն իրեն մեջ ոչ միայն չեն ներառում մարդու իրավունքների ոտնահարումների ծագման կառուցակարգը և հասարակական համալիր գործընթացի այս կամ այն մակարդակում շեղումները, այլ գործի են դնում «հանացագործության առարկայի» իրավական բովանդակության փոխարինումը «հանցագործություն» օպերատիվ իրադարձությամբ, որը հետաքննական բնութագ-

[26] Տե՛ս The USA PATRIOT Act: Preserving Life and Liberty, https://www.justice.gov/archive/ll/highlights.htm

ների շատ սահմանափակ շրջանակներում նկարագրվում է այնքանով, որքանով այն կատարվել է:

Օրինաստեղծագործության նմանատիպ տրամաբանությունը ուղղակիորեն կախված է առաջացած նախադեպերի էվոլյուցիայից, որում առարկան և իրավական մետրիկան կարող է բյուրեղացվել միայն հավանականության հիմքով, ելնելով վիճակագրությունից: Բնականաբար, եթե կիբերհանցագործության և ահաբեկչության ֆենոմենի բնույթն ամբողջությամբ անհայտ է, ապա այդ գործընթացը կլինի անվերջ:

Որպես ասվածի վառ օրինակ կարելի է ներկայացնել Վիքիլիքսի և Սնոուդենի հետ կապված դեպքը, երբ կիբերհանցագործության սահմանադրական ձևաչափի բացակայության պայմաններում իշխանությունն իրեն կարող է թույլ տալ խախտել սահմանադրությունը: Այսինքն կիբերտարածությունում լրատվական շրջաառության սահմանադրական ամրագրման բացակայության հետևանքով տեղի է ունենում տոտալ հետպնդում:

Ժողովրդավարական հասարակության մեջ պետության և իրավական համակարգի ձևավորման համար առանցքային նշանակություն ունի լրատվության իրավական բովանդակության վերհանումը՝ գլոբալ համակարգի համարժեք ազատական իրավաբանական մոդելի մշակման և իրականացման հայեցակարգային սկզբունքների ընդգծմամբ, որը հնարավորություն կտա ապահովել դրա թափանցիկության ու հանրամատչելիության գործառնական կարգավիճակը, որպես գլոբալ առաջընթացն ապահովող հիմնական հատկանիշ: Խնդրի բարդությունը կայանում է նրանում, որ լրատ-

վության իրավական բնույթին վերաբերող հայեցակարգային բաց մնացած խնդիրները անհրաժեշտություն են առաջացնում ժողովրդավարական հասարակության մեջ նահանջել թափանցիկության սկզբունքներից՝ մտցնելով ցենզուրա, ինչպես նաև ազգայնացնել գլոբալ ցանցը լիազորված հեղինակության կողմից ցենզուրայի նկատմամբ վերահսկողական գործառույթներ իրականացնելով: Դա ըստ էության կարող է հանգեցնել գլոբալ ցանցի, որպես գլոբալիզացիայի բազային կոմունիկացիոն հարթակի, ազատական իրավաբանական կարգավիճակի փոփոխության կամ վերացման, ստեղծելով նոր սուբստանց՝ հնարավոր հետադիմության և լճացման մուտացիոն տենդենցով:

Մասնավորապես, լրատվության իրավական բնույթի տեսանկյունից կարելի է օրինակ բերել ժողովրդավարական հասարակության մեջ նեգատիվ բովանդակությամբ (սուիսիդ, մանկական պոռնոգրաֆիա, պեդոֆիլության պրոպագանդա համասեռամոլություն, քսենոֆոբիա և այլն) լրատվության թույլատրելիության, արգելքի կամ մատչելիության սահմանման ոչ միանշանակությունը, որը կարող է դիտարկվել որպես իրավական կարգավորման դրական գործիք՝ նեգատիվ նախադեպերի չթույլատրման և կանխարգելման գործառույթով: Միաժամանակ այն ակնհայտորեն կարող է հանդես գալ որպես նորմից շեղվելու պոտենցիալ վտանգի կրող, գեներացնելով այս կամ այն մակարդակի իրավախախտում:

Սրանում է կայանում ժողովրդավարական հասարակությունում իրավահարաբերությունների նոր երևութաբանության հակամարտածին բնույթը հասարակական համալիր գործըն-

թացի կառուցվածքային փոփոխությունների, գլոբալ ինտեգրացիայի, տեխնիկական առաջընթացիպետականության քաղաքատնտեսական բազիսի փոփոխության դինամիկայի արդյունքում:

|Ժամանակակից ժողովրդավարական երկրներում թերևս ամենավիճահարույց հարցը շարունակում է մնալ այն հարցը՝ արդյո՞ք պետությունն ինքնուրույն է հասարակությունից: Հենց այս խնդիրն էլ դառնում է համակարգային հակամարտության ծագման պատճառ, որի արդյունքում պետության և հասարակության միջև ծնունդ է առնում անտագոնիզմը:

Նման անտագոնիզմի իրավական ամրագրումը իրավունքի էության տեսակատից պետության ակտիվ իրավասուբյեկտության հարթությունում ռացիոնալ ընտրության արդյունքում դիտարկվում է որպես մշտապես գոյություն ունեցող օբյեկտիվ իրողություն: խնդրի տրամաբանական լուծումը պահանջում է հստակ վերհանել հասարակության և պետության ծագումնաբանությունը և շեշտադրել վերջիններիս աստիճանակարգը: Սահմանադրաիրավական ամրագրման ժամանակ այդ օբյեկտների աստիճանակարգման խախտումը անխուսափելիորեն հանգեցնում է հասարակության մեջ համակարգային հակամարտությունների: Իսկ որ՞ն է սահմանադրաիրավական ամրագրման այդ աստիճանակարգը:

Եթե բերենք Հայաստանի Հանրապետության օրինակով, ապա ժողովրդավարական հասարակության և պետության սահմանադրման աստիճանակարգը պետք է ունենա

հետևյալ տեսքը

1. հայի, որպես մարդու պատվի և արժանապատվության ինքնանույնականացում,

2. հայի, որպես ժողովուրդ ձևավորող ռասսայի ներկայացուցչի ինքնանույնականացում, որը հանդես է գալիս որպես քաղաքակրթագոյացման կրող,

3. հայի, որպես հասարակության անդամի՝ պետականության կերտման իրավագիտակցությամբ, ինքնանույնականացում,

4. հայի, որպես հավաքական գոյի քաղաքակրթական համակարգը ձևավորողի ինքնանույնականացում,

5. հայի որպես քաղաքացու, որը հանդես է գալիս որպես հասարակական համալիր գործընթացի գործառնական հիմք, ինքնանույնականացում,

6. հայի, որպես իրավական պետության կերտման և քաղաքացիական հասարակության ինքնանույնականացման ապահովման գործառնական միավորի ինքնանույնականացում,

7. հայի, որպես համաշխարհային հանրության անբաժանելի անդամի և համամարդկային քաղաքակրթական գործընթացի միավորի իրավագիտակցությամբ, ինքնանույնականացում:

Կենտրոնական հարցն ու առանցքային խնդիրը համարվում է համալիր իրավագիտակցությունը, որն իր մեջ ներառում է ժողովուրդի, հասարակության և պետական իշխանության իրավագիտակցությունը, որն ապահովում է նպատակների, գործառույթների և մեթոդների ընկալումը, ինչպես

նաև իրավագոյացման լիարժեք համակարգի կառուցման ունակությունը, առանց որի իրավակիրառման որակի հանարավոր չէ հասնել, հաշվի առնելով պետության կայացման փուլերը (դրանց բովանդակության և ռազմավարական հաջորդականության հստակ ընկալմամբ), արդարադատության համակարգը, որն իրականացնում է ցանկացած գործողության և իրադարձության հստակ և համարժեք իրավական գնահատական տալու օպերացիոն գործընթացը: Այս ամենի բացակայությունը չի կարող ապահովել իրավահնազանդության իրավագիտակցությունը, քանզի իրավահնազանդությունը պահանջում է համարժեք իրավական տրամաբանություն, որը հիմնավորի իրավաչափության, արդարության մետրիկան օրենքի մակարդակում, որն արդեն պահանջում է օրենսդիր իշխանության և նրա ներկայացուցիչների համապատասխան իրավագիտակցություն և պրոֆեսիոնալ իրավական մտածողություն:

Առանց իրավագիտակցության իրավական հարկադրանքը, հատկապես սոցիալական կարգավիճակի անհիմն վատթարացման դեպքում կամ անարդարության ակնհայտ դրսևորման դեպքում, որը չի կարողանում կարգավորել իրավական համակարգի կողմից, ծնում է անվստահություն, որի արդյունքում համապարտադիրությունն ընկալվում է որպես բռնություն: Դրանով հասարակական համալիր գործընթացի բոլոր հարթակներում գործի է դրվում իրավական ձևախեղման բացարձակ օբյեկտիվ, օրինաչափ գործընթաց, որը ձևավորում է իրավահնազանդության գենեզիսին համաչափ աճող էրոզիա:

Դժգոհություն-բողոք-ագրեսիա-անհնազանդություն, և քաղաքացիական կոնտիգենտը վերափոխվում է դժգոհություն արտահայտող ռեգենտի, բողոքի, ագրեսիայի կրողի, որը նախաձեռնում է անկարգություններ, որի արդյունքում գործարկվում է քաղաքացիական անհնազանդության գործընթացը: Այս ֆենոմենոլոգիան, որը հանդես է գալիս տրանզիտիվ եռանկյունու տեսքով, որի կողմերն են քաղաքացիական կոնտինգենտը, իրավական կարգավորման համակարգը և իշխանությունը, առավել մանրամասն կներկայացնենք հաջորդ պարագրաֆում: Այս պարագայում եթե իրավական կարգավորման համակարգը չի կարողանում իրականացնել իր իրավակարգավորման գործառույթը քաղաքացիական կոնտինգենտի և իշխանության փոխգործակցության առումով, ապա այդ երկու սուբյեկտների փոխգործակցությունը գործի է դրվում արդեն իրավական կարգավորման համակարգից դուրս: Արդյունքում ծագում է համակարգային հակամարտություն, որում հակամարտության կողմերից յուրաքանչյուրը հղում է կատարում իրավական կարգավորման համակարգին իր լեգիտիմության ընդգծման տեսանկյունից:

Սա այն հիմնական խնդիրն է, որը իրավական համակարգը բերում է սուբյեկտի վիճակի, որի հետ կարելի է պայմանավորվել, մինչդեռ իրավական համակարգը չի կարող հանդես գալ որպես ժողովրդի և հասարակության համար դատարան, միևնույն ժամանակ չի կարող դատել պետությանը, քանզի համարվում է նրա մարմինը, ավելի շուտ իրավունքի համակարգի ենթահամակարգի մարմինը:

Այս առումով առանձնահատուկ դերակատարություն

պետք է ունենա սահմանադրական դատարանը ոչ միայն իրավունքի համակարգի շրջանակներում, այսինքն չփոխարինելով այն իրենով, այսինքն միայն այն դեպքում, երբ հասարակությունն ու պետությունը միմյանց հետ շփվում են միայն իրավունքի միջոցով: Հակառակ պարագայում ձևավորվում է փոխհարաբերությունների ոչ սահմանադրական համակարգ, որի պարագայում ինչպես քաղաքացիական կոնտինգենտը, այնպես էլ իշխանությունը դադարում են լինել իրավական կարգավորման օբյեկտներ և կորցնում են իրենց իրավասուբյեկտությունը: սա ամենավտանգավոր իրավիճակն է, քանզի այն քաղաքացիական անհնազանդության ձևով գործի է դնում հեղափոխական դիմակայություն և անտագոնիստական բնույթի գործողությունների ողջ սպեկտրը, որոնք կարող են բերել սոցիալական պայթյունի և իշխանության դեհնստալյացիայի:

Իրավիճակային փոխգործակցության դրվագային կարգավորման միջոցով հնարավոր չէ հասնել համակարգային ամբողջականության՝ առանց մատնանշելու հասարակության համալիր գործընթացի երկարաժամկետ մոդելը:

Ասվածը վերաբերվում է համակարգային կամ ոչ համակարգային ընդդիմության, որպես պետության քաղաքական կառույցի գործունեությանը, ինչպես նաև իր բոլոր դրսևորումներով՝ դժգոհող կոնտինգենտի դրսևորմանը (քաղաքացիական անհամաձայնությունից ու դժգոհությունից մինչև դիմակայության ինքնաբուխ հեղափոխական դրսևորում):

Այս ամենը անհրաժեշտ է միանշանակ ըմբռնել, և ոչ միայն ըմբռնել մտածողության սոցիալ-կենցաղային մակար-

դակում, այլև պատասխանատու իրավական մտածողության մակարդակում, (կարելի է ավելացնել անգամ սահմանադրաիրավական մտածողության մակարդակում), քանզի հակառակ պարագայում հնարավոր չէ նկարագրել և բացատրել մեր սոցիումում առանցքային երևույթների ծագումնաբանությունը, ինչպես նաև դրանց ծագման հիմնական պատճառների վերհանումը, որը բացառապես պետք է տեղի ունենա սահմանադրաիրավական հարթությունում, որը կարող է և պետք է լինի քաղաքացիական հասարակության միասնական իրավագիտակցության շրջանակներում, որպես միասնական ամբողջություն, որն իր մեջ ներառում է ինչպես բնակչության քաղաքացիական կոնտինգենտը, այնպես էլ բոլոր պետական ծառայողներին, որոնք համարվում են քաղաքացիական կոնտինգենտի բաղկացուցիչ մաս:

Պետականության և քաղաքացիական հասարակության կերտման, ինչպես նաև իրավական կարգավորման համակարգի նախագծման հիմքում պետք է ընկած լինի սահմանադրականության սկզբունքը, որի հիմքում պետք է ընկած լինի իրավունքի գերակայության անխախտելի սկզբունքը, որը չպետք է թույլատրի հակամարտության քննարկումը, որի կողմեր են հանդիսանում քաղաքացիական բնակչությունն ու պետությունը:

Իր իրավական բովանդակության տեսանկյունից պետությունը հիմնադրվում է հասարակության կողմից, դրանով իսկ իր իրավասուբյեկտությամբ հանդես գալով որպես հասարակական համալիր գործընթացը սպասարկող իրավական օբյեկտ, իսկ պաշտոնյաներն ու պետական ծառայողնե-

որը՝ որպես ժողովրդի ծառաներ: Անհրաժեշտ ենք համարում հատուկ նշել, որ վերջիններս միաժամանակ հանդիսանում են քաղաքացիական կոնտինգենտ և ըստ էության չեն կարող հակամարտության մեջ մտնել իրենց հիմնադրի հետ, այսինքն ՝ իրենք իրենց հետ:

Այդ է պատճառը, որ ժողովրդի և պետության ցանկացած պայմանավորվածություն ըստ էության համարվում է իրավական անհեթեթություն, ավելին՝ սահմանադրական անհեթեթություն: Ավելի պարզ եթե ասենք, ապա ընտանիքի անդամները չեն կարող ամեն օր պայմանավորվել, թե իրենցից յուրաքանչյուրը ինչ պայմաններով է համաձայն լինել ընտանիքի անդամ և իրականացնել համապատասխանաբար իր գործառույթները: Սահմանադրականությունը բացարձակապես չի ենթադրում բնակչության և պետության միջև ամուսնական պայմանագիր, այն նախատեսում է վերջիններիս որպես միասնական ամբողջություն, որում իշխանությունը հնարավորություն չունի ժողովրդին հայտարարել որպես իրավական օբյեկտ, իսկ բնակչությանը՝ որպես ժողովրդի՝ ի դեմս իրավահնազանդ քաղաքացիների, իրավասուբյեկտության օպորացիոն ներկայացում, կամ հայտարարել ժողովրդին օրենքից դուրս և որակավորել որպես իրավախախտներ:

Անհրաժեշտ է նկատել, որ վերոշարադրյալը հենց այն առանցքային գործոնն է, որը առաջին հերթին պետական կառավարման մարմինների և բնակչության քաղաքացիական կոնտինգենտի բոլոր դրսևորումների քաղաքացիական կոմպետենտության բացակայության արդյունքում, սայթաքում է

իրավական վերլուծությունը և տեղի ունեցող գործընթացների գնահատականը: Մասնավորապես, առանցքային է համարվում այն սխալ և անթույլատրելի կանխավարկածը, որ պետությունն ունի բռնություն կիրառելու մենաշնորհ, ավելին, որ այդ իրավունքը վերջինիս վերապահված է Սահմանադրությամբ: Մինչդեռ Սահմանադրությունը ենթադրում է և կարող է միայն նախատեսել հարկադրանքի կիրառում օրենքին հետևելու և պահպանելու համար, որը չի գրվում պետական պաշտոնյաների առանձին դասակարգի համար:

Պետության իրավապահպան գործառույթը ուղղված է քաղաքացիական բնակչության իրավունքների և ազատությունների ապահովմանը իրավախախտներից: Պետության իրավապահպան գործառույթը չի կարող իրեն պաշտպանել բնակչությունից: Հետևաբար հասարակության մասնատումը պրոպետականի և հակապետականի վտանգավոր ուղի է: Այս հարաբերություններում ժողովուրդը հանդես է գալիս որպես հիմնադիր, իսկ քաղաքացիական բնակչությունը՝ որպես ծառայություններ ստացող՝ հաճախորդի պարտավորությամբ:

Ժողովրդավարական հասարակության մեջ չի կարելի թույլատրել, որպեսզի պետական կառավարման մարմինների կողմից ապամոնտաժվի իրավունքի գերակայության և իրավահավասարության սկզբունքները և դրանք վերափոխել կոալիցիայի (առանձին դասակարգի) հավաքական կամքը սպասարկելու իշխանության գործիքի՝ իր բացառիկության հռչակման իրավունքով և պոզիտիվ լեգիտիմությամբ, որը հարկադրանքի կարգով պարտադիր է համարվում ամբողջ քաղաքացիական հասարակության համար՝ դրանով իսկ

ձևավորելով ուժի իրավունքի կվազի իրավական տարածություն: Այն իր հերթին անփուսափելիորեն և օրինաչափորեն կբերի իրավունքի էության ինստիտուտի ամբողջական վերացման և փաստացի գործի կդնի պսեվդո իրավունքի համակարգը:

Միևնույն ժամանակ, անթույլատրելի է նաև քաղաքացիական կոնտինգենտի կողմից անկառավարելի քաղաքացիական անհնազանդության շրջանակներում ինքնաբուխ փողոցային գործընթացների համակցմամբ իշխանության ապամոնտաժումը որպես ինքնանպատակ, որը կարող է հանգեցնել պետության ֆենոմենի էկզիստենցիալ համակարգի ամբողջականության կորստին: Դրա հետ մեկտեղ չի կարելի այս հիմնահարցը մտցնել պետության անվտանգության համար վտանգ ներկայացնող ակտերի իրավական մտածողության նեղ միջանցքում: Պետականության կորուստը դա պետության էկզիստենցիալ համակարգի սահմանադրական կոլլապսի հարց է:

Ամփոփելով վերոգրյալը կարելի է գալ այն եզրահանգման, որ ժողովրդավարությունը ենթադրում է, որ ժողովուրդը ոչ միայն ունակ է վարել պետական կյանքը, այլ հենց կառավարել պետությանը: Դրա համար, ինչպես նկատում է Իվան Իլյինը,- ամենից առաջ ժողովրդին անհրաժեշտ է պետական պատասխանատվության վստահ և կենդանի զգացողություն. «դրանից, թե ես ինչ եմ անում, ինչպես եմ ինձ պահում և ինչի համար եմ քվերակում,- կախված է իմ ժողովրդի, իմ պետության, իմ սեփական, իմ երեխաների և թոռների ճակատագիրը, այդ ամենի համար ես եմ պատասխանատու, այդ

ամենը պետք է անեմ պատվով և խղճով»[27]: Դա մարդու և պետության միջև ստեղծագործական զգացմունքի ուղղակի կապն է: Հետևաբար, եթե ժողովուրդը զուրկ է պատասխանատվության զգացումից և ունակ չէ ժողովրդաիշխանության, իրեն կպահի անպատասխանատու և կկործանի ամբողջ գործը:

Ժողովրդավարության միանշանակության և ունիվերսալության գաղափարը պաշտպանել է նաև Յոզեֆ Շումպետերը, որը գտնում է, որ ժողովրդավարությունը ծաղկում է այն ժամանակ, երբ հասարակության մոդելն օժտված է որոշակի հատկանիշներով, և անիմաստ է հարցնել, թե ինչպես կարող է այն գոյություն ունենալ այլ սոցիալական մոդելների պարագայում, որոնք չունեն այդ հատկանիշները, կամ ինչպես մարդիկ կապրեն այդպիսի հասարակություններում ժողովրդավարության պայմաններում[28]: Այդ է պատճառը, որ Նելսոն Մանդելլան ժողովրդավարության համար պայքարը երբեք չէր դիտարկում որպես առանձին ռասայի, դասակարգի, կրոնական համայնքի կամ քաղաքական կազմակերպության խնդիր: Այն բոլոր մարդկանց խնդիրն է, ովքեր ցանկանում են ապրել ազատ[29]: Պետք է նկատել, որ պետությունների կողմից սահմանադրաիրավական կարգավորման համակարգի գիտակցմամբ ու ընկալմամբ է պայմանավորված եղել քաղաքակրթությունների պատմական սինթեզի ընթացքում պետությունների ցիկլային վերելքների ու անկումների հա-

[27] Տե՛ս http://wisdomcode.info/ru/quotes/themes/49080.html?page=9
[28] Տե՛ս նույն տեղը:
[29] Տե՛ս նույն տեղը:

ջորդականությունը: Մասնավորապես, վերելքները եղել են բնական իրավունքի բնույթի ընկալման հետևանք: Իսկ պետություն-քաղաքակրթությունների անկումն ու կործանումը տեղի է ունեցել բնական իրավունքի մշտական պատասխանատվությունը անտեսելու (մասնավորապես՝ անհամարժեք ինքնավստահության հետևանքով, որը, որպես կանոն, հիմնվում էր գերիշխանության կարգավիճակի վրա, որն էլ իր հերթին հիմնվում էր ուժի վրա) հետևանքով կամ ինքնախաբեության հետևանքով, որ ձեռք բերված հավասարակշռությունը հասարակության զարգացման դինամիկ փոփոխությունների պայմաններում ունի ինքնաձևավորման բնույթ՝«շուկայական օրենքներով»: Յուրաքանչյուր անկում ուղեկցվել է ինքնանույնականացման կորստով: Խոսքը վերաբերում է հասարակության ինքնանույնականացման գիտակցական ընկալման ունակության կորստին, որն ուղեկցվում է հասարակության գոյի իմաստի և արժեքների համակարգի ինքնանույնականացման աճող կորստով: Սահմանադրաիրավական կարգավորման տեսակետից դա նշանակել է, որ պետություն-քաղաքակրթությունը կարող էր կայանալ և զարգանալ շնորհիվ հասարակության ինքնանույնականացման ունակության, որը դրսևորվում էր պետական կառուցվածքի ձևականացված մոդելի տեսքով, որը ապահովում էր արժեքների համակարգը, որոնք բխում էին հասարակության գոյի իմաստի հիմնական սկզբունքներից: Սա ցանկացած պատասխանատվության գիտակցում ունեցող պետության հիմնական խնդիրն է, հատկապես եթե վերջինս հավակնում է լինել ձևավորվող կամ արդեն գոյություն ունեցող քաղաքակրթության հիմքը՝ պահպանելով գոյի իմաստ - արժեքների համակարգ - հասարակության բարեկեցություն շղթայի ամբողջականությունը: Սահմանադրության խնդիրը այս ամբողջական շղթայի ու պետականագոյացման իրավական ամրագրումն է: Քանի դեռ կոնստիտուցիոնալիզմը նման որակով, ընկալումով ու իրավագոյացման ֆունկցիոնալ կիրառմամբ գոյություն է ունեցել, քաղաքակրթությունները ծնվել, ձևավորվել, զարգացել ու ձեռք են բերել հզոր պոտենցիալ ֆունկցիոնալ ուղղորդված արարման հիման վրա: Հենց որ այդ ընկալմամբ խախտվել է կոնստիտուցիոնալիզմի սկզբունքը և վերացել է պետության ինքնբերաբար ձևավորված սահմանադրաիրավական տարածականությունը (գրված կամ չգրված սահմանադրություն), տեղի է ունեցել արժեքների համակարգի էրոզիա, գոյի իմաստի սկզբունքների ձևախախտում, որի արդյունքում տեղի է ունեցել պետության վերակազմավորում, վերջին հաշվով՝ մուտացիա՝ իր սկզբնական բովանդակության կորստով:

Այս տեսակետից, պետք է ասել, որ քաղաքակրթությունը չի կարող գոյատևել առանց կոնստիտուցիոնալիզմի, որն ինքնաբերաբար առկա էր այն պետություններում, որոնցում իրավունքի էությունն ու իրավական համակարգը բխում էին «Յուսնատուրալիզմի» բազային այն սկզբունքից, որ պետք է ամենապատասխանատու կերպով վերաբերվել աշխարհի կառուցվածքի ներդաշնակության սահմանադրության հարցերին (Շումերներ, Հունաստան, Հռոմ, Պարսկաստան և այլն): Առանց այս սկզբունքի քաղաքակրթության շարքերը մուտք գործելը կլինի արհեստական, իսկ ներգրավվելը՝ բռնի:

Քաղաքակրթությունն առաջին հերթին արժեքների այնպիսի համակարգ է, որն արտացոլում է մարդու ներդաշնակության սահմանադրությունը, որին պետք է գիտակցաբար ձգտեն պետությունները, ժողովուրդները, ազգերը այն վստահությամբ, որ իրենց նույնականացումը չի վերացվի, այլ ընդհակառակը՝ կընդլայնվի և կհարստանա: Այս պարագայում, իրավունքի էության տեսակետից, չի կարելի քաղաքակրթությունը նույնականացնել «Կայսրություն» հասկացության հետ, որը հանդես է գալիս ընդամենը որպես իրավական կազմակերպական ձև:

§ 2. Ժողովրդավարական հասարակության պետական կառույցի իրավական ամրագրման սկզբունքները

Բոլոր պետությունների (հատկապես նոր պետականության կազմակերպման գործընթացում գտնվող) առջև առանց այլընտրանքի ծառացել է պետականության իրավական ամրագրման հիմնախնդիրը, որի նպատակը վերջինիս լեգիտիմության ապահովումն է իր բոլոր դրսևորումներում և հասարակության կենսագործունեության բոլոր մակարդակներում ու ոլորտներում:

Լեգիտիմության հիմնախնդիրն ունի հիմնարար բնույթ և ընդգրկում է հասարակության (որպես իրավունքի սուբյեկտի) կայացման բոլոր փուլերը՝ սկսած կենսագործունեության մինչպետականից մինչև սահմանադրաիրավական կարգավորման ժամանակահատվածը: Այս գործընթացում լեգիտիմությունը բյուրեղացվում է որպես իրավունքի բազային որակական հատկանիշ և հանդես է գալիս որպես փոխհարաբերությունների համակարգի կազմակերպման համապատասխան գործիք (որպես վարքագծի նորմ) և փոխգործակցության կարգավորման (նորմից շեղումները չթույլատրելու) որակի որոշակի չափանիշ, որոնց համակցությունը իրավունք է տալիս իրավունքին լինել որպես այդպիսին:

Հատկապես կարևոր է նշված հիմնախնդրի բնույթի դիտարկումը սահմանադրաիրավական կարգավորման, որպես իրավական կարգավորման համակարգի, դիրքերից: Այստեղ լեգիտիմությունը հանդես է գալիս որպես իրավական պետականության հիմնարար պայման, որի ապահովման համար ձևավորվում է հատուկ իրավական աստիճանակարգ (հիերարխիա), որտեղ առանձնակի կարևորվում է Հիմնական օրենքի դերը: Վերջինիս է վերապահված ամբողջ իրավական համակարգի և պետական կառույցի լեգիտիմության ամրագրման առաքելությունը: Արդյունքում ինչպես պետական իրավունքի տեսական սահմանումների, այնպես էլ պետական կառույցի ձևավորման և կառուցման գործնական մակարդակում սահմանադրական կարգը հանդես է գալիս որպես պետական կառույցի բարձրագույն կազմակերպաիրավական ձև:

Այս եզրահանգման իրավաչափության հիմնական չափանիշը համարվում է սահմանադրաիրավական կարգավորման, որպես իրավական կարգավորման հատուկ համակարգի, ունակությունը՝ ապահովելու համալիր հասարակական գործընթացների առավելագույն հավասարակշռվածություն ու ներդաշնակություն օրենսդրական համակարգի իրավական

կարգավորման ամբողջականության միջոցով՝ սահմանադրահիրավականից մինչև վարչահիրավական կարգավորման մակարդակները:

Սահմանադրահարավական կարգավորման, որպես պետության կառույցի իրավական կազմակերպական ձևի, ընտրությունը համարվում է ոչ միայն և ոչ այնքան հասարակության և պետական իշխանության հարց (հատկապես քաղաքացիական իրավազեկ կոնտինգենտի բացակայության պարագայում), որքան կախված է ֆունդամենտալ մակարդակում սահմանադրահիրավական կարգավորման բովանդակության և նշանակության ըմբռնումից և գործնական մակարդակում դրա կառուցման և իրականացման փաստացի ունակությունից:

Պետության կառույցի ֆունդամենտալ հիմքերի մշակվածության ոչ բավարար մակարդակը կամ անտեսումը ծնում են համակարգային հակամարտություն, որն էլ իր հերթին հանգեցնում է պատճառահետևանքային շղթայի ռեցիդիվների, որոնք իրավական կարգավորման համակարգը տեղափոխում են վարչական կարգավորման մակարդակ: Այստեղ սահմանադրահիրավական կարգավորման օրինաստեղծագործության և օրենսդրական համակարգի իրավասությունները միախառնվում են օպերացիոն մտածողության և դատական-կատարողական որոշումների հետ: Ասվածը վերաբերում է իրավական կարգավորման համակարգի կառավարման հիմնախնդրին, որից ուղղակիորեն կախված է ամբողջ համալիր հասարակական գործընթացների կառավարման և պետական կառույցի օպերացիոն վարչարարության համակարգի

լեգիտիմությունն ու որակը:

Դրա բացակայության պարագայում պետական իշխանության համար կառավարման և իրավական կարգավորման օբյեկտը պետական կառույցի սահմանադրահիրավական կարգավորման փոխարեն դառնում է օպերացիոն գործընթացը: Արդյունքում հասարակական ինքնագիտակցության մեջ նման իրավիճակը դիտարկվում է որպես իրավաչափ երևույթ և նույնիսկ որպես քննարկման ոչ ենթակա իրողություն: Խնդիրն այն է, որ օպերացիոն մտածելակերպն ընդհանրապես չի կարող ապահովել պետության կառույցի ֆունդամենտալ բազային հիմքերի կառուցվածքային-վերլուծական ընկալումը: Հետևաբար գործի է դրվում իրավական նորմի ապահովման պատճառահետևանքային շղթան պետական կառավարման մարմիններին վերապահված լիազորությունների շրջանակներում՝ իրավական կարգավորման բոլոր մակարդակների հստակ կանոնակարգով:

Սահմանադրահիրավական կարգավորման հիմնական գործոնը համարվում է այն նախապայմանը, որ իրավական կարգավորման համակարգի և պետության կառույցի լեգիտիմությունը հաստատող բարձրագույն սուբյեկտը պետք է հանդիսանա ժողովուրդը, որը ամբողջապես մարմնավորում է հասարակությունը:

Այս պարագայում կենտրոնական հիմնախնդիրը համարվում է այն, թե արդյո՞ք ժողովուրդը քաղաքացիական ինքնագիտակցության մակարդակի (քաղաքական գրագիտություն) իր փաստացի կարողությամբ կարող է հանդես գալ այդ դերում: ՊԵՏՔ Է- ԿԱՐՈՂ Է կամ ԿԱՐՈՂ Է - ՊԵՏՔ Է հարցերի

փոխհարաբերությունն էլ համարվում է իրավական կարգավորման համակարգի լեգիտիմության որակական բնութագրիչներին համապատասխանելու առանցքային գործոնը: Հատկապես սկզբունքային է համարվում պետական կառույցի բազիսային նորմերի հաստատումը լեգիտիմացնող սկզբնական ակտի ընդունման ձևն ու ընթացակարգը սահմանող կառուցակարգը՝ հանրաքվեն: Այս պարագայում ժողովուրդը հանդես է գալիս որպես լեգիտիմացման սկզբնական սուբյեկտ: Այսինքն հաստատում է նորմերի իրավական կարգավիճակը, որպես պետականության տրամաբանությանը և դրանից բխող պետական կառույցին համապատասխան մոդել, որը նկարագրում է հասարակության, որպես կառուցվածքային-կազմակերպական օբյեկտի, գործառնության ամբողջ մեխանիկան: Լեգիտիմացման սկզբնական ակտից՝ հանրաքվեից հետո ժողովուրդը դառնում է պետականության կարգավիճակ ունեցող սուբյեկտ (քաղաքացիական հասարության և իշխանության ինստիտուտներ): Մինչ այդ ժողովուրդը հանդես է գալիս որպես օբյեկտ, որն օժտված է լեգիտիմության իրավական ինքնաիմունիտետով: Հանրաքվեից հետո նա վերափոխվում է լեգիտիմությունը հաստատելու իրավունքով օժտված սուբյեկտի:

Սահմանադրաիարավական կարգավորման համակարգի մշակման, ընդունման և գործադրման ընթացքում առաջացող համակարգային հակամարտության նկարագրման և կառավարման համար մեր կողմից գործարկվում է լեգիտիմացման հետևյալ աստիճանակարգային համակարգը, որը հնարավորություն է տալիս բացահայտել հակամարտության

ծագումն ու բնույթը, զարգացման և դրսևորման գործընթացը, ինչպես նաև դրա լուծման մոտեցումները և տրամաբանությունը.

1. Սահմանադրական համակարգի մշակման գործընթացի լեգիտիմությունը:

2. Իշխանության համակարգի իրավական ամրագրման լեգիտիմությունը, որը բխում է Սահմանադրությունից:

3. Իրավական կարգավորման համակարգի ամրագրումը և դրա դատական ու վարչական մոնիտորինգի համակարգը:

Սահմանադրական համակարգի մշակման գործընթացի լեգիտիմությունն ապահովվում է սահմանադրական կարգավորման ենթակա համալիր օբյեկտների նախագծմամբ: Այստեղ առանձնացվում է իրավական տարածության ձևավորման սկզբնական նորմատիվ մակարդակը, որից պետք է բխի պետության օրենսդրական համակարգը, հստակ տարազատելով նորմաստեղծագործության աստիճանակարգը: Այն ենթադրում է նորմաստեղծագործության տարբեր մակարդակների առակայություն ինչպես մեթոդաբանական, այնպես էլ մեթոդական մակարդակներում:

Այս պարագայում անհարաժեշտ է իրավական կարգավորման օրենսդրական մակարդակի նորմաստեղծագործության կիրառման եղանակը բացառել սահմանադրական կարգավորման առարկա հանդիսացող օբյեկտների նկատմամբ և հակառակը: Մասնավորապես, սահմանադրական օբյեկտներ են համարվում պետականությունը, ժողովուրդը, հասարակությունը, մարդը, քաղաքացին, կրոնը, հանրաքվեն, պե-

տությունը և այլն: Վերջիններիս հիման վրա է սահմանվում, հաստատվում և գործի դրվում պետության կոնկրետ մոդելը՝ կոնկրետ պետական կառույցով, կոնկրետ ժողովրդի և հասարակության համար՝ հաշվի առնելով համամարդկային արժեքների և ազգային համակարգի արտացոլումը, պատմամշակութային ժառանգության հիման վրա արժեհամակարգի սեփական ընկալումը, ինչպես նաև իրավական մտածելակերպի ձևավորվածության կոնկրետ մակարդակը:

Նշված պայմանների բավարարման պարագայում արդեն գործընթացները ղեկավարվում են լեգիտիմ սուբյեկտի՝ պետության (լիազորված լեգիտիմացման սկզբնական ակտով) կողմից, որն օժտված է պետական կառավարման աստիճանակարգի հաջորդող սուբյեկտների լեգիտիմացման իրավունքով:

Քննարկվող հիմնախնդիրը, որպես սահմանադրաիրավական կարգավորման համակարգ, իրավաբանական գրականության մեջ միշտ էլ ուսումնասիրվել և դիտարկվել է որպես իրողություն, որի ծագումնաբանությունը հիմնականում չի քննարկվել ակադեմիական մակարդակով: Այստեղ նկատի ունենք, թե մինչսահմանադրական կացութաձևում ինչ ընթացակարգով ու մեխանիզմով է մշակվել և գրվել սահմանադրության նախագիծը, որպես նոր պետության և հասարակության մոդել: Այս առումով պետականության լեգիտիմացման աստիճանակարգի առաջին մակարդակը (սահմանադրաիրավական համակարգի մշակման գործընթաց) պահանջում է ժողովրդի, որպես իրավական ինքնաիմունիտետով օժտված սուբյեկտի, փաստացի ունակությունը հետևյալ

դրսևորումներով.

1. Միջազգային իրավունքի շրջանակներում համամարդկային և համաշխարհային արժեքները, նպատակները ընկալելու և դավանելու գիտակցական մակարդակ:

2. Սահմանադրականության իրավական տարածությունում գործող նոր պետության կա-ռույցի ձևավորման անհրաժեշտության ընկալման և հիմնավորման գիտակցական մակարդակ՝ նպատակաուղղված ազգի՝ ժողովրդի բարգավաճմանը:

3. Հիմնական օրենքի և ամբողջությամբ վերցրած օրենսդրական համակարգի որակի չափանիշների ընկալման և հիմանվորման գիտակցական մակարդակ:

Պետք է նկատել, որ այս չափանիշներին օբյեկտիվորեն չի կարող ժողովուրդն ամբողջությամբ համապատասխանել: Վերջինս պետք է ունենա իրավագիտակցության բավարար մակարդակ, որպեսզի իր անունից սոցիալական պատվեր իջեցնի հասարակության մտավոր ընտրանու այն հատվածին, որն առանձնանում է սահմանադրության և սահմանադրաիրավական կարգավորման օբյեկտների ընկալման և ձևավորման ֆունդամենտալ ակադեմիական մակարդակով, ինչպես նաև ժողովրդի և սերունդների առջև պատմական պատասխանատվության ազնիվ զգացումով: Այս տեսակետից որակի չափանիշներին համապատասխան պետականություն ստեղծելու առումով դասական օրինակ է աշխարհում առաջինը համարվող ԱՄՆ 1787 թ. Սահմանադրության, ինչպես նաև ԳԴՀ 1949 թ Հիմնական օրենքի ծնունդը: Դրանք ստեղծվեցին և ընդունվեցին ազգի «Հայրերի» կողմից, որոնք լիովին

համապատասխանում էին վերը նշված որակի չափանիշներին:

Մեր օրերում, հատկապես գտնվելով պետականության կերտման դժվարին ճանապարհին, առավել կարևորվում է հենց «Ազգի հայրերի» ինստիտուտի ձևավորման խնդիրը: Այն կարող է մեծ դերակատարություն ունենալ հասարակության, քաղաքական ուժերի, հասարակական կառույցների, սոցիալական տարբեր խմբերի համախմբման հարցում և վերջիններիս գործունեությունը ուղղորդել պետականակերտման բարդ գործընթացին: Այդ առումով, կարծում ենք, առաջնահերթ կերպով պետք է վերնայվի և վերաիմաստավորվի Հանրապետության Նախագահի ինստիտուտը հատկապես պետական կառավարման խորհրդարանական ձևի պայմաններում, որն էլ պետք է դառնա այդ ինստիտուտի գեներացնողը:

Համակարգային հակամարտությունը ծագում է «Ժողովուրդ» օբյեկտի ոչ միանշանակ դասակարգման ու որակավորման արդյունքում, երբ չի բացահայտվում ժողովրդի, որպես պետականության և պետության հարցերը հաստատելու լեգիտիմության ինքնաիմունիտետի կրողի իրավական բնույթը, հստակ և միանշանակ չեն սահմանվում ժողովրդի պարտականությունները և դրանց ամրագրման կառուցակարգը: Մասնավորապես, «ժողովուրդ» օբյեկտն իր մեջ ներառում է ոչ միայն պետության քաղաքացիներին, այլև կացության այլ կարգավիճակներ (օտարերկրացիներ, ապաքաղաքացիներ, փախստականներ և այլն) ունեցող անձանց, ինչպես նաև ընտրական տարիքի դեռևս չհասած քաղաքացիներին: Որպես հետևանք, անհնար է դառնում որոշելու ժողովրդի՝ որպես հանրաքվեի իրավահարաբերությունների սուբյեկտի, դրսևորման համապատասխան որակները: Արդյունքում, հնարավոր է հանրաքվեի՝ որպես սահմանադրական գործընթացի, և ժողովրդի ընտրության իրավունքի էության և բովանդակության ձևախեղում՝ վերջինիս՝ (որպես իրավունքի սուբյեկտ) իր պարտականությունները լիակատար կատարելու ոչ իրավասու լինելու հետևանքով: Մինչդեռ հայտնի է, որ սուբյեկտին իրավասությամբ կարող է օժտել միայն նրա օբյեկտիվ ունակությունը: Հետևաբար, եթե ժողովուրդը աչքի չի ընկնում քաղաքացիական կոմպետենտության պատշաճ մակարդակով, ապա Սահմանադրության ընդունման հանրաքվեն կարող է ունենանալ ձևական և տեխնիկական բնույթ և հանգեցնել համակարգային հակամարտության: Որպես առաջնային սահմանադրական օբյեկտ՝ ժողովուրդն ի վերուստ ունի իրավական ինքնաիմունիտետ, որի կամահայտնությունից կախված է ամեն բան, սակայն փաստացի ունակության տեսակետից եթե չունի տարրական քաղաքական գիտելիքներ, նա չի կարող ունենալ էլեկտորատի, առավել ևս հանրաքվեի սուբյեկտի կարգավիճակ:

Բացի այդ, հանրաքվեն, որպես ժողովրդի կամահայտնության միջոցով պետականության լեգիտիմացման սկզբնական կառուցակարգ, պետք է հանդես գա որպես սահմանադրական կարգավորման ֆունդամենտալ օբյեկտ և այն չի կարող կարգավորվել ընդամենը սովորական օրենքի մակարդակով:

Խնդրին որոշակի լուծում տրվեց 2015 թ. Դեկտեմբերին տեղի ունեցած սահմանադրական փոփոխություններից հե-

տո: Այդ փոփոխությունների արդյունքում հանրաքվեն կարգավորող իրավական ակտը ձեռք բերեց սահմանադրական օրենքի կարգավիճակ, սակայն հանրաքվեի կազմակերպման և անցկացման ընթացակարգերը կարծես թե շարունակում են մնալ ձևական: մասնավորապես, արտաքնապես էական առաջընթաց դիտարկվեց այն հանգամանքը, որ սահմանադրական փոփոխությունների արդյունքում հանրաքվեի նախաձեռնության իրավունք ստացան նաև քաղաքացիները:

Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 202-րդ հոդվածի առաջին մասը ամրագրում է Հանրաքվեի նախաձեռնության սուբյեկտների ցանկը: Մասնավորապես, Սահմանադրություն ընդունելու կամ փոփոխելու նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող ***երկու հարյուր հազար քաղաքացի:*** Ազգային ժողովը նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ որոշումն ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Միաժամանակ, Սահմանադրության 204-րդ հոդվածը սահմանում է, որ Եթե Ազգային ժողովը մերժում է Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով ներկայացված օրենքի նախագծի ընդունումը, ապա ***մերժումից հետո՝ վաթսուն օրվա ընթացքում***, օրենքի նախագծի ընդունման նախաձեռնությանը ընտրական իրավունք ունեցող **ևս երեք հարյուր հազար** քաղաքացու միանալու դեպքում նախագիծը դրվում է հանրաքվեի, **եթե Սահմանադրական դատարանը նախագիծը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող**:

Ինչպես երևում է սահմանադրական կարգավորումներից, ժողովրդի կողմից սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի նախաձեռնության համար ա) սկզբնական փուլում պահանջվում է քաղաքացիների երկու հարյուր հազար ստորագրություն, իսկ երկրորդ փուլում՝ ևս երեք հարյուր հազար, բ) բոլոր նախաձեռնությունները առանց որևէ չափանիշային համակարգի պետք է ստանան պարտադիր կերպով Սահմանադրական դատարանի համաձայնությունը: վերոգրյալից երևում է, որ ժողովրդական նախպձեռնության իրավունքի իրականացման առումով հավաքվող ստորագրությունների թիվը խելամտության շրջանակների մեջ չի տեղավորվում և համաչափ չէ բնակչության, կոնկրետ դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների թվակազմին: Իսկ սահմանադրական դատարանին իրավունք է վերապահվել որոշելու իշխանության իմանենտ կրող ժողովրդի կամքի սահմանադրականությունը, ինչը գործնակոնում դարձնում է անհնար տվյալ իրավունքի իրականացումը:

Քաղաքացիական հասարակության կողմից պետական կառույցի, որպես ամբողջական համակարգի, և իրավական լեգիտիմության անհրաժեշտության գիտակցական պահանջի բացակայության արդյունքում խնդիր է առաջանում մոդելավորել իրավական տարածություն, որն իր մեջ կներառի ինչպես պետությունը, այնպես էլ իրավական կարգավորման համակարգը, որն ուղեկցվում է պետականության, որպես համակարգի, լեգիտիմության իրավական ամրագրմամբ: Նշված սոցիալական պահանջն ունի համակարգային բնույթ,

ինչպես հասարակության (բոլոր շերտերի) քաղաքացիական կոմպետենտության, պետական մտածողության մակարդակի և իրավական պետականության և իրավական հասարակության առարկայի ընկալման տեսակետից, այնպես էլ ժողովրդի կամահայտնության ձևական ընթացակարգի որոշակի ձևի պատկերացման տեսանկյունից: Այս մակարդակում էլ հենց ծագում է ամենասկզբնական համակարգային հակամարտությունը, որի հակամարտածինության դասը դիտարկվում է որպես լեգիտիմության շեղում՝ իրավական տարածության կոորդինատների համակարգի մակարդակում: Անկասկած հակամարտությունների այս դասն ունի համակարգային բնույթ, որի արդյունքում հակամարտության կողմեր կարող են դառնալ հետևյալ սուբյեկտները.

1. Ժողովուրդ-պետականություն:
2. Պետականություն-իշխանություն (որը ներկայացնում է պետությունը):
3. Քաղաքացի-պետություն:

Սահմանադրահիրավական կարգավորման համակարգի առանցքային որակական հատկությունը պայմանավորված է հասարակության մեջ դրսևորվող ցանկացած վարքագծի իրավական արտացոլման հստակ կառուցակարգի առկայությամբ՝ սահմանադրահիրավականից մինչև վարչահիրավական մակարդակ: Այն ներառում է նաև հասարակության իրավական վարքագծի ինքնակարգավորվող ռեֆլեքսները, որոնք ձևավորում են բարոյամշակութային ավանդույթները՝ հասարակական փոխհարաբերությունների բոլոր ոլորտներում, վերջին հաշվով սահմանելով «չգրված սահմանադրությունը»:

Սահմանադրահիրավական կարգավորման համակարգի վերը նշված հատկությունների բացակայության պարագայում ծագում են համակարգային հակամարտություններ, որոնք դրսևորվում են իրավական կարգավորման համակարգի տարբեր մակարդակներում: Այսպես, հակամարտությունը ծագում է այն ժամանակ, երբ պետականությունը, որպես ինքնուրույն կատեգորիա՝ իր որակական հատկանիշներով պահանջում է ժողովրդից համապատասխան ունակություն՝ հանդես գալու որպես պետության և պետական կառույցի համապատասխան մոդելի միջոցով իր հասարակական կեցության կազմակերպման ձևի անհրաժեշտությունը որոշող բարձրագույն իրավական ատյան, և այդ պայմանը չի ապահովվում: Արդյունքում, պետականության և դրա կազմակերպահրավական ձևերի էության և բովանդակության ընկալման անկարողությունը կարող է հանգեցնել իրավիճակի, երբ ժողովուրդը հաջորդաբար կքվեարկի տարբեր և նույնիսկ միմյանց հակասող պետականության մոդելների օգտին, որոնք դեկլարատիվ մակարդակում ունեն միևնույն նպատակը՝ ժողովրդի բարեկեցությունն ու բարգավաճումը: Ասվածը կարելի է հիմնավորել Եգիպտոսի օրինակով: Մասնավորապես, 2011 թ. Եգիպտոսում ժողովրդավարական կարգեր հաստատելու պատրվակով գերտերությունների աջակցությամբ տեղի ունեցավ հեղափոխություն, որի արդյունքում երկրի իշխանության ղեկին եկավ «Մահմեդական եղբայրներ» քաղաքական կուսակցությունը, որն աչքի էր ընկնում ծայրահեղ իսլամիստական հայացքներով և ոչ մի չափանիշով չէր համապատասխանում ժողովրդավարության պահանջներին: 2012

թ. դեկտեմբերի 15-ին անցկացվեց հանրաքվե, որի արդյունքում ընդունվեց Եգիպտոսի նոր Սահմանադրությունը: Արդյունքում այդ երկրում ավելի լայն թափ առավ նոր հակամարտություն: Խնդիրն այն էր, որ նոր սահմանադրության նախագծով երկրի իրավական համակարգի հիմքում դրվում էին շարիաթի սկզբունքները և էապես ընդարձակվում էին պետության գլխի լիազորությունները:

Այդ առումով, սահմանադրական հանրաքվեի դիտորդները արդարացիորեն նշել են, որ նոր Սահմանադրությունը կսատարվի հանրաքվեին մասնակցող անգրագետ գյուղացիական բնակչության հաշվին, իսկ դրա ընդունումից հետո երկրում կսկսվի նոր պառակտում, քանի որ լիբերալներն ու քրիստոնյաները դժվար թե համաձայնվեն ապրել նոր սահմանադրության պայմաններում, որը հիմնված է շարիաթի սկզբունքների վրա:

Վերոնշյալ նկատառումներով էլ եգիպտոսի Լիբերալ «Ադ-Դուստուր» կուսակցության հիմնադիր Մուհամեդ Էլ-Բարադեյը (ՄԱԳԱՏԷ-ի նախկին ղեկավար) նկատում է. «Հանրաքվեից հետո երկրի նոր հիմնական օրենքով Եգիպտոսի պառակտումը իսլամիստական և աշխարհիկ ճամբարների ավելի է խորացել, իսկ պետության հիմքերը սկսում են քանդվել: Շատ եգիպտացիների աղքատությունն ու անգրագիտությունը ամենապարարտ հողն են ստեղծում կրոնի առուծախի համար»:

Ժողովրդի փաստացի անկարողությունը, որպես կանոն, ծնում է երկրորդ մակարդակի հակամարտությունը, որում ժողովրդի փաստացի իրավասությունը փոխանցվում է ընթացիկ իշխանությանը, իսկ սահմանադրական օբյեկտները տեղափոխվում են սովորական օրենսդրության իրավական կարգավորման մակարդակ, գործող իշխանության իրավական հարմարավետությունը ապահովելու առաջնությամբ, ստեղծելով համակարգային հակամարտություն: Այս մակարդակում սահմանադրական հիմնարար սկզբունքները հաճախ ծխածածկույթի դեր են խաղում օրենքի անունից քաղաքական և անձնական նպատակահարմարության իրականացման համար :

Նշված իրավիճակը պարարտ հող է ստեղծում նաև ***ամբոխավարության համար, երբ իշխանության մի թևը կամ մարդկանց խումբը սեփականաշնորհում է ժողովրդաիշխանությունը, օգտագործելով բնակչության զայրույթն ու հասարակության դժգոհությունը, որպեսզի ճնշում գործադրելով իշխանության մյուս թևերի նկատմամբ յուրացնի ամբողջ իշխանությունը:*** Այս երևույթն առավել ցայտուն կերպով դրսևորվում է մեր իրականության մեջ՝ այսպես կոչված «թավշյա հեղափոխությունից» հետո:

Այս իրավիճակի տրամաբանությամբ փաստացի գոյություն ունեցող պետությունը համարվում է«սահմանադրական», իսկ պետականությունը պետք է լինի այնպիսին, որ համապատասխանի այդ պետությանը: Այն ամենը, ինչը չի համապատասխանում պետությանը, համարվում է ոչ սահմանադրական: Արդյունքում համապատասխան պետականության օբյեկտիվ բնույթը հակամարտության մեջ է մտնում սուբյեկտիվորեն սահմանված իշխանության իրավունքի հետ, որը որպես այդպիսին, չունի ինքնահիմունիտետի իրավունք, որի

բացառիկ կրողը ժողովուրդն է: Նույնիսկ եթե իշխա-նությունը հանդես է գալիս ժողովրդի անունից, դա ներկայացուցչական իրավական կարգավիճակ է, այլ ոչ թե լեգիտիմության իմունիտետ: Այս հակամարտության առկայությունն ուղեկցվում է հայեցակարգային դեֆոլտով:

Եթե ժողովուրդը չի հասկանում ինչ է պետականությունը, հետևաբար չի կարող ներկայացված լինել լեգիտիմ ընտրանիով, որը կարող է արտացոլել պետության՝ իր ամբողջ յուրահատկությամբ ընկալվելու ունակությունը: Արդյունքում, ժողովուրդը չի կարող հանդես գալ որպես պետականության մոդելը ընտրող, գնահատող, հաստատող, գործի դնող սուբյեկտ: Նա կարող է կուրորեն ընդունել պետականության տարբեր ընկալումները, որոնք կարող են հիմնված լինել ոչ պետական մոտեցումների վրա: Այս պարագայում թույլ է տրվում, որպեսզի պետականության կերտման գործընթացները ընթանան ինքնաձևավորման, ինքնակազմավորման և ինքնահոսի զարգացման ուղղությամբ: Արդյունքում բնակչության մոտ իշխանությունների հանդեպ ձևավորվում է անվստահություն և դժգոհություն:

Պետականության սահմանադրաիրավական ամրագրման հիմնախնդիրների հետազոտությունը ակադեմիական մակարդակում միտված է ապահովելու սահմանադրաիրավական կարգավորման գործող կառուցակարգ, որը կարող է կանխել սոցիալական պայթյունն՝ իր ծագման բոլոր մակարդակներում:

§ 3. Հակամարտությունների պրակտիկ դրսևորումները ժողովրդավարական հասարակության մեջ

Մեր ժամանակների համաշխարհային քաղաքակրթության ամենաարդիական և հիմնարար խնդիրներից մեկը հանդիսանում է համաշխարհային հանրության համալիր կարողությունը՝ ընդունելու իր առջև ծառացած հիմնական մարտահրավերը՝ պատմական պլանով աննախադեպ արագացման գործակցով և իր բոլոր դրսևորումներով դինամիկ փոփոխվող աշխարհի կառավարումն ու կարգավորումը:

Այդ առումով չափազանց արդիական խնդիր է հասարակական համալիր գործընթացների կառավարելիության ապահովումը, այսինքն՝ սահմանադրաիրավական կարգավորման շրջանակներում հասարակական և պետական իշխանության բոլոր ինստիտուտների կայուն գործունեությունը: Նշված հիմնախնդրին է առնչվում Եգիպտոսում, Լիբիայում, Սիրիայում և այլ երկրներում ստեղծված ծայրահեղ իրավիճակը որոնք (այդ երկրները) ակամայից ներքաշվել են այսպես կոչված «դոմինոյի» գործընթացի մեջ, որտեղ, մի կողմից, համալիր հասարակական գործընթացները կայծակնային արագությամբ ձեռք են բերում զանգվածային դժգոհության բնույթ՝ ակտիվ ագրեսիայի տարրերով, մյուս կողմից, առաջանում է ծայրահեղ անհրաժեշտություն՝ թույլ չտալու մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների խախտում, ապահովելու պետության գործունեության սահմանադրական հիմքերը և կանխելու հակամարտության անկառավարելի զարգացումը, որը կարող է հանգեցնել իրավական կարգա-

վորման արդյունավետությունը բացառող կարգավիճակի և հետևաբար անհնար կդարձնի գործընացի լեգիտիմության միանշանակ իրավական որակավորումը:

Այդ կապակցությամբ ձևավորվում է, այսպես կոչված,«տարանցվող եռանկյունի» , որի երեք գագաթների միջև առաջանում է անկառավարելի հակամարտություն: Դրանք են.

ա) ժողովրդի կամահայտնության ձևաչափով նրա անունից հանդես եկող դժգոհող կոնտինգենտը,

բ) սահմանադրական կարգի ապահովման համար գործառական պատասխանատվություն կրող պետական իշխանության ինստիտուտները,

գ) իրավական կարգավորման համակարգը (սահմանադրական լեգիտիմության ապահովմամբ):



Նման հակամարտությունները պետաիշխանական ինս-

տիտուտների կողմից, որպես կանոն, դիտարկվում են օպերատիվ-տեխնիկական կարգավորման դիրքերից, որոնց առաջնահերթ խնդիրը դառնում է իրավիճակային-կարճաժամկետ բնույթի զանգվածային անկարգությունների բացառումը: Սակայն այս տեսակ հակամարտությունների ծագման բնույթի բացահայտումը պահանջում է հիմնարար մակարդակով գիտական վերլուծություն, ինչը, որպես կանոն, տեղափոխվում է քաղաքական-վերլուծական կամ լրագրողական ընկալման հարթություն, որի չափանիշային մակարդակը փաստորեն մեթոդաբանական գիտական ընդգրկում չունի, և սահմանափակվում է վերլուծությունների ու գնահատականների ընդամենը մեթոդական մակարդակով: Մասնավորապես, որպես նշված բնույթի հակամարտությունների ծագման պատճառ, զանգվածային լրատվության միջոցները ներկայացնում են բնակչության ցածր կենսամակարդակը, հասարակության սոցիալական բևեռվածությունը, սոցիալ-կենցաղային ինֆրակառույցների բացակայությունը, հասարակության մեջ տիրող անարդարությունը, գործազրկության բարձր մակարդակը, ընտրությունների կեղծումը և այլն: Իսկ քաղաքագետները տեղի ունեցող իրադարձությունների ու փաստերի հիման վրա փորձում են կատարել դրանց հետագա քաղաքական զարգացումների կանխատեսումներ, ինչը խնդրի կարգավորում չի կարող ապահովել: Նշված պատճառների վերհանումն առավելապես ունի մեթոդական հիմք և չի կարող առաջադրել հիմնախնդրի արմատական լուծումներ:

Այս տեսակետից ծայրահեղ անհրաժեշտություն է առաջանում բացահայտել վերոնշյալ հակամարտություն ծնող

գործընթացների ծագման և զարգացման հանգամանքները՝ ելնելով դրանց իրավական կարգավորման տեսական հիմքերից և դրանց հիման վրա ձևավորել հակամարտությունների լուծման համապատասխան մեթոդական միջոցներ, որոնք հնարավորություն կընձեռեն գործնական մակարդակում լուծելու դրանք՝ հենվելով համարժեք իրավական կարգավորման վրա:

Դրա համար անհրաժեշտ է, մեր կարծիքով, հիմնախնդրի հետազոտության հիմքում շեշտը դնել հակամարտությունների առաջացման պատճառների վրա, որոնք, որպես այդպիսին, ունեն սահմանադրաիրավական կարգավորման համակարգի ամբողջականության խաթարման բնույթ: Մասնավորապես, պետականության կերտման հիմնական պայմաններից մեկը դառնում է սահմանադրաիրավական կարգավորման համակարգի ունակությունը՝ ապահովելու միանշանակ լեգիտիմության մեխանիկա ամբողջ հասարակական համալիր գործընթացների և պետական իշխանության ինստիտուտների համար: Այսինքն՝ Սահմանադրությունը կոչված է ամրագրելու հասարակության և պետականության կառույցի լեգիտիմության հիմնարար սկզբունքները, որոնց հիման վրա հնարավոր է դառնում սահմանել, ձևակերպել և ապահովել պետության գործունեության օրինականությունը բոլոր ոլորտներում: Այս կապակցությամբ պետք է նշել, որ սահմանադրաիրավական կարգավորման համակարգի տարզատումը օրենսդրական կարգավորման համակարգից՝ առանց սահմանադրության առկայության, լուրջ հիմնախնդիր է առաջացնում համակարգային կարգավորման ոլորտում: Այդ

հիմնախնդրի լուծման համար պահանջվում է, մի կողմից, սահմանադրաիրավական համակարգի՝ որպես քաղաքացիական հասարակության իրավական ամրագրման և կառուցման բարձրագույն և արդյունավետ ձևի, ըմբռնումն ու ընկալումը, մյուս կողմից, դրա իրականացման փաստացի ունակությունը: Դրա համար անհրաժեշտ է սահմանադրության (որպես պետության և հասարակության ճարտարապետական նախագծի) մշակմանը ներգրավել այնպիսի իրավասու մասնագետների, որոնք պատասխանատվության զգացմամբ ունակ կլինեն իշխանությանը առաջարկելու առկա ժամանակահատվածում փաստացի վիճակում գտնվող հասարակության և պետության իրական մոդել, որը սահմանադրության միջոցով կստանա իրավական ամրագրում և կապահովի վերջիններիս ներդաշնակությունը: Այս կապակցությամբ ուսանելի է ԱՄՆ-ի և ԳԴՀ-ի փորձը, որոնց սահմանադրությունները մշակվեցին և ընդունվեցին ազգի մտավոր ընտրանու կողմից:

Դրա հետ մեկտեղ, քննարկվող հիմնախնդիրը բոլորովին այլ լուծում ստացավ Հայաստանի անկախացման առաջին տարիներին:

Հայտնի է, որ փաստացի գործող օրենսդրական համակարգի առկայության պայմաններում Սահմանադրությունը չի կարող հանդիսանալ որպես իրավական համակարգ ներմուծվող համալրում, եթե անգամ այն որակավորվում է որպես Հիմնական օրենք: Ավելի շուտ պետք է լինի հակառակը՝ օրենսդրական համակարգը պետք է մշակվի առկա գործող Սահմանադրության հիման վրա՝ ձևավորելով սահմանադ-

ռաիրավական կարգավորման համակարգ: Հակառակ դեպքում, սահմանադրական կարգավորման առարկա հանդիսացող գործընթացների և ընդհանուր օրենսդրության շրջանակներում կարգավորվող իրավահարաբերությունների միաձուլման հետևանքով կարող է ծագել համակարգային հակամարտություն: Այս պարագայում երկրի հիմնական օրենքի առկայությունը կամ բացակայությունը դառնում է ոչ էական, իսկ սահմանադրական նորմերը ձեռք են բերում դեկլարատիվ և պայմանական բնույթ: Նման իրավիճակ ստեղծվեց Հայաստանի Հանրապետությունում անկախացումից հետո, երբ նոր պետականության և հասարակության մոդելին համապատասխան՝ Սահմանադրության կերտմանը ձեռնամուխ լինելու փոխարեն ՀՀ Գերագույն խորհուրդը 25.09.1991 թ. ընդունեց սահմանադրական օրենք՝«Անկախ պետականության հիմնադրույթների մասին», որի 16-րդ հոդվածի համաձայն՝ մինչև ՀՀ նոր Սահմանադրության ընդունումը գործող Սահմանադրությունն ու օրենքները գործում են այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին և «Հայաստանի անկախության մասին» Հռչակագրի հիման վրա ընդունված օրենսդրական ակտերին: Այսինքն՝ երկրում փաստացի ձևավորվեց իրավիճակ, երբ խորհրդարանի մակարդակով ընդունվեց «միջանկյալ սահմանադրություն», որը չվերացրեց նախկին Խորհրդային Հայաստանի գործող Սահմանադրության գործողությունը (որն ամրագրում էր սոցիալիստական տիպի պետություն և հասարակություն), սակայն դրա բարձրագույն իրավաբանական ուժը ստորադասեց հետագայում ընդունվելիք օրենսդրական ակտերին՝ Սահմանադրությունը

վերածելով ամորֆ ենթաօրենսդրական ակտի: Մինչդեռ երկրի գործող Սահմանադրությունը չի կարող նախատեսել իր վերացումը կամ իր կարգավիճակի (բարձրագույն իրավաբանական ուժ) փոփոխությունը: Արդյունքում երկրում ստեղծվեց մի իրավիճակ, երբ մինչև 1995 թ. հուլիս ամիսը Հայաստանի Հանրապետությունում սոցիալիստական մոդելի գործող սահմանադրության առկայության պայմաններում ընդունվեցին ազատ շուկայական տնտեսական համակարգին հատուկ օրենքներ, հետո, որպես գործող օրենսդրական համակարգի համալրում՝ հանրաքվեով ընդունվեց նոր Սահամանադրությունը: Խնդիրն այն է, որ սոցիալիստական հասարակարգից և սոցիալիստական տիպի պետությունից լիովին հրաժարվելու պարագայում հրատապ անհրաժեշտություն էր ազգի մտավոր էլիտայի կողմից մշակել որակապես նոր պետության և հասարակության մոդել և այն լեգիտիմացնել նոր Սահմանադրությամբ: Դրա հիման վրա արդեն հնարավոր կլիներ գիտական և տրամաբանական հիմնավորման որակական չափանիշներով ձևավորել հասարակական համալիր բոլոր գործընթացների կարգավորումն ու ներդաշնակությունն ապահովող իրավական համակարգ: Հակառակ դեպքում սահմանադրական կարգավորման և օրենսդրական կարգավորման համակարգերի միաձուլման արդյունքում երկրի Սահմանադրությունը ունակ չի լինում կանխելու և լուծելու հատկապես համապետական ընտրությունների արդյունքում հասարակության և իշխանության միջև ծագող հակամարտությունները:

Կան դեպքեր, երբ համակարգային հակամարտության

բնույթը պայմանավորված է լինում զանգվածային բարեփոխումների սահմանադրական լեգիտիմության ապահովման հիմնարար խնդրով, որը ենթադրում է սահմանադրական փոփոխությունների իրականացում: Արդյունքում ստեղծվում է «հեղափոխական իրադրություն», որի դեպքում գործընթացների լեգիտիմությունն ընդհանրապես որոշվում է ոչ թե Սահմանադրության և իրավական նորմերի տրամաբանությամբ, այլ «բարեփոխումներ» «մշակող-հայրերի» տրամաբանությամբ, որը, որպես կանոն, ունի սուբյեկտիվ բնույթ և ունի ֆունկցիոնալ առաքելություն՝ սպասարկելու ընթացիկ իրավիճակային կառավարման համակարգը: Որպես օրինակ, կարելի է բերել Եգիպտոսում իրականացված հեղափոխությունից անմիջապես հետո 2011 թ. մարտի 19-ի սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն: Հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո բարձրագույն ռազմական խորհրդի կողմից ձևավորված հատուկ հանձնաժողովի կողմից մշակված սահմանադրական փոփոխությունների նախագիծը դրվեց հանրաքվեի, որը նախատեսում էր 9 հոդվածների փոփոխություն, որոնք առավելապես վերաբերում էին Եգիպտոսի Նախագահի պաշտոնում առաջադրվելու ցենզի մեղմացմանը, պաշտոնավարման ժամկետի կրճատմանն ու վերընտրվելու սահմանփակմանը, արտակարգ իրավիճակ սահմանելու կարգին և այլն: Սահմա-նադրական փոփոխություններն ուժի մեջ մտան 2011 թ. մարտի 23-ին, որոնք ունեին ժամանակավոր բնույթ, քանի որ մինչև 2011 թ. վերջը թարմացված Սահմանադրությանը համապատասխան պետք է անցկացվեին նախագահական և խորհրդարանական ընտ-

րություններ, որից հետո նորընտիր խորհրդարանը պետք է 100 պատգամավորների կազմով ձևավորեր հանձնաժողով նոր Սահմանադրության նախագիծը մշակելու համար: Մինչդեռ Եգիպտոսում սկսում էր ծայր առնել նոր հակամարտություն՝ հասարակության և իշխանության միջև, քանզի հեղափոխության արդյունքում տիրելով երկրի ողջ իշխանությանը՝ բարձրագույն ռազմանական խորհուրդը կազմակերպված խորհրդարանական ընտրություններից հետո ամենևին չէր շտապում Եգիպտոսում անցկացնել նախագահական նոր ընտրություններ, առավել ևս ձեռնամուխ լինել նոր սահմանադրության մշակմանը: Նշված իրադարձությունների զարգացման սահմանված ընթացքն արդեն իսկ վկայում է սահմանադրական փոփոխությունների գործընթացի անտրամաբանական և ոչ լեգիտիմ լինելը: Բացի այդ, եգիպտական հասարակությունն ամենևին աչքի չի ընկնում քաղաքացիական հասարակության կայացած ինստիտուտներով, մտածելակերպով և ինքնագիտակցության բարձր մակարդակով: Ավելին, եգիպտական հեղափոխության արդյունքում հասարակության մոտ ձևավորված վարքագծային դրսևորումներն ունեն առավելապես ոգևորվածության և հոգեկան-հուզական, այլ ոչ թե գիտակցական բնույթ, որի պարագայում հազիվ թե սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն կամ առաջիկայում կազմակերպվելիք նախագահական ընտրությունները հավակնեին լինելու լեգիտիմ:

Երկիր մոլորակի տարբեր հատվածներում տեղի ունեցող գործընթացներում հակամարտությունների և ճգնաժամերի խորացմանը նպաստում են նաև համաշխարհային մակար-

դակի քաղաքական գործիչների կամայական գնահատականները ընթացող իրադարձությունների կապակցությամբ: Ինչպես օրինակ՝ Եվրամիության արտաքին քաղաքականության և անվտանգության գերագույն ներկայացուցիչ Քեթրին Էշտոնի հայտարարությունը. «Եգիպտոսում հիմա եկել է կառավարությունը փոխելու ժամանակը»: Կամ Ֆրանսիայի նախկին Նախագահ Նիկոլյա Սարկոզիի «խորհուրդը» Լիբիայի առաջնորդ Քադաֆիին՝ վերջինիս հեռանալու կապակցությամբ: Նույնաբովանդակ հայտարարությամբ հանդես եկավ նաև ԱՄՆ նախկին Նախագահ Բարաք Օբաման, որը նշեց. «Քադաֆին պետք է ընդունի, որ իր կառավարումը մոտեցել է վերջնակետին և մեկընդմիշտ վայր դնի իր լիազորութ-յունները» , կամ ներկայիս Նախագահ Դոնալդ Թրամփի պահանջը Վենեսուելայի լեգիտիմ Նախագահի հեռանալու կապակցությամբ: Օգտվելով այն հանգամանքից, որ տեղի ունեցող հակամարտությունները ամբողջությամբ գտնվում են սահմանադրահիրավական կարգավորման ոլորտից դուրս, նշված քաղաքական գործիչները գործընթացներին տալիս են ցանկացած կամայական և սուբյեկտիվ գնահատական, որից միանգամայն ակնհայտ է դառնում, որ դրանք զուրկ են սահմանադրահիրավական հիմնավորումից, բնականաբար և՝ ոչ լեգիտիմ, և ըստ էության, միտված են լինում հակամարտությունների ոչ թե կարգավորմանը, այլ խորացմանը՝ հետապնդելով նեղ անձնական կամ ներպետական շահեր:

Նշված հակամարտություններն ակնհայտորեն ունեն համակարգային բնույթ, ավելին, դրանք հանդես են գալիս որպես իրավական կարգավորման հետագա համակարգաս-

տեղծմանն անհրաժշտության հիմնարար հանգամանք:

Գործնական մակարդակում հետաքրքրություն ունի ընթացիկ ճգնաժամային աշխարհաքաղաքական գործընթացների վերլուծությունը վերոնշյալ համակարգային հակամարտությունների պատճառահետևանքային ծագումնաբանության տեսանկյունից:

Այդ առնչությամբ անհրաժեշտ է դիտարկել իրավական կարգավորման համակարգի ունակությունը, որպես հիմնական օբյեկտի, որի վրա արտացոլվում են իրավաձևավորման և նորմ-կանոնների հիմնական սկզբունքները, ինչպես նաև տեղի ունեցող գործընթացները օրինականության շրջանակներում պահելու ընթացակարգային (օպերատիվ, դատահիրավական պրակտիկան) գործիքային համակարգը:

Այս հանգամանքով բացատրվում է տարանցվող եռանկյունում իրավական կարգավորման շեշտադրումը որպես անկյունաքարային հանգամանք: Վերոնշյալ համակարգային հակամարտությունների քննարկման հիման վրա հնարավոր է դառնում տեղի ունեցող հակամարտությունները դասակարգել արդեն գործնական մակարդակում, մասնավորապես Մերձավոր արևելքի, Հյուսիսային աֆրիկայի իրադարձությունների և գործընթացների քննարկման համատեքստում:

Ա) **Հակամարտությունները հավասարակշռված հասարակության վարքագծի դեպքում:** Որպես կանոն, հասարակական համալիր գործընթացների իրավական կարգավորման հավասարակշռված համակարգը գործում է միայն իրական իրավական պետության և փաստացի քաղաքացիական հասարակության առկայության պայմաններում, այսինքն՝

հասարակական բոլոր հարաբերությունները կարգավորվում են ժողովրդի կամքի հիման վրա ընդունված Սահմանադրությամբ և դրան համապատասխան՝ նորմատիվ իրավական ակտերով: Բացի այդ, իշխանությունների բաժանման հավասարակշռված համակարգում գործում են կայացած և լիարժեք գործող պետական ինֆրակառույցներ: Այս պայմաններում հստակորեն գործում են սահմանադրաիրավական կարգավորման և իրավակարգի ապահովման համակարգերը: Հասարակությունն աչքի է ընկնում քաղաքացիական իրազեկության և քաղաքացիական ինքնագիտակցության բարձր մակարդակով, իսկ բնակչության վարքային դրսևորումները ինքնակարգավորվում են սահմանադրաիրավական նորմերի շրջանակներում: Նշված պայմաններում պետաիշխանական ինստիտուտներից քաղաքացիական բնակչության լեգիտիմ պահանջը մեկն է՝ սահմանադրական մակարդակում ապահովել իր քաղաքացիական իրավունքները:

Քաղաքացիական բնակչության մեջ դժգոհությունն առաջանում է, երբ չի կատարվում վերը նշված նրա պահանջը: Դժգոհության լեգիտիմ պահանջը բխում է պետության կողմից իր հիմնարար պարտականությունները չկատարելուց: Այդ պարտականություններն են՝

ա) տեսնել և հասկանալ հասարակության դժգոհության ծագումնաբանությունն ու բնույթը,

բ) իրավական նորմերով նկարագրել դրա ծագման և դրսևորման յուրաքանչյուր կոնկրետ դեպքը,

գ) տալ այդ դժգոհությանը իրավական գնահատական և որակում,

դ) գործի դնել հակամարտության կարգավորման առկա իրավական և գործնական մեխանիզմները, որոնք կբացառեն դժգոհության կանխմանն ուղղված գործող իրավական նորմերից ինչպես հասարակության, այնպես էլ պետության վարքագծի ցանկացած շեղում:

Այստեղ տարանցվող եռանկյունու հակամարտությունը դրսևորվում է դժգոհության միջոցով և այդ դժգոհության առարկան սահմանադրական իրավունքների ապահովման ձևաչափով համապատասխան պետական ատյաններին հասցնելու ընթացակարգային կանոնակարգման մեխանիզմներով: Այս պարագայում պետական իշխանության մեջ անհրաժեշտություն է առաջանում օպերատիվ կերպով լուծելու դժգոհությունը և կանխարգելելու դրա վերածումը բողոքի ձևին:

Որպես կանոն, հասարակության մեջ բողոքի ծագման բնույթը և դրսևորման ձևը ուղղակիորեն կախված են լինում այնպիսի հանգամանքներից, ինչպիսիք են սոցիալ-կենցաղային ինֆրակառույցների առկայությունը, պետական իշխանության ինստիտուտների գործառույթների հավասարակշռվածությունը, ինչպես նաև բնակչության քաղաքացիական իրազեկության ձևավորվածության աստիճանը՝ իր հետադարձ կապի մեխանիզմներով, քաղաքացիական հասարակության մտածելակերպի ձևավորվածությունը, որոնք կոչված են ապահովելու քաղաքացիների և իրավաբանական անձանց սահմանադրաիրավական պաշտպանվածությունը: Հավասարակշռված քաղաքացիական հասարակությունը իշխանական ինստիտուտներին իր դժգոհությունը ներկայացնում է

գիտակցական մակարդակով՝ տրամաբանական փաստարկված հիմնավորմամբ, ինչը չի կարող անտեսվել և շրջանցվել իշխանական ինստիտուտների կողմից: Փորձը ցույց է տալիս, որ նման պարագայում հավասարակշռված գործառույթներ ունեցող իշխանությունները սահմանադրաիրավական կարգավորման շրջանակներում կարողանում են գտնել խնդրի լեգիտիմ լուծումներ՝ կանխելով քաղաքացիական կոնտինգենտի վերափոխումը բողոքավոր կոնտինգենտի: Ասվածի հետևությունն այն է, որ հասարակական համալիր գործընթացի հավասարակշռության և պետական իշխանության կայունության ամենակարևորագույն նախապայմաններից մեկը պետք է լինի նվազագույն պայմանները բավարարող գրագետ քաղաքացիական հասարակություն:

Բ) Հակամարտության գործոններն ու ծագումնաբանությունը: Ե՞րբ է դժգոհող հասա-րակությունը վերածվում բողոքավոր կոնտինգենտի: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ սահմանադրաիրավական կարգավորման անհավասարակշռված համակարգի արդյունքում բացակայում է իրավական համակարգի հիերարխիայի ամբողջական և փոխադարձ կապվածությունը, իշխանությունների բաժանման անհավասարակշռված համակարգում ձևավորված չեն լինում և լիարժեք չեն գործում պետական իշխանության ինստիտուտները, առկա է լինում քաղաքացիական իրազեկության և քաղաքացիական ինքնագիտակցության անբավարար կամ ցածր մակարդակ, քաղաքացիական հասարակության չձևավորված մտածելակերպ: Արդյունքում հասարակության դժգոհություն-բողոքի առաջացումը հիմնվում է առավելապես

անվստահության վրա, որը ինքնին ունի հոգեհուզական բնույթ, քան անհամաձայնության, որը տրամաբանական հիմնավորմամբ պետք է հենվի պահանջի գիտակցական ձևակերպման վրա: Մինչդեռ պետություն-հասարակություն փոխհարաբերություններում սահմանադրաիրավական կարգավորման համակարգը կոչված է կարգավորելու անհամաձայնության դրսևորումը, ճնշելու պրովոկացիոն դժգոհությունն ընդհանրապես և կանխելու սահմանադրաիրավական կարգավորման համակարգի նկատմամբ ձևավորված անվստահությունը, որը, որպես կանոն, զուրկ է լինում տրամաբանական հիմնավորումից և փաստարկումից: Առաջացած իրավիճակում ինչպես իշխանության (որը պարտավոր է ապահովել սահմանադրական կարգը), այնպես էլ բնակչության գործողությունները բովանդակային առումով դառնում են ոչ լեգիտիմ: Արդյունքում հակամարտության կողմերից յուրաքանչյուրը ձգտում է «սեփականաշնորհել» երկրի Սահմանադրությունը, որպես իր ոչ լեգիտիմ գործողությունների իրավական ամրագրում: Ստեղծվում է իրավիճակ, երբ հասարակության բողոքավոր կոնտինգենտի վարքագծային դրսևորումները ձեռք են բերում զանգվածային անկարգությունների բնույթ և «հիմնավորվում», որպես Սահմանադրությամբ ամրագրված ժողովրդի կամահայտնության իրավունքի իրացում: Իսկ բողոքավոր կոնտինգենտի ագրեսիվ վարքագծի կանխումն ու վերջիններիս նկատմամբ քրեական հետապնդումները իշխանական ինստիտուտները «հիմնավորում» են որպես Սահմանադրությամբ իրենց վրա դրված սահմանադրական կարգի պահպանման պարտականության կատա-

ռում: Ակնհայտ է, որ այս պարագայում իշխանության մոտ դա ավելի լավ է ստացվում, քանի որ վերջինս տիրապետում է վարչական ռեսուրսներին և հարկադրանքի միջոցներին: Արդյունքում բախվում են երկու«լեգիտիմները», ինչը հանգեցնում է անկառավարելի համակարգային հակամարտության: Ուստի, բողոքի ինքնաբերաբար դրսևորումը կարող է առաջացնել հակամարտություն

ա) բնակչության տարբեր սոցիալական խմբերի միջև,

բ) իշխանության կառույցների միջև,

գ) բնակչության և իշխանության միջև:

Բողոքի ծագումնաբանությունը, որպես իրավաբանական կատեգորիա, և դրա դրսևորման իրավական բնույթը մեր կողմից դիտարկվում է որպես հասարակության մեջ խրոնիկ դժգոհության առկայության արդյունք՝ դրա վերացման սահմանադրաիրավական կարգավորման համակարգի մշտական անկարողությամբ: Արդյունքում ձևավորվում է հասարակության մեջ բողոքավոր կոնտինգենտը: Դժգոհությունը բողոքի վերածվելու դեպքում վերջինիս (բողոքի) պահանջի իրավական հիմքն արդեն էապես տարբերվում է նախորդից նրանով, որ

ա) Փաստարկվում է, որ դժգոհության առարկայի հետ կապված առկա է անլուծելիություն,

բ) որ գործող սահմանադրաիրավական կարգավորման համակարգը վստահություն չի ներշնչում, որի արդյունքում ծայր են առնում անհամաձայնությունը և առարկությունները կարգավորման վերաբերյալ:

Տվյալ պարագայում ո՞րն է խնդրի լուծումը: Ակնհայտ է,

որ բնակչության անվստահության դրսևորումը, որն ունի հոգեկան-հուզական բնույթ, հնարավոր չէ նկարագրել սահմանադրաիրավական նորմերով և կարգավորել իրավական ընթացակարգերով, թեև այն երբեմն ունենում է նաև օբյեկտիվ հիմքեր: Բնականաբար, իշխանությունը չպետք է անտեսի քաղաքացիական հասարակության ինստիտուտների ձևավորված չլինելու հանգամանքը և ապավինի դրանց ինքնաձևավորմանը: Ընդհակառակը, նա պետք է ձեռնամուխ լինի հասարակության ինքնագիտակցության բարձրացմանը և քաղաքացիական հասարակության մտածելակերպի ձևավորմանը, ինչը կբացառի հասարակության դժգոհության պրովոկացիոն հոգեհուզական դրսևորումների հավանականությունը և կփոխարինի այն տրամաբանական ձևաչափով անհամաձայնություն դրսևորելու տարբերակով: Նշված անհամաձայնության դրսևորման յուրաքանչյուր կոնկրետ դեպքն ու չափանիշները պետք է նկարագրվեն սահմանադրա-իրավական նորմերով, ինչը իշխանությանը հնարավորություն կտա հակամարտությանը տալ իրավական որակում և գտնելու խնդրի լեգիտիմ լուծումներ:

Մինչդեռ Սահմանադրությունը շատ երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, նախատեսում է բողոք-անհամաձայնության միջոցները միայն դատական իշխանության, այսինքն՝ հետևանքային մակարդակով, երբ քաղաքացին ընդամենը բողոքարկում է դատարանի ակտը վերադաս ատյան: Մինչդեռ դատական իշխանությունն իր ակտերն ընդունում է գործող իրավական համակարգի շրջանակներում և դրա վրա հենվելով: Այս կապակցությամբ Իտա-

լիայի Սահմանադրությունը որոշակի առումով տալիս է հիմնախնդրին մասնակի լուծումներ, ամրագրելով ժողովրդի բոլոր-անհամաձայնության իրավունքը ոչ միայն հետևանքային, այլև պատճառական մակարդակում՝ նրան վերապահելով ժողովրդական վետոյի իրավունք: Այսպես, Իտալիայի Սահմանադրության 75-րդ հոդվածն ամրագրում է, որ 500 000 ընտրողի կամ հինգ մարզային խորհուրդների պահանջով օրենքի կամ օրենքի ուժ ունեցող իրավական ակտի ամբողջական կամ մասնակի վերացման համար նշանակվում է հանրաքվե : Ժողովրդական վետոյի իրավունքը չի տարածվում այն օրենքների վրա, որոնք վերաբերում են հարկերին և բյուջեին, համաներմանն ու ներմանը, ինչպես նաև միջազգային պայմանագրերի վավերացմանը հավանություն տալուն: Պետք է նշել, որ Իտալիայի հասարակությունը դեռ չի հասել քաղաքացիական հասարակության զարգացման գագաթնակետին, ուստի սահմանադրական վերոնշյալ ինստիտուտն այնքան էլ լայն կիրառում չի ստացել այդ երկրում: Խնդրին որոշ լուծումներ տալու հարցում մեր երկրում էապես կարող է մեծանալ սահմանադրական դատարանի դերը, եթե վերանայվեն քաղաքացիների՝ սահմանադրական դատարան դիմելու հիմքերը:

Ժողովրդական հասարակության մեջ հակամարտությունները կանխելու և թույլ չտալու համար Սահմանադրությունն իր որակական հատկանիշներով պետք է լինի այնպիսին, որպեսզի հասարակության մեջ վարքագծային ցանկացած դրսևորում դուրս չլինի սահմանադրական կարգավորման տիրույթից: Այդ առումով, կարծում ենք, ժողովրդավարական ցանկացած երկրի Սահմանադրություն պետք է չափանիշային որոշակի համակարգով նախատեսի ժողովրդի դժգոհության իրավունքը, ինչը վերջինիս ներհատուկ բնական վիճակ է: Որպես կանոն ժողովուրդն իր դժգոհությունն արտահայտում է հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցակցնելու միջոցով: Մինչդեռ օրենսդրական կարգավորումներով, այդ միջոցառումները դիտարկվում են լոկ որպես կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի իրականացման միջոց: Բնականաբար, առանց դժգոհության պատճառների իրավական ամրագրման, հանրահավաքներում, երթերում, ցույցերում հասարակության դժգոհության ցանկացած դրսևորում, որը շեղվում է խոսքի ազատության իրավունքի շրջանակներից, իշխանությունների կողմից գնահատվում է որպես օրենսդրության խախտում՝ համապատասխան հետևանքներով: Արդյունքում էլ ավելի է խորանում հասարակության և իշխանությունների միջև առաջացած անջրպետը:

Ժողովրդավարական հասարակությունում առկա վտանգավոր միտում է նաև իշխանությունների կողմից հասարակության տարբեր սոցիալական շերտերին «յուրայինների և օտարների», «սևերի և սպիտակների», «հեղափոխականների և հակահեղափոխականների» բաժանելը, ինչը կարծես թե ներկայում իրողություն է դարձել Հայաստանի Հանրապետությունում այսպես կոչված «թավշյա հեղափոխությունից» հետո: Անհրաժեշտ է գիտակցել այն բացարձակ ճշմարտությունը, որ պետականության կայացման և հասարաության բարեկեցության ապահովման ամենաառաջնային նախապայմանը ներդաշնակ հասարակություն ունենալն է:

Հասարակության ցածր իրավագիտակցության մակարդակը ցանկացած իշխանության համար նպաստավոր պայմաններ է ստեղծում երկիրը պոպուլիստական դատարկ լոզունգներով կառավարելու համար, ինչը սակայն երկար կյանք ունենալ չի կարող, քանզի բնակչության կենսամակարդակի շարունակական անկումը վերջում առաջացնում է սոցիալական պայթյուն: Այն երկրներում, որոնց հասարակությունները աչքի չեն ընկնում քաղաքացիական իրազեկության և հասարակական ինքնագիտակցության բարձր մակարդակով, ծագած հակամարտությունը տեղի է տալիս քաղաքական խաբկանքներին, որոնց արդյունքում ընտրությունների ժամանակ հասարակությունն սկսում է ձայների վաճառքը, կայծակնային արագությամբ ծնվում են նոր քաղաքական կուսակցություններ կամ երբեմն՝ նաև քաղաքական աղանդներ, որոնք իրենց առաքելությունն իրականացնում են հասարակության մեջ բարեգործական ակցիաներ կատարելով, բնակչության լայն շերտերի սոցիալ-կենցաղային և առողջության պահպանման խնդիրները հոգալով, գործող վարչակարգը փնովելով, «արդարություն» և «պայծառ ապագա» խոստանալով, որի արդյունքում հասարակության լայն զանգվածները սկսում են հետևել կամ վերը նշված կամ էլ պատմության գիրկն անցած և վաղուց ի վեր հասարակության կողմից մերժված քաղաքական ուժերին:

Այդ երևույթը ձեռք է բերում ցիկլիկ բնույթ, օրինակ երբ 1996 թ.-ին ժողովուրդը մերժեց Հայոց համազգային շարժում կուսակցությանն ու նրա առաջնորդին, իսկ 2008 թ.-ին ի պաշտպանություն այդ նույն քաղաքական ուժի և նրա առաջ-

նորդի, տեղի ունեցան մարտի մեկի ողբերգական դեպքերը: Ժողովուրդը, որպես իրավական համակարգի լեգիտիմությունը որոշող առաջին ատյան, պետք է ունենա քաղաքացիական իրազեկության բավարար մակարդակ, որպեսզի գիտակցական մակարդակով կարողանա իրեն ինքնանույնականացնել որպես լեգիտիմության բարձրագույն սուբյեկտի և որպես այդպիսին՝ ապահովել իր ապաքաղաքականացված լինելու կարգավիճակը:

Բողոքի դրսևորման իրավական համարժեքության կտրվածքով վերջինիս նորմատիվ նկարագրման և սահմանադրաիրավական կարգավորման չափանիշների բացակայության արդյունքում հասարակության և իշխանության ինստիտուտների միջև ձևավորվում է առաջին ատյանի կարգավիճակի հակամարտություն, որը որոշում է բողոքով ուղեկցվող ամբողջ իրավական համալիրի լեգիտիմությունը ընթացիկ ժամանակահատվածում: Այստեղ կողմերից յուրաքանչյուրը ձգտում է ամեն գնով ցույց տալ իր առաջին ատյան լինելու կարգավիճակը՝ հասարակությունը, որպես իշխանության բացառիկ աղբյուր, կրող և պետության իրավունքի համակարգի (հանրաքվեով ընդունված Սահմանադրության) հեղինակ, իսկ իշխանությունը՝ որպես երկրի սահմանադրական կարգի պաշտպան և պատասխանատու: Արդյունքում երկու կողմերի վարքագիծը սկսում է ունենալ ագրեսիվ դրսևորումներ, որի անկառավարելիության հետևանքով առաջանում է քաղաքացիական անհնազանդություն և տեղի է ունենում սոցիալական պայթյուն:

Կայուն ժամանակահատվածում իշխանությունը պարտա-

վոր է և պետք է զբաղվի քաղաքացիական հասարակության ինստիտուտների ձևավորմամբ և ամրապնդմամբ, այլ ոչ թե հռչակի՝«մենք համարվում ենք քաղաքացիական հասարակություն» կարգախոսը որպես կայացած փաստ: Մասնավորապես, հակամարտության անկառավարելիությունը հենց նշված հանգամանքի արդյունք է, որն առաջանում է բնակչության սահմանադրական իրավունքների և ազատությունների սպասարկման ոչ համարժեք կառուցակարգերի և քաղաքացիական կոնտինգենտի ընթացիկ կարգավիճակի ոչ իրավաչափ գնահատականի արդյունքում: Հետևանքը լինում է այն, որ իշխանությունը շեղվում է քաղաքացիական հասարակության ինստիտուտների կառուցման գործառույթի իրականացումից և իր կարողությունը հիմնականում վատնում է հասարակության վարքագծի բողոքավոր և ագրեսիվ դրսևորումների զսպման վրա, որոնք ծագում և զարգանում են անկանխատեսելիորեն, քանի որ վերջիններս չեն դիտարկվում որպես առանձին կատեգորիայի քննարկման առարկա, ինչպես գիտական վերլուծության, այնպես էլ սահմանադրաիրավական կարգավորման համարժեք կառուցակարգերի տեսանկյունից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ակնհայտ է, որ հասարակական կոնֆլիկտներն անխուսափելի են: Դրանք երբեմն կարող են սրվել ու վերածվել վտանգների: Ուրեմն ի՞նչ, հետ կանգնել ժողովրդավարությունից և ժողովրդաիշխանությունից: Անշուշտ ոչ:

Կոնֆլիկտներից խուսափելու ու առաջացած շատ հիմնախնդիրների, երկընտրանքների լուծումը ոչ թե վերադարձն է ինքնակալական, միահեծանական, ամբողջատիրական կառավարմանը, այլ ժողովրդավարության անընդհատ խորացումը, ընդլայնումը, խթանումը: «Ժողովրդավարություն, թե՞ դիկտատուրա» երկընտրանքը պետք է լուծել հօգուտ ժողովրդավարության: Ընտրությունը հիմնված է ոչ թե «ժողովրդավարության առաքինությունների վրա, որոնք կարող են լինել նաև կասկածելի, այլ դիկտատուրայի թերությունների վրա, որոնք կասկածելի չեն»:

Կոնֆլիկտների տարծումը չպետք վախեցնի ու հանգեցնի ժողովրդավարությունից հրաժարման կամ պահպանողական ժողովրդավարության, այսինքն՝ ժողովրդավարական ընթացակարգերի ու ժողովրդաիշխանության ձևերի չափավորման, նորմավորման: Դրանք կարող են տալ միայն կոնֆլիկտների սառեցման ժամանակավոր արդյունք:

Իրավահեղինակություն ու լեգիտիմություն ունեցող հանրային իշխանությունը պետք է գնա ժողովրդաիշխանության ու դրա ձևերի, որպես կոնֆլիկտների կանխման, հաղթահարման ու կանխման միջոցների, անընդհատ ու

անշեղ ընդլայնման, դրանք իրական դարձնելու ուղով: Կոնֆլիկտների լուծման արդյունավետ ու ճկուն ինստիտուցիոնալ իրավական ձևերի ու ընթացակարգերի լավարկված շրջանակ գումարած ժողովրդավարական, հայրենասիրական, բարոյահիրավական, կառուցողական, հանդուրժողական համահասարակական սոցիալիզացիա, կրթություն, դաստիարակություն: Ժողովրդավարական կառուցակարգեր, ընթացակարգեր, իրավական լծակներ ու ժողովրդավարական հանդուժողական ոգի: Կառույց գումարած ոգի, երկուսը միասին կտան այն ակնկալիքը, որ մենք ունենք ժողովրդավարությունից, կբերեն հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, կապահովեն սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը:

DEMOCRACY AND PREVENTION OF CONFLICTS IN SOCIETY

CONCLUSION

It is obvious that social conflicts are inevitable. Sometimes they can aggravate and transform into serious danger. Does it mean that we have to refuse democracy and power of the people? Of course, no.

In order to avoid conflicts and accompanying issues it is necessary to deepen and extend democracy on a permanent basis, instead of turn to autocracy, dictatorship, totalitarianism. The dilemma “Democracy or dictatorship” should be solved in favor of democracy. The choice must be based not “on the virtues of democracy which may be somehow suspicious, but on the defects of dictatorship which are obvious”.

The expansion of conflicts should not frighten and lead to refusal of democracy or to conservative democracy which implies limits of democratic procedures and the forms of the power of the people. It may only temporarily prevent the conflicts.

Authoritative and legitimate public power should contribute to permanent and strict expansion and realization of the power of the people and its forms as the means of prevention of conflicts. Optimal list of effective and flexible institutional-legal forms and procedures for prevention of conflicts together with democratic,

patriotic, moral and legal, constructive and tolerant education and socialization. Democratic mechanism, procedures, legal tools and tolerant spirit. Appropriate structure along with spirit will ensure democracy in the society, lead to prosperity, as well as guarantee freedom, common well-being and civil solidarity of generations.

Չափսը՝ 60x84 1/16:
Ծավալը՝ 13 տպ. մամուլ:
Հանձնվել է տպագրության 11.11.2019
Քանակը՝ 200 օրինակ

ISBN 978-9939-838-90-8
9 789939 838908